AZG NEW SHABAT.QXD 13/06/2019 22:05 Page 1


# Ազգ
Azg

14 ՀՈՒՆԻՍ 2019 ՈՒՐԲԱԹ 23(5570)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Առաջնագծում հակառակորդի անօդաչու թռչող սարքերի ակտիվություն է նկատվում



Արցախի ՊԲ մամլո ծառայությունը հայտնում է, որ վերջին օրերին, զուգահեռ հակառակորդի ռազմաքաղաքական ղեկավարության ռազմատենչ հայտարարություններին, առաջնագծում անօդաչու թռչող սարքերի աննախադեպ ակտիվություն է նկատվում:

Արցախի ՊԲ-ն հակառակորդին հորդորում է զերծ նման իրավիճակը սրելու գործելաոճից, այլապես` հետագա զարգացումների ողջ պատասխանատվությունն ընկնելու է Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության վրա:

Ըստ այլ աղբյուրներից «**Ազգ**»-ին հասած տեղեկությունների, հակառակորդը կրկին Իսրայելից անօդաչու սարքերի նոր խմբաքանակներ է ձեռք բերել: Բացի այդ, ադրբեջանցիներին օտար մասնագետների օգնությամբ վերջին շրջանում հաջողվում է ստեղծել իսրայելական թռչող սարքերի կրկնօրինակները:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հայաստանն իր ողջ գրավչությամբ

Ընթերցողներից ոմանք կարող են տարակուսանքի մատնվել այս վերնագրից. անորոշությունների, հակասությունների, ատելության մթնոլորտում ի՞նչ գրավչություն: Բայց նրանք, ովքեր նախորդ շաբաթավերջին Դիլիջանում էին, Կենտրոնական դրամատան ուսումնահետազոտական համալիրում, կհամաձայնվեն ինձ հետ, որ դա երկօրյա յուրօրինակ ինքնամեկուսացում էր հայաստանցի մասնակիցներիս համար, գուցե փախուստ` տագնապախռով մեր առօրյայից, մի պահ` կրկին ներգրավվելու համաշխարհային ու համամարդկային կարեւորագույն խնդիրների ոլորտ` իրեն ու իրողությունները դիտելու այլ բարձունքներից եւ այլ խորությամբ:

Անշուշտ դրան նպաստում էր մթնոլորտը` դիլիջանյան մեղմ եւ զով եղանակը, շենշող արեւը, կապտականաչավուն, անտառախիտ լեռները` գագաթներին դեռ համեցող ձյան պատառիկներով: Դրան ավելացրեք համալիրի հոյակապ հարմարությունները, կազմակերպիչների հոգատար վերաբերմունքը մասնակիցների նկատմամբ, համաշխարհային հեղինակություն վայելող օտարազգի մի շարք նախկին պետական գործիչների, քաղաքագետների, իրավունքի գծով մասնագետների, վերլուծաբանների, կապի, էներգետիկայի եւ շրջակա միջավայրի ոլորտներում հայտնի հեղինակությունների, մի խոսքով` մտածող մի ողջ բազմության ներկայությունը:

Այո, մի մթնոլորտ` որը, ըստ օտարազգի մասնակիցներից մի քանիսի, հիշեցնում էր ֆրանսիական Մոնբլանի փեշերին` Շամոնի բնակավայրում, ավելի քան 25 տարի անցկացվող միջազգային գագաթնաժողովները, որոնց կազմակերպիչը, The Monthly Barometer-ի հիմնադիր Թիերի Մալըրեն, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի հետեւողական ջանքերի ու կապերի շնորհիվ, հանդիսանում էր կազմակերպողը նաեւ դիլիջանյան հավաքի` Մտքերի հայկական գագաթնաժողովի, նյութական օժանդակությամբ ՀՀ Կենտրոնական դրամատան, ՀԲԸՄիության եւ Հայբիզնես բանկի: «Նոր գաղափար, նոր ընկեր եւ նոր նախագիծ» բնաբանի ներքո Թիերի Մալըրեն իր բացման խոսքում շեշտեց, որ Դիլիջանյան գագաթնաժողովը անհրաժեշտ է նաեւ Հայաստանի համար, նկատի ունենալով պատմական, քաղաքակրթական եւ տարածաշրջանում ազգերի ու երկրների միջեւ կամուրջ հանդիսանալու ուղղությամբ մեր երկրին վերապահված դերը:

Շատ խորհրդանշական էր նախագահ Արմեն Սարգսյանի բացման խոսքը, որը հիշեցնում էր Ջրհեղեղից հետո Նոր աշխարհի սկզբնավորումը Արարատի բարձունքներից, Նոյի առասպելական փրկարար տապանում հավաքված համախոհների միջոցով: Հայկական Նոյյան տապանը նոր սկիզբ է տալու խռովահույզ աշխարհին...

Ուշագրավ էր նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքում խտացված պատկերը մեր ժողովրդի մասին, որն իր պատմության անհրաժեշտ պահերին եթե զրկված էր ծովից, նավքից, ուժից ու բախտից, ապա այժմ, ինտելեկտի մեր դարում, հնարավորություն ունի կերտելու իր փառավոր վերածնունդը:

Գագաթնաժողովի բացմանը հյուրընկալի հանգամանքով խոսեց նաեւ մեր պետական հիմնարկներից ամենակայուն եւ ամենաարդյունավետ կառույցի` Կենտրոնական դրամատան նախագահ Արթուր Ջավադյանը, շեշտադրելով տնտեսագիտական մտքի ու գաղափարների զարգացման ու միջազգային համագործակցության ասպարեզում ուսումնահետազոտական այս կենտրոնի կարեւորությունը:

Այս սյունակի ծավալները հնարավորություն չեն տալիս անդրադառնալու գագաթնաժողովի ընթացքում արծարծված ուշագրավ ելույթներին ու մտքերին, որոնք գլխավորաբար վերաբերում էին աշխարհաքաղաքական նորօրյա զարգացումներին, բարձր տեխնոլոգիաների սրընթաց առաջխաղացմանը, արհեստական բանականությանը, արդյունաբերական 4-րդ հեղափոխության դրական ու բացասական կողմերին, կլիմայի փոփոխությանը, վերականգնվող էներգիայի նպատակահարմարությանը, ձեռնարկատիրության ոլորտում կատարվող նորամուծություններին, ներդրումային քաղաքականությանը, քաղաքակրթությունների երկխոսությանը եւ աշխարհի առաջ ծառացող նոր մարտահրավերներին: Միայն պետք է ասեմ, որ գաղափարների ու մտքերի բախումն ու փոխլրացումը, որը գլխավոր խնդիրն է նման համաժողովների, իսկապես ստացվեց: Արտահայտվողները իսկապես տիրապետում էին փաստերն ու երեւույթները իմաստավորելու, դրանց փիլիսոփայական բացատրությանը ձգտելու կարողության:

Քիչ չէին նաեւ շոյիչ խոսքերը, անշուշտ օտարազգիների կողմից, մեր երկրի ու ժողովրդի հասցեին, նրա պատմական հարուստ փորձառությանը, քաղաքակրթական ծանրակշիռ դերին, հատկապես Եվրասիական տարածքում կամուրջի դեր կատարելու նրան վերապահված անփոխարինելի առաքելությանը: Չմոռացվեց նաեւ, բնականաբար, դիլիջանյան բնությունը, որը բանախոսներից մեկի բնորոշմամբ ոչ թե նման է Շվեյցարիայի բնապատկերին, այլ Շվեյցարիա՛ն է նման Հայաստանին...

Գագաթնաժողովի փակման պահին, մինչ մտքումս շրջան էր անում հարցը` կհաջողվի՞ մեզ Հայաստանը գոնե պարբերաբար դարձնել համաշխարհային մտքի, մտածողության ու միասին մտածելու հավաքատեղիի, Երեւանից հնչեց ծանոթ լրագրողուհու շա՜տ սովորական, չափազանց հայավարի հարցը.

- Այդքան նախապատրաստություններ ու ծախսեր արժե՞ր անել, երբ Գագաթնաժողովից չի բխել ներդրումային որեւէ առաջարկ ու համաձայնագիր:

- Այո՛, լավ գործերը նա՛խ ծնվում են մտքում, վերածվում են գաղափարի ու ծրագրի, ապա` աշխատանքի,- եղավ պատասխանս:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Մայրենին ատելու հաջողված վերջաբան

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մի քանի անգամ նկատել էի, որ 4-րդ դասարանցի դուստրս դասերը պատրաստելիս առաջինն անգլերենն ու ռուսերենն է սովորում, հետո` մյուս առարկաները, ամենավերջում մեծ դժկամությամբ ձեռքն է վերցնում մայրենիի դասագիրքը: Աչքի պոչով նրան հետեւելիս ինձ համար պարզ էր դարձել, որ աղջիկս մանկական խանդավառությամբ է արտասանում ու պատմում հատկապես ռուսերեն դասերը: Ուրախ, գունեղ, տրամադրող, ուսուցանող այդ պատմություններով անգամ ես էի տարվում: 4-րդ դասարանում, ի դեպ, անգլերեն եւ ռուսերեն քերականությունը բավականին մատչելի է մատուցված, եթե բախտդ բերի, երեխադ լավ ուսուցչի ձեռք ընկնի, ուրեմն օտար լեզուների հիմքն ամուր կդրվի: Մայրենիի դեպքում... մայրենիի դեպքում չգիտես որտեղի՞ց սկսել` դասագրքերն անհաջող, իմաստից, գեղագիտությունից, գեղարվեստից զուրկ տեքստեր, ավելի ճիշտ` բառերի կույտ, որտեղ ոչ տրամաբանություն կա, ոչ իմաստային կապ, ոչ հերոսներ, ոչ գրական տեքստին հատուկ սկիզբ, կուլմինացիա ու վերջաբան: Ամեն ինչ` մակերեսային, ծանծաղ, մոտավորապես: Ռուսերենից ու անգլերենից 4-րդ դասարանում խոսքի մասեր, շարահյուսություն, հոլովներ ու ժամանակային ձեւեր են անցնում, մինչդեռ երեխան իր մայրենի լեզվով կազմած նախադասության մեջ չգիտե` ո՞րն է ենթական, ո՞րը` ստորոգյալը, որովհետեւ դրանք ծրագրում չկան:




⇨6

## Էրդողան- Հիտլերի դեմ

### *Իսրայելցի պատմաբանների վերջին ուսումնասիրությունը` նոր անժխտելի փաստերով*

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

«Իսրայելն այսօր» (israel heute) գերմանալեզու կայքը մայիսի 20- ի համարում, անդրադառնալով «Թուրքիայի մութ անցյալին ու ներկային», գրում է, որ հրեաները Էրդողանին համեմատում են Հիտլերի հետ, քանի որ նրա ղեկավարած Թուրքիան ոչ միայն Իսրայելին, այլեւ ողջ աշխարհին է սպառնում:

Ապրիլի վերջին իսրայելցի օրենսդիրները պահանջեցին, որ Թուրքիան ճանաչի այդ երկրի իրար հաջորդած 3 կառավարությունների իրականացրած Ցեղասպանությունը, հիշեցնում է լրատուն` ներկայացնելով, թե Իսրայելի Քնեսեթի երկրորդ խոշոր քաղաքական ուժի` ընդդիմադիր Կապույտ-սպիտակ դաշինքի համանախագահ **Յաիր Լապիդը** հայտարարել է, թե «ժամանակն է, որ Իսրայելը պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանությունը եւ Թուրքիայի ճնշման պատճառով չընկրկի»: «Մենք բարոյական եւ պատմական պատասխանատվություն ենք կրում Ցեղասպանությունը հիշատակելու եւ ասելու` այլեւս երբեք: Սա բոլոր ազգերին է վերաբերում», թվիթերում գրառել էր Լապիդն ավելի ուշ, նշում է կայքը եւ հավելում, թե Իսրայելը մինչ այս մերժել է պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը` խուսափելով թուրքական կառավարության զայրույթից: Թեպետ Քնեսեթի կրթության հանձնաժողովը 2016- ի օգոստոսին ճանաչել էր այն եւ հող նախապատրաստել, որ Իսրայելի կառավարությունը ճանաչի Հայոց ցեղասպանությունը, գրում է «Իսրայելն այսօր» կայքը: Առցանց լրատուն անդրադառնում է Էրդողանի ժխտողականությանը, Մակրոնի` ապրիլի 24- ը Ֆրանսիայում հիշատակի պետական օր հռչակելու խիզախմանը եւ Թուրքիայի նախագահի հակադարձմանը` «ազնիվ եղեք, մսյո Մակրոն, Ֆրանսիան գաղութատիրության շրջանում կոտորածներ է իրականացրել, 700 000 հայերին ուղղված ուղերձը Ձեզ չի փրկելու»:

Իսրայելցի հրեա երկու պատմաբաններ ծանրակշիռ, հակազդման տեղ չթողնող, փաստերով հարուստ այնպիսի հետազոտություն են ներկայացնում վերջերս լույս տեսած իրենց հատորում, որ անժխտելի է դարձնում Թուրքիայի` 30- ամյա արյունարբու արշավն իր տարածքում գոյություն ունեցող քրիստոնյա հանրության հանդեպ, որ գրեթե ամբողջովին բնաջնջվեց ու բնավեր եղավ, գրում է «Իսրայելն այսօր» կայքը:

⇨ 2



**Լինել սորոսական` նշանակում է լինել ապազգային, հակապետական եւ հակամարդկային**

էջ 10,11



**Գաղտնի օպերացիաների աշխարհում**

էջ 7

# Հայկական պետության ճգնաժամը, կամ ինչպես կառուցել ազգային պետություն

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

**պ.գ.թ.**

Ինչ-որ պարօրինակ զուգադիպությամբ կամ միգուցե որոշակի տրամաբանությամբ, չգիտեմ, Հայաստանը վերջին մի քանի տասնամյակում տասը տարին մեկ սկզբունքով կանգնում է ճգնաժամի առաջ: 1988թ. Ղարաբաղյան շարժումը, որը հանգեցրեց ազգային ազատագրական պայքարի ձեւավորման, այդ ճգնաժամի առաջին դրսեւորումն էր:

Այդ շրջանում առաջին անգամ փորձ արվեց հասկանալ, թե ով ենք մենք եւ ինչ ենք ուզում: Ու մինչ ազգի իրական նվիրյալները, նրա սերուցքը մարտնչում ու զոհվում էին Ադրբեջանի հետ ընթացող դաժանագույն պատերազմում, ՀՀ-ում որոշ մարդիկ իշխանություն էին բաժանում եւ հարստություն դիզում:

Տասը տարի անց, 1998թ.ից սկսած, ներիշխանական ճգնաժամի հանգուցալուծումը եղավ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը: Այդ անցումը տեղի ունեցավ համեմատաբար անցնցում եւ արդյունքը եղավ նախկին ՀՀՇ-ական վերնախավի հեռացումը ու նորերի մուտքը քաղաքական դաշտ:

Եւ սկսվեց հարստության վերաբաշխման մի նոր գործընթաց, որն արդեն ղեկավարում էին ՀՀԿ-ի առաջնորդները: Այդ ընթացքում գրանցված տնտեսական աճն ու կյանքի կենսամակարդակի որոշակի բարձրացումը այնուամենայնիվ չփոխեցին բնակչության վերաբերմունքը իշխանությունների հանդեպ, որը կարելի է կոչել մեկ բառով՝ անվստահություն:

2008թ. Լեւոն Տեր-Պետրոսյանի փորձը վերադառնալու իշխանության, հանգեցրեց գործող եւ նախկին իշխանական վերնախավերի բախման: Այդ բախման հետեւանքը, ցավոք սրտի, մարտի 1-ի հայտնի ողբերգությունն էր, տասնյակ զոհերով ու մեծաթիվ վիրավորներով:

Այդ դեպքերից արդեն տասը տարի անց՝ 2018թ. գարնանը, տեղի ունեցավ հայտնի, այսպես կոչված, «թավշյա հեղափոխությունը», որի արդյունքում իշխանությունից հեռացվեցին Սերժ Սարգսյանն իր ՀՀԿ-ական վերնախավով ու եկան նորերը: Նիկոլ Փաշինյանի շուրջ ձեւավորվող նոր քաղաքական ուժը առաջադրեց նոր վերնախավ, որն էլ այս պահին «վայելում» է միանձնյա իշխանության ողջ հմայքը:

Տասը տարին մեկ կրկնվող ներքաղաքական ճգնաժամերը եւ դրանց արդյունքում իշխանության եկած նոր քաղաքական էլիտաները ձեւավորվում են այն մարդկանց շուրջը, որոնք էլ այդ պահին զբաղեցնում են իշխանության թիվ մեկ պաշտոնը: Լեւոն Տեր-Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան եւ ապա Նիկոլ Փաշինյան, վերջին 30 տարիների ընթացքում այս մարդիկ էին թելադրում քաղաքական օրակարգ Հայաստանում՝ պայմանավորված միայն իրենց զբաղեցրած քաղաքական բարձր դիրքով, հետեւաբար նրանց շուրջ ձեւավորված մարդիկ էլ մաս են կազմում այն պետական վերնախավի, որը նրանց ներկայացնում է:

Սակայն հիմնական հարցը, որն առաջանում է ամեն անգամ, երբ Հայաստանում հերթական անձի շուրջ ձեւավորվում է հերթական վերնախավը, հետեւյալն է՝ ի՞նչ գաղափարական եւ ազգային արժեքներ են կրում այդ էլիտաները: Ինչպիսի՞ն է պետության զարգացման նրանց տեսլականը, արդյոք այդ ամենը ունե՞ն որեւէ ընդհանրություն Հայաստանի, նրա պատմության, նրա պատմական ժառանգության, ազգային ու կրոնական արժեքների հետ, թե՞ ոչ:

Վերը նշված շարադրանքը ցույց է տալիս, որ ՀՀ պետության ղեկավարների ազդեցությունը պայմանավորված է ոչ այնքան նրանց գաղափարական ու հասարակական ազդեցությամբ եւ այն արժեքներով, որ նրանք կրում են, այլ այն պաշտոնով, որ նրանք զբաղեցնում են: Այսինքն այդ անձինք, որպես կանոն, երբ կորցնում են իրենց իշխանությունը, կորցնում են նաեւ իրենց ազդեցությունը հանրության մեջ:

Նման իրավիճակը պայմանավորված է տվյալ անձանց կողմից իշխանության գալուց հետո հայկական պետականության կառուցման գործում տնտեսական, քաղաքական, անվտանգային կամ ասենք՝ արտաքին քաղաքական, եւ նմանատիպ այլ գործոնների կարեւորմամբ, բայց ո՛չ գաղափարական: Երբ 1990-ականներին Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է, կարծես թե բոլորը ընդվզեցին դրա դեմ, սակայն ոչ մեկը չփորձեց հասկանալ կամ այլընտրանք առաջարկել: Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ գաղափարական հենքի վրա պետք է կառուցվի Հայաստանը:

Օրինակ՝ ի՞նչ ասել է հայկական ազգային պետություն, այն ինչո՞վ է տարբերվում ասենք եվրոպական կամ այլ տիպի պետություններից, ի՞նչ արժեհամակարգ կարող է դրվել այդ պետության հիմքում, ի՞նչ դեր այս ամենում ունեն, օրինակ, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, հայկական ազգային ավանդույթները, ընտանեկան արժեքները, ազգային բանակը եւ այսպես շարունակ: Սրանք բարդ եւ միաժամանակ կարեւոր հարցեր են, որոնց պատասխանը պետք է տրվեր գործող իշխանությունների դիմաց ամեն անգամ, երբ նրանք գալիս են իշխանության:

Սակայն դրա փոխարեն անցած 30 տարիների ընթացքում իշխանության եկած անձինք իրենք իրենց դիտարկելով որպես պետություն, փորձում էին ու փորձում են իրենց շուրջ համախմբել ոչ թե գաղափարական, այլ միայն իրենց հավատարիմ անձանց: «Հավատարիմների» այդ ամբոխն էլ գործում էր ոչ թե ըստ պետության շահերի, այլ ըստ իրենց «շեֆի» ցանկության, եւ շատ դեպքերում էլ խորտակվող նավից փախչող առնետի նման դավաճանում էին իրենց տերերին առաջինը, երբ վերջինները կորցնում էին իշխանությունը:



Անցած 30 տարիների ընթացքում Հայաստանում այդպես էլ չձեւավորվեց գաղափարական քաղաքական վերնախավ, որի համար ազգային պետության կառուցումը դառնա գերնպատակ: Դրա փոխարեն «վերնախավերը», որոնք փոխարինում են մեկը մյուսին, ընդամենը ծառայում են այդ պահին իշխանությանը եկած անձին:

Նույն իրավիճակն է ՀՀ-ում նաեւ այսօր. վարչապետ Նիկոլ Փաշինյանի շուրջ հավաքված խումբը, որին դեռ դժվար է նույնիսկ վերնախավ կոչել, պետության զարգացման տեսլականից դեռեւս զուրկ մարդկանց խմբավորում է: Այս մարդիկ ունենալով բավականին մեծ իշխանություն՝ դեռ չեն կարողացել առաջարկել ազգային պետության կառուցման իրենց տեսլականը, դրա զարգացման գաղափարական ու գաղափարախոսական բաղադրիչները:

Վերջիններս պատկերացում չունեն անգամ, թե ինչ ասել է ազգային եւ առաջնորդվելով կեղծ արժեքներով՝ փորձում են առաջ մղել այսպես կոչված եվրոպական արժեքները, կամ դրանց հայկական տարբերակները, որոնք իրականում ոչ մի առնչություն ունեն «արժեք» կոչվող հասկացության հետ: Հայկական պետության կառուցման գաղափարական դատարկությունը մեկը մյուսի հետեւից իշխանության եկած վերնախավերը այդպես էլ ոչնչով չկարողացան լրացնել:

Հնագույն պատմություն, հզոր մշակույթ ու 1700-ամյա քրիստոնեական արժեքներ կրող ազգը այժմ, փաստորեն, ոչինչ չունի առաջարկելու աշխարհին: Մենք կառուցել ենք անդեմ պետություն, որը ոչ մի բանով է տարբերվում հետսոցիալիստական պետություններից թե՛ կառավարման իր համակարգով, թե՛ իր ստանդարտ արժեհամակարգով:

Հայկական զուտ ազգային պետություն կառուցելու մեր անընդունակությունը պատմական իր արմատներն ունի, որը արդեն այլ հոդվածի թեմա է:

# Աբգարի ծոռնուհին արժանին է մատուցում նրան

«**Ազգ**»ի մայիսի 17-ի համարում տեղեկացրել էինք, որ Ուոթերթաունի հայկական թանգարանում տեղի է ունեցել Յոկոհամայում (Ճապոնիա) բախտակիցներ դարձած երկու հայուհիների՝ դիվանագետ Դայանա Աղաբեկ Աբգարի (1859-1937) եւ նկարչուհի Պերճուհի Քաիլյանի (1914-2014) անցած ուղու մասին պատմող ցուցահանդեսի բացումը:

Այժմ «Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ Դայանա (Գայանե) Աբգարի ծոռնուհին՝ Միմի Մալայանը վավերագրական ֆիլմ է պատրաստել իր հեղինակավոր ազգականուհու մասին՝ հույս ունենալով իր ծառայությունների համար արժանին մատուցել նրան:

«The Stateless Diplomat: Diana Apcar's Life» (Պետականազուրկ դիվանագետը: Դայանա Աբգարի կյանքը) ֆիլմը հանդիսատեսին է ներկայացնում հավանաբար առաջին կին դիվանագետի անցած ուսանելի ճակատագիրը, օգտագործելով ճապոնական ոճի գծանկարներ՝ գրիչով ու թանաքով արված թվային դիզայներ Լու Կեյի


Great-Granddaughter Wants to Give Diana Apcar Her Due

By Alin K. Gregorian

see APCAR, page 14

կողմից: Միմիի խոստովանությամբ դժվար է եղել ամբողջական ներկայացնել նրա մարդասիրական կերպարը, բավականաչափ նյութերի բացակայության պատճառով: Բարեբախտաբար Աբգարը կանոնավոր նամակագրություն է պահպանել Ստանֆորդ համալսարանի հիմնադիր-նախագահ Դեյվիդ Սթար Ջորդանի հետ: Նամակները պահպանվել են Ստանֆորդի արխիվներում: Դրանցից բացի, որոշ փաստաթղթեր գտնվել են նաեւ Ամերիկյան կարմիր խաչի եւ ՄԱԿ-ի Ժնեւում գործող գրասենյակներում:

Ըստ **Ալին Գրիգորյանի** («Միրորի» խմբագիր) ֆիլմն սկսվում է նոր այրիացած Դայանի այն դրվագով, երբ մի կողմից ծնունդ է տալիս իր վեցերորդ զավակին, իսկ մյուս կողմից պարտատերերը կահույքն են տանում իր տնից: Այս ամենին գումարած նա պարտավոր էր վերականգնել իր ամուսնու անհաջող բիզնեսը, որպեսզի կարողանար ապահովել ընտանիքի գոյատեւումը: Հոգսերը բազմազան էին, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ նա չէր կարող անտարբեր մնալ Ադանայի ջարդերի հետեւանքով անտեր մնացած հայ ընտանիքների ճակատագրի նկատմամբ:

Ֆիլմում, բացի փաստաթղթերից ու նամակներից, կան հարցազրույցներ որոշ դիվանագետների եւ պատմաբանների հետ, ինչպես օրինակ Առլինգտոնի (Մասաչուսեթս) Հայկական մշակութային հիմնադրամից դոկտ. Արա Ղազարյանի, Ճապոնիայում Հայաստանի դեսպան Հրանդ Պողոսյանի եւ պրոֆ. Քիթ Ուոտենպոյի հետ: Ճապոնիայի Տոհոկու համալսարանում դասավանդող Մելինե Մեսրոպյանը մեծապես նպաստել է ֆիլմի պատրաստմանը: Մելինեն թեզ է պաշտպանել Աբգարի մասին եւ շուտով գիրք կհրատարակի ճապոներենով:

**Միմի Մալայանը** ծնվել է Սան Ֆրանցիսկոյում, բայց հոր աշխատանքի պատճառով (հայրը եղել է ՀԷԿ-եր նախագծող), հասակ է առել ճանապարհորդելով տարբեր երկրներում՝ Հոլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ասիական եւ հարավամերիկյան երկրներում: Հաճախել է Ջորջ Վաշինգտոն համալսարանը նախքան ամուսնանալը, հետո ապրել Չիկագոյում, Դետրոյթում, Ատլանտիկ Սիթիում եւ Ատլանտայում: 1983ից դարձյալ Սան Ֆրանցիսկոյում է ապրում: Մասնագիտությամբ ճարտարապետ է: 2012-ին որոշել է, որ լավագույն ձեւը Աբգարի մասին պատմելու վավերագրական ֆիլմ պատրաստելն է: Նրան այդ հարցում օգնել է ֆիլմարտադրիչ **Արթուր Մուրադյանը**:

Ֆիլմը, ըստ հոդվածագրի, անցյալ նոյեմբերին ցուցադրվել է Տորոնտոյի Ոռան կինոփառատոնի ընթացքում, ինչպես նաեւ այս տարվա ապրիլի 24-ին Սան Ֆրանցիսկոյի հանրային գրադարանում: Առաջիկա ցուցադրումը կայանալու է հուլիսի 21-ին Փենսիլվանիայի «Նյու Հոփ» կինոփառատոնի օրերին: Կանադայում կայացած ցուցադրմանը ֆիլմը երկու մրցանակի է արժանացել՝ մեկը հանդիսատեսի ընտրության եւ մյուսը՝ պատվարժան հիշատակման համար:

Հ.Շ.

# Իրանի ջրային տարածքում հարձակման են ենթարկվել նավթային երկու լցանավեր

**РИА Новости-ն, հղում անելով իրանական եւ արաբական լրատվամիջոցներին, հայտնում է, որ հարձակում է տեղի ունեցել նորվեգական դրոշով Front Altair եւ ճապոնական դրոշով Kokuka Courageous նավթային լցանավերի վրա:**

**Օմանի իշխանությունները հաստատել են, որ նավերի վրա հրդեհը բռնկվել է, երբ դրանք նավարկելիս են եղել Իրանի Իսլամական Հանրապետության ջրային տարածքում: Նավերի վրա գտնվող 44 հոգանոց անձնակազմը փրկվել է ԻԻՀ փրկարար ծառայությունների կողմից:**

AZG NEW SHABAT.QXD 13/06/2019 22:05 Page 4



# Պենտագոնը գրավոր վերջնագիր է ներկայացրել Թուրքիային

## *Թուրքական կողմը դուրս է մղվել ռազմական F-35 ինքնաթիռների համատեղ արտադրման ծրագրից*



ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ
Թուրքագետ

Թուրքիան բախվում է ներքին եւ արտաքին բազում խնդիրների: Դրանց մեջ առաջնայինը, սակայն, շարունակում են մնալ ռուսական S-400 հակաօդային պաշտպանական համակարգերը, որոնք նախ աննախադեպ սրել են Թուրքիայի հարաբերությունները ԱՄՆ-ի, ինչու չէ նաեւ ՆԱՏՕ-ի հետ, ապա եւ վատթարացրել տնտեսությունը:Կնշանակի Թուրքիայի առջեւ ծառացած ներքին եւ արտաքին խնդիրները փոխկապակցված են, բացասաբար են անդրադառնում միմյանց վրա:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների լարվածությունը երկրում խթանել է սղաճը, որը տնտեսագետների հաշվարկներով ընթացիկ տարվա վերջին կկազմի առնվազն 20 տոկոս: Թեեւ մասնակի կասեցվել է թուրքական լիրայի արժեզրկումը, սակայն՝ գանձարանի պահուստային ֆոնդի հաշվին, հետեւաբար կասեցումը ժամանակավոր բնույթ է կրում: Քանի որ պետությունը ֆինանսական շուկա է հանել միլիարդավոր դոլարներ, ուստիեւ պահուստային ֆոնդը 20 միլիարդից կրճատվել եւ հասել է 2 միլիարդ դոլարի: Անընդհատ կրճատվում են նաեւ երկրի տնտեսության ծավալները, այսինքն տնտեսությունը ոչ թե աճ է ապրում, այլ նահանջ, որն արդյունաբերության մեջ 2.7 տոկոս է կազմում: Այդ ընթացքում գործազուրկների թիվը, ըստ պաշտոնական տվյալների, հասնում է 8 միլիոնի:

Խիստ բացասական է ներմուծման նկատմամբ արտահանման հաշվեկշիռը: Ընթացիկ տարվա առաջին երեք ամիսներին 180 մլրդ. դոլարի պակասորդ էր տվել Թուրքիայի արտաքին առեւտուրը: Նման դեպքերում պակասորդը կոծկում են Միջազգային արժութային հիմնադրամից կամ Համաշխարհային բանկից ստացած վարկերով, սակայն ֆինանսական այս երկու կառույցներն էլ ԱՄՆ-ի ազդեցության տակ են: Ավելին, Թուրքիայի արտաքին պարտքը հասել է 445 մլրդ. դոլարի, որի մարման համար պետք է նախ տոկոսները վճարել:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների լարվածությունը ոչ միայն բացասական հետեւանքներ է թողնում թուրքական տնտեսության վրա, այլեւ լուրջ ներգործություն է ունենում Թուրքիայի միջազգային վարկանիշի, նրա տեղի, դերի եւ կշռի վրա տարածաշրջանում: Թուրքիայից նախապես երես էին թեքել Եգիպտոսն ու Լիբիան, հիմա արդեն երես են թեքում այնպիսի դաշնակիցներ, ինչպիսիք են Սաուդյան Արաբիան, Քաթարը եւ հատկապես Արաբական Միացյալ Էմիրությունները: Թուրք քաղաքական դիտորդները թշնամական են համարում իրենց երկրի նկատմամբ Էմիրությունների որդեգրած քաղաքականությունը:

Գալով ռուսական S-400 համակարգերին, դրանց գնման մասին համաձայնագիրը, ըստ մոսկովյան թերթերի, ստորագրվել էր դեռեւս 2017թ. սեպտեմբերի 12-ին Սանկտ-Պետերբուրգում: Թուրքական թերթերը, սակայն, վկայակոչելով նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանին, նշում են, որ պայմանագիրը 2017-ի դեկտեմբերի 29-ին ստորագրվեց Անկարայում: Ըստ երեւույթին Սանկտ-Պետերբուրգում ստորագրվել է համակարգերն արտադրող «Rostein» ընկերության հետ համաձայնագիրը, իսկ Անկարայում՝ միջպետականը:

Ընդ որում կողմերը հակասական տեղեկություններ են հայտնում համակարգերի քանակի եւ գնի մասին: Համաձայն թուրքական կողմի, Թուրքիան համաձայնագրով Ռուսաստանից գնելու էր երկու համակարգ, 2.5 մլրդ. դոլարի ընդհանուր արժողությամբ: Հակառակ դրան, ռուսական ռազմարդյունաբերության կոմպլեքսի «Rostein» ընկերության տնօրեն **Սերգեյ Չեմեզովը** նշում է Թուրքիային նույն գնով 4 համակարգեր տրամադրելու մասին: Ի դեպ Չեմեզովին հաստատել էր Թուրքիայի պաշտպանության այդ ժամանակվա նախարար **Նուրեթթին Ջանիքլին:** Նշվում է նաեւ կանխավճար վճարելու մասին, սակայն տեղեկատվության բացակայության պատճառով հնարավոր չէ ճշտել, թե որքան:

Ռուսական S-400 համակարգերին առնչվող տեղեկատվությունն այնքան է աղոտված, որ միջազգային մամուլում լուրեր էին տարածվում, թե ռուսական կողմը, կատարելով պատվերը, S-400 համակարգերն արդեն հանձնել է Թուրքիային: Սակայն հունիսի 11-ին հանդես գալով հայտարարությամբ, Կրեմլի քաղաքականության գծով խորհրդական **Յուրի Ուշակովը** ասաց, որ համակարգերը Թուրքիային կհանձնվեն ս.թ. հուլիսին: Պետք է ասել, որ դրանք համաձայնագրով հանձնվելու էին 2020 թվին: Ո՞րն է այս շտապողականության պատճառը: Ամենայն հավանականությամբ ԱՄՆ-ի օրեցօր սաստկացող հակազդեցությունն ու դրան դիմակայելու Թուրքիայի անզորությունը:

Դա հատկապես ակնառու դարձավ մայիսի 22-ին, երբ Վաշինգտոնը ռուսական համակարգերից հրաժարվելու եւ ստորագրված համաձայնագիրը չեղյալ հայտարարելու համար 2 շաբաթ ժամանակ տվեց Թուրքիային: Քանի որ «**Ազգ**»-ը մայիսի 24-ին առանձին հոդվածով անդրադարձել էր այս խնդրին, ուստի հարկ չեմ համարում մանրամասնել: Պարզապես տեղեկացնեմ Վաշինգտոնի նախազգուշացմանը Թուրքիայի ղեկավարների հակասական, ոչ համարժեք արձագանքի մասին:

Նախագահ **Էրդողանն** ի պատասխան ասել էր, որ իրենք չեն պատրաստվում հետքայլ կատարել S-400 համակարգերի հարցում, ունեն կնքված պայմանագիր ռուսական կողմի հետ, ի վերջո այդ համակարգերը, որպես զենք, պաշտպանողական են, ոչ թե հարձակողական, հիշեցնելով ամերիկացիներին, որ իրենք 10 տարի շարունակ հրաժարվել են «Patriot» համակարգեր տրամադրել Թուրքիային: Հիրավի Թուրքիան այդ համակարգերը փորձել էր ձեռք բերել դեռեւս նախագահ Բարաք Օբամայի օրոք: 2015-ին փորձեց նաեւ չինական արտադրության համակարգեր ձեռք բերել, բայց նույնպես ապարդյուն: ԱՄՆ-ի միջամտության պատճառով այդ ծրագիրը խափանվել էր:

Ի տարբերություն Էրդողանի, սակայն, արտգործնախարար **Մեւլութ Չավուշօղլուն**, ընդառաջելով Վաշինգտոնի պահանջները, չբացառեց «Patriot» համակարգեր գնելու հավանականությունը, կրկնելով թուրք-ամերիկյան աշխատանքային խումբ ստեղծելու եւ S-400 համակարգերի հարցն այնտեղ քննարկելու առաջարկը: Ամերիկյան կողմի խիստ վերապահությունը առաջարկին՝ թուրքական կողմին ստիպեց այլ տարբերակներ որոնել: Շոշափվեց նաեւ S-400 համակարգերը գնելու, բայց Ադրբեջանին, Քաթարին կամ այլ երկրների փոխանցելու հավանականությունը:

Փոխանցման տարբերակին միջազգային մամուլի հետ ապրիլի 19-ի համարում արձագանքեց նաեւ թուրքական «Էվրենսելը», «A TV-ին», իսկ ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության խոսափող «Halk TV-ն» S-400-ների տեղակայմանը ենթակա երկրների թվում նշեց Վրաստանի անունը: Քննարկվեց նաեւ ռուսական համակարգերը գնելու, բայց չգործարկելու կիպրոսյան տարբերակը: Ինչպես հայտնի է, Կիպրոսի Հանրապետությունը Ռուսաստանից գնել էր S-300 համակարգեր, սակայն ԱՄՆ-ի ճնշման տակ դրանք 2007-ի դեկտեմբերին ստիպված հանձնել էր Հունաստանին: Թեեւ դրանք տեղակայվել էին Կրետե կղզում, սակայն չէին գործարկվել, այլ պարզապես հունական իշխանությունները թույլատրել էին ամերիկացի մասնագետներին, որ ուսումնասիրեն:

Ըստ երեւույթին ամերիկացիները կարիք չունեն ուսումնասիրելու S-400 համակարգերը, ոչ էլ նրանց բավարարել է թուրքական կողմի երկիմաստ արձագանքը մայիսի 22-ի նախազգուշացմանը, որ հունիսի 6-ին ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Պատրիկ Շանահանը վերջնագրի բնույթ կրող նամակով դիմեց Թուրքիայի պաշտպանության նախարար, բանակի գեներալ Հուլուսի Աքարին: Foreign Policy հանդեսում հրապարակված այդ նամակը, որին արձագանքել են արեւմտյան, ռուսական եւ թուրքական թերթերը, կատարյալ շփոթմունքի մեջ է գցել դրա բովանդակությունը հանրությունից թաքցնող Թուրքիայի ղեկավարներին:

Ինչո՞ւ: Հարցին պատասխանում է նամակը, միանշանակ ընդգծելով՝ «Եթե Թուրքիան մինչեւ հուլիսի 31-ը չհրաժարվի ռուսական S-400 համակարգերից, ապա 2019 թ. հուլիսի 31-ին սառեցվելու է Թուրքիայի մասնակցությունը ռազմական F-35 ինքնաթիռների արտադրման համատեղ նախագծին, կասեցվելու են ներկայումս Արիզոնայի «Luke» ռազմաօդային եւ Ֆլորիդայի «Eglin» ռազմաօդային բազաներում ուսումնամարզական պատրաստվածություն ստացող 42 թուրք օդաչուի պարապմունքները, ԱՄՆ-ը լքելու պահանջով, արգելվելու է թուրք զինծառայողների մուտքը համատեղ նախագծին առնչվող բոլոր ռազմաբազաներ, կասեցվելու է 20 թուրք օդաչուի հունիսին, իսկ 14-ինը հուլիս-նոյեմբեր ամիսներին ծրագրված այցը Միացյալ Նահանգներ, չեղյալ է հայտարարվելու F-35 ինքնաթիռների համատեղ նախագծի առնչությամբ հունիսի 12-ին գումարվող խորհրդակցությանը մասնակցելու համար Թուրքիային ուղարկված հրավերը եւ Թուրքիան դուրս է մղվելու նշված նախագծից»:

ԱՄՆ պաշտպանության փոխնախարարի նամակում ամերիկյան կողմը միաժամանակ պատասխան էր պահանջել թուրքական կողմից, բայց ապարդյուն: Արդեն 6 օր է անցել, բայց Թուրքիայի պաշտպանության նախարարը հապաղում է պատասխանել Պենտագոնի նամակին: Կնշանակի թուրքական իշխանությունները դեռեւս չեն կարողանում կողմնորոշվել: Հակառակ թուրքականի, ամերիկյան կողմը կողմնորոշվել է, որ առանց սպասելու մինչեւ հուլիսի 31-ը, հունիսի 11-ին արդեն դադարեցրել է թուրք օդաչուների պարապմունքները: Ինչ վերաբերում է թուրքական կողմի պատվիրած 100 ռազմական F-35 ինքնաթիռների արտադրությանը, ապա դա կասեցրել էր դեռեւս ս.թ. ապրիլին, եւ Թուրքիան միանշանակ դուրս էր մղվել այդ ինքնաթիռների արտադրման ծրագրից, որին 9 երկիր էր մասնակցում, եւ հանվել է «առեւտրական արտոնյալ գործընկերների» ամերիկյան ցուցակից:

Այս ամենի մասին հունիսի 11-ին նշել է «Ռոյթերը», իսկ BBC-ն տեղեկացրել է՝ «Եթե Թուրքիան նույնիսկ հրաժարվի ռուսական S-400 համակարգերից, արդեն շատ ուշ է»: Հիմա արդեն սպասվում է, որ Թորքիայի նկատմամբ կիրառվի 2007-ին Կոնգրեսի ընդունած «ԱՄՆ-ի թշնամիների դեմ պատժամիջոցներով պայքարելու» օրենքը: Միաժամանակ քննարկվում է Թուրքիայում տեղակայված ամերիկյան ռազմաբազաները այլ երկրներ տեղափոխելու հարցը, այդ առումով հիշատակվում է Հունաստանը, եւ դրա հետ քննարկվում է նաեւ ՆԱՏՕ-ի կազմից Թուրքիայի վտարման հավանականությունը:

Թուրքիան կկարողանա՞ դիմակայել այս փորձություններին, թե՞ տեղի կտա ԱՄՆ-ի պահանջներին, ցույց կտա ժամանակը: Բայց որ երկու տարբերակն էլ սոսկալի է լինելու նրա համար, ակնհայտ է:

## Թուրքիայի արտգործնախարարության արձագանքը Հոլանդիայի խորհրդարանի որոշմանը

**Հունիսի 11-ին Հոլանդիայի խորհրդարանը, հիմք ընդունելով Ռեջեփ Թայյիփ Էրդողանի ապրիլի 24-ի նամակը Կ.Պոլսո պատրիարքի փոխանորդ Արամ Աթեշյանին, Թուրքիայի նախագահին զրպարտության, իսկ թուրքական պետությանը ժխտողականության մեջ մեղադրելու որոշում էր ընդունել, դիմելով միաժամանակ երկրի կառավարությանը, որ միջոցներ ձեռնարկի այդ ուղղությամբ: Քանի որ հայկական լրատվամիջոցները անդրադարձել են խորհրդարանի որոշմանը, ուստի ավելորդ ենք համարում մանրամասնել դա: Պարզապես ասենք, որ « Ազգը» ապրիլի 26-ի համարում թարգմանաբար հրապարակել էր Էրդողանի նամակի ամբողջական տեքստը՝ վերցրած հենց Թուրքիայի Հանրապետության նախագահի կայքէջից: Այս համարում էլ հրապարակում ենք Թուրքիայի արտգործնախարարության արձագանքը Հոլանդիայի խորհրդարանի որոշմանը, որը հրապարակել է արտգործնախարարության կայքէջը:**

Հ.Չ.

**12 հունիսի, 2019.- Հաղորդագրություն Հոլանդիայի Ներկայացուցիչների պալատում մեր երկրի դեմ ընդունված որոշումների մասին**

**Խստագույնս մերժում ենք երեկ (հունիսի 11-ին ) Հոլանդիայի Ներկայացուցիչների պալատում հակաթուրքական շրջանակների նախաձեռնությամբ ընդունված որոշումներն ու որոշումներում մեր երկրին հասցեագրվող անհիմն ու զրպարտություններով լի պնդումները:**

**Թող հայտնի լինի, որ անպատասխան չեն մնալու այս կարգի բանականությունից զուրկ, անբովանդակ եւ անլուրջ ջանքերն ու այս ջանքերին տուրք տվողները : Ամբոխավարության միջոցով ընտրողներին սիրաշահելու քաղաքական այս ըմբռնումը վնաս է պատճառելու նրանց, ովքեր անձնատուր են լինում համանման անմիտ եւ անտրամաբանական մոտեցումներին:**

**Շատ ավելի դիպուկ կլիներ, եթե Հոլանդիայի Ներկայացուցիչների պալատը, փոխանակ կանխակալությամբ սնվող հակաթուրքականությամբ զբաղվելու , զբաղվեր եվրոպական արժեքներին սպառնացող անհամեմատ լուրջ խնդիրներով: Այդ առումով օգտակար է համարվում առաջնահերթ նշանակությամբ պայքարն ընդդեմ հետզհետե աճող աջ ծայրահեղականության, օտարների նկատմամբ թշնամանքի, ռասիզմի, իսլամաֆոբիայի, ինչպես նաեւ միջոցների ձեռնարկումը մզկիթների վրա հարձակման դրսեւորումների դեմ:**

**Ակնհայտ է, որ ներկա փուլում, երբ ջանքեր են գործադրվում Հոլանդիայի հետ մեր հարաբերությունների կարգավորման համար եւ փոխադարձ քայլերը դրական արդյունք են տալիս, Խորհրդարանի հիմնազուրկ , չարամիտ եւ նպատակն անհասկանալի նախաձեռնությունները չեն կարող նպաստել երկկողմ հարաբերությունների զարգացմանը:**

AZG NEW SHABAT.QXD 13/06/2019 22:05 Page 5



# Խոսք երախտիքի եւ ընկերական սիրո

## *(Պատմաբան Սուրեն Սարգսյանի ծննդյան 65-ամյակի առիթով)*



Լրանում է բնության կողմից արգասաբեր եւ ուրույն գրչով օժտված պատմաբանի՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Թարխանի Սարգսյանի ծննդյան 65-ամյակը: Մի անձնավորության, որի մեջ յուրօրինակորեն համադրված են մարդու, գիտնական-հայագետի եւ հումանիստի բոլոր անհրաժեշտ հատկանիշները միաժամանակ: Սովորաբար շատ քիչ է հնչեցվում այն տեսակետը, որ լավ գիտնական լինելը ամենեւին չի պահանջում նաեւ լավ մարդու հատկանիշներով օժտվածություն: Թերեւս կան մարդիկ, որոնք համապատասխանում են այս չափանիշներին, բայց անձամբ մեզ համար ընկալելի չի լինի իսկական հայագետի կամ պատմաբանի լիարժեք կերպար, եթե այն զերծ է մարդկային այդ բարձրագույն արժանիքներից: Եվ սա այն հասկանալի պատճառով, որ ինչպես է հնարավոր գրել սեփական ժողովրդի (եւ ոչ միայն սեփական) պատմությունը, գրել անկողմնակալ եւ անաչառ՝ հեռու լինելով հայրենասիրական շնչից, կարոտի զգացողությունից, կորուստների ցավի ամոքման եւ պատմական ճիշտ հետեւությունների արդյունքում անհրաժեշտ սպեղանին գտնելու ջանքերից:

Ապրել նախ եւ առաջ նշանակում է պայքարել, որի ընթացքում էլ ավելի են հստակվում մարդու աշխարհընկալումները, ավելի հասուն են դառնում պատմության, արդի քաղաքականության, կենցաղի, ընկերության մասին պատկերացումները: Պայքարը միշտ երիտասարդ է պահում հոգին: Սուրեն Սարգսյանի պայքարը ընթացել է տարբեր ճակատներում՝ գիտության, քաղաքականության, մարդկայնության եւ այլն: Այսօր նա վստահորեն եւ հպարտությամբ կարող է հայտարարել, որ բոլոր այդ ճակատներում էլ հիմնականում հաղթական դիրքերի վրա է, որն ինքնին նշանակում է, որ արդեն ունի որպես ուսուցիչ լայն լսարաններում գրեթե միշտ հայտնվելու բնությունից շահած բացառիկ իրավունք:

Փորձենք ասվածը հիմնավորել՝ անդրադառնալով նրա գործունեությանը տարբեր հարթակների վրա:

**Առաջին**. Պատմաբան. հայագետի հարթակ: Այս հարթակում նախանձելի է նրա վաստակը: Նա թերեւս առաջինն էր, որ լայն ուսումնասիրությունների հենքով կյանքի կոչեց ՀՍՌԿ կուսակցության ամբողջական պատմությունը (Տես Ս. Սարգսյան, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921թթ.), Ե., Տիգրան Մեծ տպարան, 2009թ., 242 էջ), որով լուսաբանեց այդ կուսակցության անցած ողջ ուղին, մատնանշեց նրա դիրքորոշումները հայոց պատմության ամենակարեւոր ժամանակահատվածներից մեկում, երբ հայությունն ապրեց երիտթուրքերի հետ համագործակցության կործանարար բերկրանքը՝ Մեծ Եղեռնը, նորանկախ պետականության մինչեւ այդ չնախատեսված պարգեւը եւ այլն: Եվ սրանով նա ոչ միայն պատմագիտական շրջանակներին, այլեւ լայն հանրությանը ցույց տվեց, որ այդ շրջանի մեր քաղաքական իրականության մեջ մենք այլ ուժեր էլ ենք ունեցել եւ որը նշանակում է, որ հայ քաղաքական մտքի ընթացքը մենք պետք է վերլուծենք ու գնահատենք առհասարակ հայ բոլոր քաղաքական կազմակերպությունների գործունեության համադրված եւ ամբողջական գնահատման արդյունքում միայն:

Այս նույն նպատակին ծառայելու անհրաժեշտությամբ ծնվեցին նաեւ նրա հետագա ուսումնասիրությունները եւ մենագրությունները (1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը Արմենական գործիչների գնահատմամբ, Երեւան,ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ., 120 էջ, «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., «Անտարես» հրատարակչություն, 2014, 680 էջ, Периодеческая издание «Армения» у истоков национально-освободительной идеологии, Институт Социальных Наук, Москва, 2015, 201 стр., «Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեությունը եւ «Արմենիա» պարբերականը», Ե., 2018, Արեւելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019, 210 էջ եւ այլն):

Ս. Սարգսյանի պատմագիտական ժառանգությանը կարելի է մոտենալ երկու տեսանկյունից՝ ազգային-ազատագրական պայքարի պատմության եւ հայ քաղաքական կուսակցությունների (մասնավորապես Արմենական եւ Հնչակյան) կողմից պատմության ընկալումների: Ընդ որում՝ դա արել է հընթացս այդ կուսակցությունների ձեւավորման նախադրյալների, գործունեության ծրագրային դրույթների եւ արդյունքների վերլուծության: Միաժամանակ նկատենք, որ իրատես պատմաբանի հայ մամուլի՝ պատմության մեջ խորանալու եւ դրանց եղած նյութերը գնահատելու նրա օժտվածությունը բացառիկ է: Այս երկու թեմատիկաները Ս. Սարգսյանի դեպքում իրար լրացնում են: Այն, ինչ հմուտ պատմաբանը լիարժեքորեն չի դրսեւորում պատմագիտական բնույթի աշխատություններում, անում է մամուլի պատմությանն առնչվող իր վերլուծություններում, որոնց գլուխգործոցը, կարծում ենք, նրա «Արմենիա պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում», (Երեւան, 2014, 680 էջ) հիմնարար մենագրությունն է: Իսկ հայ ազատագրական պայքարի ընթացքի արմենական գործիչների գնահատմանը նվիրված (տեղյակ եմ, որ նմանաբնույթ մի գործ էլ՝ հնչակյաններին վերաբերվող կհրատարակի առաջիկայում) աշխատությունը կարեւորվում է այն տեսանկյունից, որ առաջին անգամ բացահայտում է այդ գործիչներից յուրաքանչյուրի ըմբռնումները, տեսական ընդհանրացումները այդ պայքարի արդյունավետության եւ ավելի իրական ճանապարհ ընտրելու տեսանկյուններից: Անշուշտ, այս մենագրությունների ստվերի ներքո չեն մնում նաեւ նրա 100-ից ավելի հոդվածները, բազում գիտաժողովներում ունեցած ելույթները, որոնցից շատերին, ի դեպ, հենց ինքն էլ նախագահել է: Ընդ որում խոսքը վերաբերում է թե՛ Հայաստանում եւ թե՛ արտերկրում տեղի ունեցած գիտաժողովներին:

Ասվածների վկայություն եւ վաստակի յուրակերպ գնահատանք էր այն իրողությունը, որ վերջերս արժանավոր գիտնականն ընտրվել է Գիտության պետական կոմիտեի թեմատիկ ֆինանսավորման եւ գիտության բնագավառում մրցանակներ շնորհող հանրապետական մրցութային հանձնաժողովի նախագահ: Ինչպես նաեւ այն, որ ՀՀ ԿԳՆ-ի հայտարարած «Ամենաարդյունավետ գիտնական» մրցույթում Ս. Սարգսյանը ճանաչվեց տարվա լավագույն հայագետ եւ արժանացավ պետության կողմից խրախուսական մրցանակի:

Նկատենք նաեւ, որ միայն 2018 թվականին Ս. Սարգսյանը ՀՀ-ում եւ Լիբանանում զեկուցումներով է հանդես եկել 5 գիտաժողովներում, որոնցից 3-ը՝ միջազգային ու համահայկական, եւ կարդացել պատմագիտության բնագավառում բոլորովին չուսումնասիրված հիմնախնդիրների վերաբերյալ զեկուցումներ, ընդ որում դրանցից 3-ը պլենար նիստերում:

**Երկրորդ**. Քաղաքագետի հարթակ: Այս հարթակում Ս. Սարգսյանն իրեն դրսեւորել է թե՛ որպես օժտված քաղաքագետ եւ թե՛ որպես կուսակցական գործիչ: Շատ հայ քաղաքագետների լիարժեքորեն կայացած չլինելու պատճառը հայ քաղաքական մտքին անհաղորդ լինելու հանգամանքն է եւ միջազգային քաղաքագիտական տարբեր տեսություններով տարված լինելը: Այնինչ հայ քաղաքագետը պետք է ծանոթ լինի ոչ միայն հայոց պատմությանը, հայ քաղաքական մտքի ողջ ընթացքին, տարանջատի պետական քաղաքական միտքը քաղաքական մտքից առհասարակ, որովհետեւ մի բան է, երբ պետություն ես արարում, մի այլ բան՝ երբ այդ արարման նրբություններին անհաղորդ՝ քեզ ես տեսնում դրանում: Ս. Սարգսյանը որպես քաղաքական կուսակցություն ներկայացնող անձնավորություն ինքնանպատակ իշխանատենչություն չի դրսեւորել եւ միշտ գործել է պետականության դիրքերից ելնելով, քանի որ, կարծում ենք, որ ճիշտ է ըմբռնել մեր նախորդ պետականությունների կորստյան գլխավոր պատճառները: Եվ այս ըմբռնումներն ունեցող մարդը չի կարող չլինել բարձրորակ դասախոս, չի կարող չվայելել ուսանողության ջերմ սերն ու համակրանքը:

**Երրորդ**. Մարդասիրության հարթակ: Սովորաբար այս հարթակում արհեստական դրսեւորվել հնարավոր չի, քանի որ մարդասիրությունը բնատուր կամ աստվածատուր շնորհ է: Եթե մարդասեր չես, չես կարող հայասեր լինել եւ հակառակը: Ս. Սարգսյանը ե՛ւ մարդասեր է եւ հայասեր, որը, ինչպես նշեցինք նաեւ հայագետ լինելու, ակադեմիական պատմաբան լինելու ամենակարեւոր պայմաններից մեկն է: Նա սիրում է իր ընտանիքը, սիրում է իր ժողովրդին, սիրում է իր հայրենիքը եւ պետությունը:

Ուրեմն, ինչ է մնում մեզ՝ մաղթել նրան հետեւյալը՝ ապրիր երկար, սիրելի ընկեր, շարունակիր կյանքդ այն ուղիով, որը վաղուց ընտրել ես կամոք բնության եւ որից արդեն եթե ուզենաս էլ, չես կարող շեղվել: Եվ ապրիր նորանոր գիտական անակնկալներ պարգեւելով մեզ եւ մեր պատմությամբ հետաքրքրվողներին, նպաստելով մեր ժողովրդի ուղղորդմանը դեպի այն քաղաքական ճանապարհը, որը միայն կհանգեցնի ուժեղ պետականության, խաղաղության եւ բարեկեցության:

**ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**
**07.06.2019**

# Ընկերոջ՝ Սուրեն Սարգսյանի 65-ամյակի առթիվ

Հունիսի 10-ին լրացավ Ռամկավար Ազատական կուսակցության հնագույն անդամներից, բազմավաստակ գիտնական, մանկավարժ, Հայաստանի առաջատար համալսարանների դասախոս Սուրեն Սարգսյանի 65-ամյակը: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Սարգսյանը մեծ վաստակ ունի Հայաստանում ժամանակակից պատմագիտության զարգացման գործում: Դեռ ուսանողական տարիներից տարվելով հայ ավանդական կուսակցությունների պատմությամբ, Սուրեն Սարգսյանն իր գիտական ողջ ներուժը նվիրեց հայկական ազգային ազատագրական պայքարի պատմության եւ դրանում հայկական քաղաքական ավանդական ուժերի դերակատարության ուսումնասիրությանը:

Պրոֆեսոր Սարգսյանը հեղինակ է մեծ թվով գիտական աշխատանքների, հոդվածների ու մենագրությունների, որոնցից կարելի է առանձնացնել՝ «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.)», «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում», «1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը Արմենական գործիչների գնահատմամբ», «Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեությունը եւ «Արմենիա» պարբերականը» եւ այլ մենագրություններ, որոնք կարեւոր դեր են ունեցել հայ ժողովրդի քաղաքական պատմության ուսումնասիրության գործում: Սուրեն Սարգսյանը հեղինակ է նաեւ մի քանի տասնյակի գիտական հոդվածների եւ աշխատանքների: Արդեն երկար ժամանակ նա ծավալում է դասախոսա-մանկավարժական գործունեություն ԵՊՀ-ում, Գլաձորի եւ Հյուսիսային համալսարաններում:

Անգնահատելի է Սուրեն Սարգսյանի կուսակցական-քաղաքական գործունեությունը: 1990թ.ին անդամագրվելով Ռամկավար Ազատական կուսակցությանը նա ակտիվ գործունեություն է ծավալել Հայաստանում կուսակցության կայացման ու հզորացման գործում: 1990թ. մասնակցել է ՌԱԿ Արմենական ակումբի հիմնադրմանը, 1991թ. մաս է կազմել ՀՌԱԿ-ի հիմնադիր խորհրդին, կազմելով կուսակցության քաղաքական ու կանոնադրական առաջին փաստաթղթերը՝ ՀՀ-ում այդ կառույցի գրանցման համար:

2009թ.ին, ՌԱԿ-ի համար ամենածանր շրջանում վերադարձել է ակտիվ կուսակցական-քաղաքական գործունեությանը՝ նպաստելով կուսակցության վերածննդին Հայաստանում: 2009թ. մաս է կազմել Արմենական-ՌԱԿ կուսակցության հիմնադիր խորհրդին եւ ապա վարչությանը: Հետագայում նրա ակտիվ ջանքերով ու երկարատեւ բանակցությունների արդյունքում Հայաստանում կայացել է ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կուսակցությունների վերամիավորումը, Մայր հայրենիքում վերակազմելով Ռամկավար Ազատական կուսակցությունը: 2012թ.-ից ՌԱԿ Կետրոնական վարչության անփոխարինելի անդամ է, եւ ղեկավարելով կուսակցության գաղափարա-քարոզչական բաժինը՝ ակտիվ մասնակցություն ունի քաղաքական այդ կառույցի հզորացմանը ՀՀ-ում:

ՌԱԿ Կենտրոնական վարչությունը շնորհավորում է իր վաստակավոր ընկերոջ, պրոֆեսոր Սուրեն Սարգսյանի 65-ամյակը, մաղթելով նրան քաջ առողջություն, երջանկություն եւ ստեղծագործական ու գիտական գործունեության երկարատեւություն:

**ՌԱԿ Կենտրոնական վարչություն**

❖❖❖

*«**Ազգ**»-ի խմբագրությունը միանում է շնորհավորանքներին ու բարեմաղթանքներին՝ իր աշխատակցին մաղթելով ամենայն բարիք եւ ստեղծագործական անսպառ եռանդ:*

AZG NEW SHABAT.QXD 13/06/2019 22:05 Page 6



ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանի վաստակավոր լրագրող

# Չկրկնել հին սխալը

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի արձագանքը ՀՅԴ ակտիվիստների ցուցադրական քայլին, երբ մի քանի տասնյակ մարդ ներկայացել էր ոստիկանության բաժին՝ ինքնախոստովանական ցուցմունք տալու, իբր անձամբ ի՛նքն է ծեծել այն ամբարտավան երիտասարդին, որը մինչ այդ իրեն թույլ էր տվել ամեն տեսակետից անթույլատրելի հայհոյաբանություն հասցեագրելու Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Սրբազանին, ապա եւ ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին, երբ վերջինս թոռների հետ զբոսնում էր Ազատության հրապարակում, չափազանց հասկանալի էր:

Համաձայն եմ վարչապետի այն մտքին, որ Հայաստանում այլեւս երբեք չպետք է լինեն այսպես կոչված արդարություն հաստատելու ինքնաբուխ դրսեւորումներ, որ ամեն տեսակի անօրինական բռնություն հարկավոր է բացառել մեր կյանքից: Այդ համատեքստում ինձ թույլ եմ տալիս հրապարակավ հարց ուղղելու արգո վարչապետին: Իսկ ինչո՞ւ է նա զլանում սաստել սեփական ֆանատներին, ովքեր, միգուցե եւ անգիտակցաբար, երախներից մաղձ են թափում՝ հարձակվելով բոլոր նրանց վրա, ովքեր վարչապետի հետ այս կամ այն հարցում համաձայն չեն եւ համարձակվում են քննադատել նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության այս կամ այն դրսեւորումը: Դա ի՞նչ տարօրինակ իրավահավասարություն է, երբ մեկի խուլիգանությունը խրախուսվում կամ չտեսնելու է տրվում, մյուսինը՝ դատապարտվում է: Արդարությունն ու արդարադատությունը ընտրովի չեն լինում: Եթե մեկին մի բան կարելի է, իսկ մյուսին՝ ոչ, ապա դա արդեն արդարության ու իրավահավասարության ծա՛ղր է: Մինչդեռ երկրի ղեկավարը իր հրապարակային հայտարարություններով, ելույթներով, հնչեցրած գնահատականներով միշտ պիտի ձգտի օրինակ ծառայել մյուսներին: Խորհուրդ եմ տալիս բոլոր դեպքերում մնալ օրենքի շրջանակներում, հարգել անմեղության կանխավարկածը եւ առանց բավարար հիմքերի՝ նախկին կառավարող կուսակցության անխտիր բոլոր անդամներին չհասցեագրել երկիրը 20-25 տարի անխնա թալանածների ընդհանրական մեղադրանք: Թալանողը պիտի պատժվի, այո՛, սակայն այն մարդը, որի մեղքն ընդամենն այն է, որ եղել է միեւնույն կուսակցության անդամ, պիտի ազա՛տ լինի նման կասկածներից:

Ընդհանրական մեղադրանքները, մանավանդ երբ շրջանցվում է մեր ազգային ունեցվածքի Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակների ահռելի եւ համընդհանուր կողոպուտը, կներեք, պարոն Վարչապետ, ամբոխավարության տիպիկ դրսեւորում են, ոչինչ ավելի: Դուք վա՛տ օրինակ եք տալիս ձեր հաջորդներին: Վաղը, երբ արդեն իշխանություն չեք լինի, միանգամայն հնարավոր է՝ նույն կարգի հրեշավոր մեղադրանքներ հասցեագրվեն նաեւ անձամբ ձեզ, ինչպես նաեւ այսօր ձեզ հետ միասին իշխանության պատասխանատվությունը կիսող մյուս բոլոր պաշտոնատարներին: Որովհետեւ աշխարհում դեռ չի եղել եւ երբեք չի լինի այնպիսի իդեալական իշխանություն, որն իր գործունեության մեջ սխալներ չանի, կամայականություններ թույլ չտա: Դեռ նոր-նոր մեկ տարի է, ինչ իշխանության եք, եւ արդե՛ն իսկ ձեզ հետ եկածներից լուրջ դժգոհություններ կան: Հայտարարում եք, թե թող ոչ ոք ձեր քաղաքակիրթ լինելը թուլության տեղ չդնի: Բայց մի՞թե կա մեկը, ով չի հասկանում, որ իշխանությունը բոլոր պարագաներում ընդդիմադիրներից ուժեղ է: Հոխորտանքն ուժեղին չի՛ սազում, հարգելի՛ս, թողնում է արջն իր ահից գոռալու առածի տպավորություն: Ուստի տարիքով ավագի իրավունքով հորդորում եմ՝ վե՛րջ տվեք զգացմունքային պոռթկումներին, որեւէ մեկի հասցեին հասարակական լսարանի առաջ քամահրական տոնով մի՛ արտահայտվեք: Միգուցե ամբոխի մակարդակի իջածները ձեր այդ տոնը հրճվանքով ընդունեն, սակայն ավելի զգաստ դատողները չեն կարող չհասկանալ, որ պետության ղեկավարի շուրթերից հնչող նույնիսկ տարերայի՛ն սպառնալիքը ընդունակ է հակազդեցություն հրահրելու: Ի դեպ, երբեւէ ՀՅԴ անդամ չեմ եղել, բայց երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը իր հրամանագրով Հոհիդայի գործունեությունը կասեցրեց, ես «Ազգ»ում ամիսներով ու տարիներով հրապարակավ պաշտպանում էի բռնադատվածներին:

Մի՛ կրկնեք Լեւոն Տեր-Պետրոսյանի հին սխալը, պարո՛ն վարչապետ, դա ձեզ ու մեր երկիրը լավ տեղ չի՛ տանի:

# Մայրենին ատելու հաջողված վերջաբան

➩1 Միջառարկայական կապ մեր դպրոցներում առհասարակ գոյություն չունի, աշակերտին հնարավորություն չի տրվում տեսականորեն ու գործնականում համեմատել տարբեր լեզուները, գտնել ընդհանրություններն ու տարբերությունները, ինչն ավելի տպավորիչ կդարձներ լեզուների ուսուցումը: 3-4-րդ դասարաններում դասվարները աշակերտներին արդեն իսկ վարժեցնում են թեստերին: Եթե հարցնեք՝ 8-9 տարեկան երեխան, որ քերականական, բառագիտական, հնչյունաբանական ոչ մի գիտելիք չունի, գեղարվեստական գրականություն չի կարդացել, ինչո՞ւ պետք է սերտի հոմանիշ-հականիշների բառարանը, հսկայածավալ տեքստերի մեջ փնտրի թաքնված պատասխաններ, ուսուցիչը կպատասխանի՝ թեստերին ենք վարժեցնում, որ բարձր դասարաններում չդժվարանան:

4-րդ դասարանցիները օրերս մայրենիի քննությունը հանձնեցին: Մինչ այդ՝ երկու ամիս շարունակ, ամեն օր մեր հանրապետության բոլոր դասվարներն ու 4-րդ դասարանցիները սերտում էին նոր տպագրված թեսթերի ժողովածուն: 9 ու 10 ստացան այն աշակերտները, ովքեր թեստերի բոլոր կետերը լավ էին սերտել, քնած ժամանակ էլ անվրեպ կպատասխանեին: 4-րդ դասարանցիների քննությունը լայն քննարկումների առիթ չդարձավ, իսկ 9-րդ դասարանցիները մինչեւ հիմա Գնահատման եւ թեստավորման կենտրոնում բողոքարկման դիմումներ են ներկայացնում: Այս տարի իններորդցիները առաջին անգամ քննական թեստ հանձնեցին, որտեղ կար շարադրության պահանջ: Հենց այստեղ են աշակերտների միավորները իջել: Նախ՝ կոդավորված աշխատանքները ստուգել են ուսուցիչները: Ասենք՝ Հրազդանի թիվ 5 դպրոցի ուսուցիչները ստուգել են Հրազդանի թիվ 8 դպրոցի 9-րդցիների հայոց լեզվի եւ գրականության քննական թեստերը: Եվ յուրաքանչյուր ուսուցիչ ճաշակի, գեղագիտության, լեզվամտածողության սեփական չափանիշներով է առաջնորդվել: Ստեղծագործական աշխատանքի դեպքում այդ չափանիշները կարող են խիստ սուբյեկտիվ լինել եւ եղել են: Քննության արդյունքները բողոքարկել է 860 աշակերտ: Ընդհանուր առմամբ ցածր ցուցանիշները ազդել են աշակերտների առաջադիմության վրա, շատերը զրկվել են կարմիր վկայականից: Կարմիր գրիչով ալիքաձեւ նշումները գնահատական են իջեցրել, բայց անհասկանալի է՝ այդ կարմիր ալիքները ոճակա՞ն, մտքի՞, շարադասակա՞ն, թե՞ այլ սխալ են ընդգծել: Օրինակ՝ շարադրություններից մեկում աշակերտը գրել է. «Մարդիկ պետք է միմյանց նկատմամբ գթասիրտ լինեն»: «Միմյանց նկատմամբ»-ի տակ աշխատանքը ստուգող ուսուցիչը կարմիր ալիք է նկարել ու միավոր իջեցրել: Աշակերտը բողոքարկել է, սպասում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի պատասխանին, մինչ այդ շարադրությունը տարբեր մասնագետների է ցույց տվել, որոնք զարմացել են՝ այստեղ ոչ մի սխալ չկա, կարմիր ալիքն ինչո՞ւ է գծված:

Անցնենք 12-րդ դասարանցիների հայոց լեզվի եւ գրականության միասնական՝ այսինքն ընդունելության քննության արդյունքներին: Այս տարի անբավարար է ստացել դիմորդների 19,5 տոկոսը: Միջին գնահատականը եղել է 11,5 միավորը: Հատկապես վերջին տարիներին հայոց լեզու եւ գրականություն առարկայի ընդունելության քննությունների արդյունքներից շատերն են բողոքում՝ դիմորդները, նրանց ծնողները, ուսուցիչները: Արդյունքները թեստերի հետեւանքն են: Իսկ թեստերի 4 ժողովածուներից անգամ բանասիրական ֆակուլտետի դասախոսները գլուխ չեն հանում: Ժողովածուների 16 հոգանոց խումբը գլխավորում է Միրցա Հալաջյանը: Երկրորդ անունը Փառանձեմ Մեյթիխանյանն է: Մյուսների անունները դիմորդները անգիր չեն հիշում, բայց հաստատ վրեժով են լցված բոլորի նկատմամբ: Այդքա՞ն ատելություն ու թշնամանք իրենց իսկ ազգի նոր սերնդի՝ 17-18 տարեկան պատանիների ու աղջիկների նկատմամբ... Եթե ուզում եք տեսնել, թե ինչպես կարելի է թակարդ, որոգայթ, ծուղակ լարել դիմորդների համար, ծանոթացեք հայոց լեզվի եւ գրականության ավարտական միասնական քննության թեստերի ժողովածուներին: Հայոց լեզվի ուղղագրությունը, կետադրությունը, քերականությունը, բոլոր բաժիններն ու ենթաբաժինները տիրապետող, հայ գրականությունը ծայրից ծայր կարդացած աշակերտը շվարում-շփոթվում է այդ թեստերի առջեւ: Դրանք գիտելիք, լեզվական հոտառություն, կողմնորոշվելու ունակություն չեն ստուգում, այլ կոտրում են դիմորդի ինքնավստահությունը, կամքի ուժը, հավատը, նրան սեփական աչքում նսեմացնում ու ոչնչացնում: Հայոց լեզուն ու հայ գրականությունը սիրող երիտասարդին հայագիտություն հասկացությունն ատելու համար երկու րոպե է պետք, միայն թե նա ձեռքն առնի այդ թեստերը: Քննությունը նրա համար է, որ քննություն հանձնողն իր գիտելիքներն ու իմացությունները ժողովի ու կենտրոնացնի, ինքն էլ հոգեպես հավաքվի, անգամ 10 տարի առաջ ականջի ծայրով լսածն ի մի բերի, արտահայտի: Իսկ այս թեստերը ճիշտ հակառակն են անում. դիմորդին համոզում են, որ նա ոչինչ չգիտե, լեզու-գրականությունից ուղղակի բոբիկ է: Շփոթեցնող, մոլորեցնող հարց-պահանջներ, որոնց ճիշտ պատասխանը թաքնված է պատասխանների տասնյակ տարբերակների խորախորհուրդ շերտերում: Մի հատիկ մակբայը, ինչպես ասվում է մեր «Սասունցի Դավիթ» էպոսում, «40 գոմշի կաշվի, 40 ջաղցի քարի» տակ քողարկված է. թեստերի հեղինակներն այնքան հմտորեն ու խորամանկորեն են այն թաքցրել, որ դիմորդն այդ մակբայը խրթին, խճողված նախադասությունների լաբիրինթոսում հանկարծ չգտնի ու չընդգծի: Ենթական, մեր սիրելի, պարզ ու միամիտ ենթական խցկել են անիմաստ, գեղարվեստից ու բովանդակությունից զուրկ տասնյակ նախադասությունների մեջ, որ 10 օր ման գաս ու չգտնես:

«Գրականություն» բաժնում ընդգրկված են երկրորդական, ո՛չ, հարյուրերորդական կարեւորության հարցեր. օրինակ՝ «Ո՞ր գրողն է հնդկահայ մեծահարուստ Մասեհ Բաբաջանյանի՝ նորնախիջեւանցիներին թողած կտակի առիթով մեկնել Հնդկաստան»: Դե, խեղճ դիմորդ, պատասխանիր: Մի՞թե մեր գրականության մեջ չկան առավել կարեւոր հարցեր ու թեմաներ, առավել նշանակալի անուններ ու պատմություններ: Թեստերի եւ ոչ մի կետը միտված չէ ստուգելու դիմորդի վերլուծական միտքը, բառապաշարը, ստեղծագործական ունակությունները, գեղագիտական ճաշակը, գրական հոտառությունը: Թեստերի եւ ոչ մի կետը իրական կյանքում, աշխատանքում չի գործածվելու: Հայոց լեզվի եւ գրականության ընդունելության քննությունը մեր իրականությունից, կյանքի պահանջներից հազարավոր կիլոմետրեր հեռու է, այն միայն կոտրում է դիմորդին, նրա մեջ անլիարժեքության բարդույթ սերմանում, ջլատում հավատը սեփական ուժերի հանդեպ: Հայոց լեզվի եւ գրականության քննությունից խուսափելով՝ շատերը գերադասում են ընդունվել Ֆրանսիական կամ Ամերիկյան համալսարան: Դիմորդներն անիմաստ են համարում կրկնուսույցի մոտ 2 տարի, նաեւ հսկայական գումար վատնել, կրկեսի կենդանու պես վարժվել թեստերին, հետո քննությանը 7,20 ստանալ ու բուհ չընդունվել: Այդ նույն դիմորդները, ի դեպ, բարձր ցուցանիշներով անգլերենի քննություն են հանձնում: Հայոց լեզու եւ գրականություն առարկայի դասագրքեր, թեստեր կազմողներին, հայագիտության ոլորտի կրթական պատասխանատուներին կարելի է շնորհավորել. նրանք ամեն ինչ արեցին, որ նոր սերունդն իր մայրենի լեզուն ատի:



Հրազդանցի աշակերտներից մեկը հայոց լեզվից անբավարար է ստացել: Ի դեպ, նա շարադրության օլիմպիադայում բարձր միավորներ է հավաքել, ուսուցիչները նրա գիտելիքների հետ հաշվի են նստում: Այդ տղան մեկ ամսից բանակ է գնալու: Ծնողները պատմում են՝ ինչ իմացել է, որ հայոց լեզվից կտրվել է, տանից դուրս չի գալիս, ծանր դեպրեսիա է տանում: Տղան այնքան վստահ է եղել, որ իր սիրելի, իր պաշտելի հայոց լեզվից ու գրականությունից բարձր է ստանալու, որովհետեւ ոչ թե թեստը սերտել է, այլ ամբողջն ուսումնասիրել, խորքային գիտելիք ձեռք բերել: Որոշել էր՝ կընդունվի բուհ, հետո կգնա ծառայելու: Երկու տարի հետո կվերադառնա ու կշարունակի ուսումը: Կտրվելուց հետո սպասում է, թե երբ է զորակոչի օրը գալու. մյուս քննությունների մասին էլ չի մտածում: Գուցե նրա այս վիճակը շատերը թուլություն համարեն, բայց խոսքը 18 տարեկան երիտասարդի մասին է, որը դպրոցն ավարտելուց հետո մեծ կյանք մտնելու առաջին քայլը ձախողել է, ձախողել է իր մայրենի լեզվի քննությունը հանձնելիս, ձախողել է, որովհետեւ թեստերի մի խումբ հեղինակներ ամեն ինչ արել են, որ նա ձախողի: Բոլորի, այդ թվում դպրոցի եւ ուսուցիչների պնդմամբ գրագետ, ուսյալ այդ տղան մեկ վայրկյանում դարձավ անգրագետ ու թերուս, որովհետեւ իր մայրենի լեզվի քննությունից կտրվել է: Կտրվել է, չնայած դպրոցական ամբողջ ծրագիրը 12 տարի գերազանց է սովորել: Կտրվել է, որովհետեւ հայոց լեզվի եւ գրականության թեստերը ոչ թե նրա գիտելիքներն են ստուգել, այլ վարժեցված լինելու աստիճանը: Ու այստեղ նա պարտվել է, որովհետեւ սկզբունքորեն դեմ է ինչ-որ բանի վարժվելուն: Հիմա բանակ է գնալու, միգուցե առաջնագիծ՝ պաշտպանելու իրեն պարտության մատնածների պատիվն ու խաղաղությունը:

AZG NEW SHABAT.QXD 13/06/2019 22:05 Page 7



# Գաղտնի օպերացիաների աշխարհում

## *Հետախուզություն. Առասպելներ, իրականություն, հորինված ավանդազրույցներ, գաղտնի առաքելություններ*

**ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**
**Պահեստի գնդապետ**

Խորհրդային տարիների ամենաընթերցվող դետեկտիվ գրողներն էին Նիկոլայ Լեոնովը («Օմեգա տարբերակը»), Վալենտին Բերեժկովը («Թեհրան-43»), Յուլիան Սեմյոնովը («Մայոր Վիխրը», «Գարնան 17 ակնթարթը», «Իսպանական տարբերակը», «Նշանաբանը պետք չէ», «ՏԱՍՍ-ը լիազորված է հայտնել», «Ռումբ նախագահի համար»), Օլեգ Շվեյովը, Վլադիմիր Վոստոկովը («Ռեզիդենտի սխալը», «Ռեզիդենտի վերջը», «Ռեզիդենտի վերադարձը»), Վադիմ Կոժեվնիկովը («Վահան եւ սուր»), Յուրի Միխայլչիկը («Մարտադաշտում մեկն էլ զինվոր է»), Դմիտրի Մեդվեդեւը («Հոգով ուժեղները») եւ այլն: Այդ գրողները եւ նրանց գրական հերոսները, որոնցից շատերը կերտված էին իրական հետախույզներից, հակահետախույզներից, դիվերսանտներից կամ զինվորականներից, նվաճել էին Խորհրդային Միության գրեթե ողջ ժողովրդի (հատկապես երիտասարդության) սրտերն ու հոգիները: Այդ հերոսական կերպարներով դաստիարակվում եւ կրթվում էին պատանիներն ու երիտասարդները, դասավանդվում էր հերոսական պայքարը ֆաշիզմի դեմ, թանգարաններում ներկայացվում էին նրանց լուսանկարները, կենսագրականները, անձնական իրերը, անվանական զենքերը եւ այլն: Մի խոսքով, ամեն ինչ հենված էր միակ կուսակցության կողմից մշակված գաղափարախոսության վրա: Իհարկե այդ գաղափարախոսությունը շատ խոցելի էր, մշակված էր սխալ հենարանի եւ հիմքերի վրա, որի վառ ապացույցը Խորհրդային Միության փլուզումն էր 70 տարի հետո: Սակայն այդ բոլորի հետ մեկտեղ, այդ երկրում կարողանում էին շատ արագ հերոսի կերպար կերտել եւ իրական հերոսին ոչնչացնել նույն արագությամբ:

Քանի որ հոդվածի հիմնական «թիրախները» հետախուզությունն է ու հետախույզները, խոսքը նրանց մասին կլինի:

Միայն խորհրդային Միությունում չէր եւ միայն խորհրդային գրողները չէին, որ մասսայական տպաքանակով գրքեր (ինչպես նաեւ այդ գրքերի սցենարներով ֆիլմեր էին հրատարակում հետախույզների գործունեության վերաբերյալ: Նույն հաջողությամբ եւ նույն տպաքանակով եւ նույն բեմականությամբ գովերգում էին իրենց հետախույզներին նաեւ Արեւմուտքում. Լ Մոյզիշ («Ցիցերոն օպերացիան»), Է. Բազնա («Ես էի Ցիցերոնը»), Յուլիուս Մադեր («Ռեպորտաժ դոկտոր Զորգեյի մասին», «Սպիտակ մարդու հետքերով»), Մարգարետ Թրուման («Սպանություն ԿՀՎ-ում»), Ռոնալդ Փեյն («Մոսսադ»- Իսրայելի գաղտնի ծառայությունը»), Ալլեն Դալլես («Հետախուզության արվեստը») եւ այլն: Հատկապես սառը պատերազմի տարիներին, անգլո-ամերիկյան գրականության մեջ եւ կինոստուդիաներում մեծ տեղ եւ հանրամատչելիություն ստացան Յան Ֆլեմինգի «Ջեյմս Բոնդը», Ջոն Լե Կարրեի «Սմայլին», «Ալիկ Լիմասը»: Այդ հերոսները, որոնք պայքարում էին խորհրդային դաժան, անմարդկային, Արեւմուտքի համար անհասկանալի բարքերի դեմ, նույնպես որոշակի ազդեցություն ունեցան Արեւմուտքի հասարակության գաղափարախոսության եւ մշակույթի վրա:

Ամեն դեպքում, շատերի համար պարզ դարձավ, որ հետախուզությունը չափից դուրս լուրջ մասնագիտություն է եւ չի կարելի այդ մասնագիտությանը վերաբերել մակերեսորեն, միայն ռոմանտիկայով: Դա աշխատանք է, չարքաշ, քաք ու քրտինք պահանջող աշխատանք, եթե իհարկե դու ստեղծված ես այդ աշխատանքի համար, ոչ թե դու ընդունվել ես աշխատանքի, այլ քեզ ընտրել են այդ աշխատանքի համար:

Հետախուզության առաջնահերթ խնդիրներից ամենակարեւորը՝ իրադարձությունների կանխատեսումն է: Այդ համակարգում պետք է աշխատեն մարդիկ, որոնց միավորում են ընդհանուր խնդիրները եւ նպատակը, սկզբունքայնությունը եւ նույնանման աշխարհահայացքը, բարձր ինտելեկտը: Այն աշխարհում, որտեղ ապրում է հետախույզը, գիտելիքները բարձր արժեք ունեն եւ հաճախ կարող են առեւտրի առարկա դառնալ, այդտեղ կան խաղի բավական բարդ կանոններ:

Մյուս կողմից կարելի է պնդել, որ հետախուզության մեջ ոչ մի բարդ, արտասովոր եւ գերբնական բան չկա, չնայած մի խորհրդավոր շղարշ է ծածկում այն:

Անգլերեն «intelligence» բառն ունի մի քանի թարգմանություն՝ ինտելեկտ (միտք), խելք, մտավորական, մտավոր ունակություններով արարած, ուղեղ, ինչպես նաեւ՝ հետախուզություն: Այսինքն, այլ կերպ ասած, այդ բառի իմաստը (intelligence) ասոցացնում է հասկանալու ընդունակությունը, մտքերի կառավարումը, ինֆորմացիայի դիտարկումը որպես աշխատանքային նյութ, հումք:

Հետախուզություն (intelligence) բառի համար Արեւմուտքում հետաքրքրական բացատրություն կա՝ հետախուզությունը դա այն ստացված տեղեկատվությունն է, որը չի կարող մնալ մեկ անձի ուղեղում, այլ փոխանցվում է մեկ ուրիշին: Եվ այդ փոխանցված տեղեկատվությունը հետախուզությունում գնահատական է ստանում՝ այն արժեքավոր է, թե արժեքավոր չէ:

Երբեմն, ցավոք սրտի (դա կախված է ղեկավարների սկզբունքայնությունից) հետախուզության կադրերում են հայտնվում խնամի-ծանոթ-բարեկամ սկզբունքով մարդիկ, որոնք 100 կիլոմետր հեռավորությամբ հատուկ ծառայության կողքով չպիտի անցնեն: Դրանց նպատակն է արտասահմանյան որեւէ երկրում «տաքուկ» ծածկի տակ լավ աշխատավարձ ստանալ (իսկ շատ հաճախ այդ աշխատավարձի կարիքն էլ չունեն, քանի որ ապահով ընտանիքից են) եւ կյանքը վայելել, մինչդեռ այնտեղ՝ «Կենտրոնում», այսինքն Հայրենիքում, պատասխանատվության զգացում ունեցող որոշ մարդիկ, տեղեկատվության են սպասում՝ համապատասխան վերլուծություններ եւ կանխատեսումներ անելու համար:

«Բարեբախտաբար» մեր երկրում այդպիսիք չկան եւ ուրիշ շատ բաներ էլ չկան...

Բայց այսօր իմ խնդիրը քննադատելը չէ եւ, քավ լիցի, գնահատական տալն էլ չէ, այլ հիշեցնել ընթերցողին նշանավոր եւ հրաշալի մարդկանց մասին, որոնք անմնացորդ նվիրվել են իրենց գործին, Հայրենիքին, գաղափարին (լավն էր թե վատն էր այն, իրենք չէին որոշողը), ժամանակն էր այդպիսին:

Խորհրդային հետախուզությունում շատ կային ազգությամբ հայ տաղանդավոր, անվեհեր մարտիկներ: Ստորեւ կներկայացնեմ նրանցից մի քանիսի մասին շատ կարճ տեղեկատվություն (այս հարգարժան մարդիկ վաղուց գաղտնիության շղարշի տակից դուրս են եկել).



**Գուրգեն Սեմյոնի Աղայան**, ծնված 1915 թ., Հայրենական մեծ պատերազմի մասնակից, թշնամու թիկունքում ղեկավարել է դիվերսիոն-հետախուզական ջոկատներ: Պատերազմից հետո աշխատել է Արեւելքում ու Եվրոպայում: Ստացել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

**Իվան Իվանի Աղայանց,** ծնված 1911 թ., տիրապետում էր ֆրանսերեն, իսպաներեն, ֆարսի, թուրքերեն լեզուներին: 1941 թ. ղեկավարել է խորհրդային հետախուզության կայանը Թեհրանում, ղեկավարել է ֆաշիստական Գերմանիայի հետախույզ-դիվերսանտ Օտտո Սկորցենիի հատուկ դիվերսիոն օպերացիայի գաղտնազերծումը եւ բացահայտումը Թեհրանում՝ ընդդեմ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ ԽՍՀՄ ղեկավարների:

**Հայկ Բադալի Հովակիմյան**, ծնված 1898 թ., գիտությունների դոկտոր, 1933-1941 թթ. աշխատել է ԱՄՆ-ում, ղեկավարել է հետախուզային կայանը, մեծ ներդրում ունի ԽՍՀՄ-ում ատոմային ռումբ ստեղծելու գործում: Ուղղակիորեն քննադատել է Իոսիֆ Ստալինի եւ Լավրենտի Բերիայի գլխակեր քաղաքականությունը՝ հատկապես գիտության եւ հետախուզության բնագավառներում, որի համար ենթարկվել է քաղաքական հետապնդումների:

**Աշոտ Աբգարի Հակոբյան**, ծնված 1915 թ. (օպերատիվ կեղծանունը՝ «Եփրատ»), Հայրենական մեծ պատերազմի մասնակից, տիրապետում էր ֆրանսերեն, իտալերեն, ռումիներեն, թուրքերեն, բուլղարերեն, արաբերեն լեզուներին, աշխատել է եվրոպական եւ արաբական երկրներում:

**Գեւորկ Անդրեյի Վարտանյան**, ծնված 1924 թ., օպերատիվ կեղծանունը՝ սկզբում «Ամիր», հետո «Անրի», զինվորական կոչումը՝ գնդապետ, ընդհանուր առմամբ 45 տարի աշխատել է «հատուկ պայմաններում», Հայրենիքից հեռու, ամենաակտիվ մասնակցություն է ունեցել «Թեհրան-43» գործառույթում: 2000 թ. դեկտեմբերի 20-ին Գեւորկ Վարտանյանի անունը գաղտնազերծվեց, սակայն նրա կատարած մի շարք գործեր մինչեւ 2010 թ. կրում էին «գաղտնի» մակագիրը:

45 տարի «հատուկ պայմաններում» աշխատանք եւ ոչ մի ձախողում, ոչ մի ձերբակալություն: Հազվագյուտ երեւույթ հետախուզության պատմության մեջ:

Ընդհանրապես ԽՍՀՄ հետախույզներից միայն երեք ոչ լեգալ հետախույզներ են ստացել ԽՍՀՄ ամենաբարձր պարգեւատրումները. «Խորհրդային Միության հերոս»՝ Նիկոլայ Կուզնեցովը, Ռիխարդ Զորգեն, Գեւորկ Վարտանյանը:

Ահա Գեւորկ Վարտանյանի խոսքերը երիտասարդ հետախույզների լսարանում, ակտիվ հետախուզական կյանքից հետո.

*«Հետախուզությունը ռոմանտիկա չէ: Առաջին հերթին դա Հայրենիքը պաշտպանելու ամենաարդյունավետ ճանապարհներից մեկն է: Դա աշխատանք է իրական հայրենասերների համար, հաստատուն համոզմունքների եւ անձնուրացության պատրաստ անձանց համար: Նման աշխատանքին չսիրահարվել անհնար է»*:

Դե իհարկե ռոմանտիկա կա, բայց միայն այն դեպքում, երբ նստած ես կինոթատրոնում կամ հեռուստացույցի առջեւ, կամ խորասուզված գրքի մեջ հետեւում ես, թե ինչպես հետախույզը (որի կերպարը կերտում են Իգոր Կոստոլեւսկին, Շոն Քոնըրին, Թոմ Կրուզը կամ Փիրս Բրոսնանը) փախչում է հետապնդումից, խուսափում թշնամու դիպուկահարի կրակոցներից, ինքն անվրեպ կրակում, օգտագործում է ձեռնամարտի չտեսնված հնարքները եւ վիրավոր, արնաքամ՝ բայց հասնում նպատակակետին: Իսկ ինչ է տեղի ունենում իրականում, երբ հետախույզը թիրախ երկրում զգում է, որ իր ամեն մի քայլը հսկողության տակ է, հակառակորդի արտաքին դիտարկման ծառայությունը իրեն «պառկեցնում է քնելու եւ իր հետ արթնանում» եւ ուր որ է նրան կարող են ձերբակալել փողոցում, խանութում կամ սրճարանում: Համենայն դեպս կրակելը քեզ չի փրկի եւ, ինչպես իր դասախոսություններում պնդում էր Գեւորկ Վարտանյանը՝ այն պահին, երբ հետախույզը ձեռքը տանում է դեպի ատրճանակը, նա դադարում է հետախույզ լինելուց:

Ահա այս հրաշալի մարդու կենսագրությունը եւ անցած կյանքի ճանապարհը ինձ ստիպեց գրիչ վերցնել:

*Շարունակելի:*

**Հաջորդիվ՝**
**«Մասնագիտությունը՝ հետախույզ»:**

# Ձերբակալվել են լոսանջելեսցի ութ հայեր

**Մայիսի 30-ին Մ. Նահանգների ներգաղթյալների եւ մաքսային վերահսկողության հարցերով զբաղվող դաշնային մարմինները Լոս Անջելեսում բանկային խարդախությունների մեղադրանքով ձերբակալել են ութ հայերի, իսկ իններորդը՝ փաստաբանի միջոցով խոստացել է ֆեդերալ իշխանություններին ներկայանալ հաջորդ օրը: Ըստ «Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի, ձերբակալվածները հետեւյալներն են.**

**1) Արա Մալխասյան, 48 տարեկան, Ուինեթկայից,**
**2) Սմբատ Խեչումյան, 38 տարեկան, Հյուսիսային Հոլիվուդից,**
**3) Սվետա Խեչումյան, 45 տարեկան, Ուինեթկայից: Սմբատի քույրն է,**
**4) Հարություն Պետրոսյան, 30 տարեկան, Վան Նայսից,**
**5) Արթուր Հարությունյան, 34 տարեկան, Էն Ինոյից,**
**6) Խաչատուր Չոբանյան, 38 տարեկան, Վան Նայսից,**
**7) Զիվան Հախնազարյան, 49 տարեկան, Վան Նայսից,**
**8) Արման Գրիգորյան, 37 տարեկան, Հյուսիսային Հոլիվուդից,**
**9) Արտակ Օհնյան, 29 տարեկան, Բըրբենկից:**

**Նրանք մեղադրվում են ապօրինաբար ուրիշների անձնագրերը ձեռք բերելու, լուսանկարները փոխելու եւ ուրիշների բանկային հաշիվները յուրացնելու մեջ: «Bank of America» եւ «Wells Fargo» բանկերից յուրացված գումարը կազմում է 1,5 միլիոն դոլար: Քրեական օրենքով նման հանցագործության համար նախատեսվում է մինչեւ 30 տարվա բանտարկություն:**

Հ.Ծ.

# Ընտրվեց Ղազախստանի երկրորդ նախագահը

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան

Ղազախստանում ամփոփում են արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքները: Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ դրանց չէր մասնակցում երկրի առաջին նախագահ **Նուրսուլթան Նազարբաեւը**: «Առաջին» բառը այս ընտրությունների համատեքստում տեղին է նաեւ այն պատճառով, որ Ղազախստանի համար այս ընտրարշավը աննախադեպ դարձավ քաղաքական մրցակցության մակարդակով եւ թեկնածուների ներկայացված բազմազանությամբ:

Ղազախստանի նախագահական արտահերթ ընտրությունների նախնական արդյունքները, նույնիսկ առանց Նուրսուլթան Նազարբաեւի մասնակցության, անակնկալներ չէին պարունակում: Նազարբաեւի իրավահաջորդի՝ կադրային դիվանագետ **Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի** հաղթանակը կանխատեսելի էր: Տոկաեւը խոստացավ շարունակել նախորդի քաղաքական գիծը, որի հեղինակությունը հայրենակիցների շրջանում միշտ էլ բարձր է եղել: Ղազախստանցիներն իրենց մեծամասնությամբ կանխատեսելիորեն քվեարկեցին հանուն կայունության եւ մի քաղաքականության, որը երկիրը բերեց ամենահաջողվածների շարք ոչ միայն Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, այլեւ ողջ ետխորհրդային տարածքում:

Սակայն, չնայած այս ընտրությունների կանխատեսելի արդյունքին, չի կարելի ասել, թե նրանք զուրկ էին քաղաքական մրցակցությունից: Բոլորովին: Որպես փաստարկ կա երեք փաստ. նախագահի այդ ընտրություններում մասնակցում էր պատմության մեջ առավելագույն թվով թեկնածու, Ղազախստանում նախագահական ընտրություններում առաջին անգամ կին էր մասնակցում, ընտրարշավի շրջանակներում առաջին անգամ նախընտրական հեռուստաբանավեճ ծավալվեց:

Խոսելով թեկնածուների մասին, արժե նշել, որ այս տարվա ցուցակն իր քաղաքական կազմով ամենաբազմազանն էր Ղազախստանի ողջ պատմության ընթացքում: Այստեղ ներկայացված էին ե՛ւ ձախերը, ե՛ւ ազգայնականները, ե՛ւ լիբերալները, ե՛ւ կենտրոնամետները: Թեկնածուների լայն սպեկտրը, իհարկե, մեծացրեց նախընտրական մրցավազքի ինտրիգը եւ ընտրողներին հնարավորություն տվեց ընտրություն կատարել քաղաքական հոսանքների եւ նրանց ներկայացուցիչների շատ ավելի լայն տեսականուց:

Այս ընտրությունների աննախադեպ բազմազանությունն ընդգծեցին նաեւ դիտորդները: Ամբողջությամբ վերցրած, ընտրարշավի եւ բուն քվեարկության իրենց գնահատականներում միջազգային կազմակերպությունների եւ արտասահմանյան առաքելությունների ներկայացուցիչները, նույնիսկ նրանք, ովքեր կանխակալ քննական հայացք ունեին, զարմանալիորեն կառուցողական էին եւ միակարծիք: Ղազախստանի ընտրություններն, ըստ նրանց, անցան մրցակցային պայմաններում, առանց նշանակալից խախտումների, բարձր քաղաքացիական ակտիվության պայմաններում: Որոշ ընտրատեղամասերում նույնիսկ երկար հերթեր գոյացան: Երկրում ընտրություններին մասնակցությունն արդյունքում կազմեց ավելի քան 77%: Քվեարկությանը մասնակցության մասին արժե առանձին ասել: Դրա բավական բարձր մակարդակը, հատկապես արեւմտյան դեմոկրատիաներում քվեարկություններին մասնակցողների թվի անկման ընդհանուր միտման ֆոնին խոսում է Ղազախստանի հասարակության փափուկ քաղաքականացվածության մասին, այսինքն հանրապետության քաղաքացիները հիմա, ինչպես երբեք, հասկանում են, որ իրենց ձայնը կարեւոր է եւ գիտակցում են, որ հատկապես իրենք են որոշում երկրի ապագան:


Կասիմ-Ժոմարտ Տոկաեւ

Քվեարկության օրը ղազախստանցիների բարձր քաղաքացիական ակտիվությունն արտահայտվում էր, որքան էլ դա տարօրինակ հնչի, նաեւ այն բողոքի ցույցերում, որոնք անցան Նուռ-Սուլթանում եւ Ալմաթիում: Բողոքավորները, ցավոք, չէին ներկայացրել հայտ հանրահավաքներ անցկացնելու համար եւ դրա համար էլ իշխանությունները ուժայիններին ներգրավեցին կարգուկանոնը ապահովելու համար:

Հաղթած թեկնածու Կասիմ-Ժողարտ Տոկաեւը արձագանքեց այդ իրադարձություններին մի հայտարարությամբ, որտեղ իշխանության պատրաստակամությունը հայտնեց կառուցելու երկխոսություն նրանց հետ, ովքեր պաշտպանում են այդ իշխանությունը, եւ նրանց հետ, ովքեր այդ իշխանությանը դեմ են: Բացի դրանից, Ղազախստանի ընտրված նախագահը առաջարկեց երկրում ստեղծել հասարակական վստահության գծով հատուկ կոմիտե: Ցույցերը, հատկապես ընտրության օրը, սովորական պատկեր են ժողովրդավարական յուրաքանչյուր երկրում, որոնք վկայում են այն մասին, որ ընտրարշավն ընթանում է առողջ մրցակցային միջավայրում: Այլ բան է, որ Ղազախստանում առայժմ չի ձեւավորված սովորույթ՝ համաձայնեցնելու իշխանությունների հետ նման միջոցառումները, որպեսզի դրանք սպառնալիք չդառնան եւ հարմար համապատկեր չստեղծեն տարբեր տեսակի սադրիչների համար: Բայց, ամբողջությամբ վերցրած, հասարակական երեւույթների գաղափարը խոսում է ղազախստանյան քաղաքացիական հասարակության զարգացման մասին, քաղաքացիների պատասխանատվության մասին հանուն իրենց երկրի ճակատագրի: Եվ դրանում, անվիճելիորեն, նույնպես դրական նախանշան կա:

Վերադառնալով բուն ընտրություններին, կարելի է համոզված ասել, որ ընտրարշավը եւ նրա բոլոր բաղադրիչները դարձան Ղազախստանում ժողովրդավարական գործընթացների էվոլյուցիայի խորհրդանիշ: Իսկ քաղաքական մրցակցության աճը, որը դարձավ այս նախագահական ընտրությունների կարեւոր բաղադրիչը, անպայմանորեն դրական է անդրադառնալու 2021թ. Ղազախստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների վրա: Երկրում, առնվազն, արժե սպասել քաղաքական դաշտի ընդլայնում, բազմակարծության մակարդակի բարձրացում եւ քաղաքական բազմազանության հետագա մեծացում:

Ընտրված նախագահի Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի երդման արարողությունը վերջակետ կդնի Ղազախստանում իշխանության տարանցման գործընթացում եւ հիմք կդառնա ղեկավարների ժողովրդավարական փոխարինելիության ոչ միայն կոնկրետ այդ հանրապետությունում, այլեւ, հնարավոր է նաեւ, ամբողջ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, որտեղ իրերի նման վիճակը նախադեպեր չի ունեցել:

# Բայդենն առաջատար է նախագահության թեկնածուների մեջ



**ԱՄՆ նախկին փոխնախագահ Ջո Բայդենը իր մրցակիցների հանդեպ զգալի առավելությամբ առաջատար է դարձել Դեմոկրատական կուսակցությունից որպես երկրի նախագահության թեկնածու: Այդ մասին հաղորդում է The Hill հրատարակությունը՝ հիմք ընդունելով HarrisX ընկերության հետ համատեղ անցկացված սոցհարցման արդյունքները: Նշվում է, որ Բայդենը գրեթե կրկնակի գերազանցում է իր կուսակից Բեռնի Սանդերսին: Hill-HarrisX-ի վերջին հարցման տվյալների համաձայն, Ջո Բայդենը 19 կետով առաջ է անցել իր մրցակից Սանդերսից:**

**Այսպես, հարցումների տվյալներով, Բայդենը ստացել է դեմոկրատների ընտրազանգվածի ձայների 35 տոկոսը: Նրան հաջորդում է Բեռնի Սանդերսը 19 տոկոս արդյունքով: Հաջորդ տեղերը զբաղեցնում են Պիտ Բուտիջիջը (8%), Էլիզաբեթ Ուորրենը (5%), Կամալա Հարրիսը (4%) եւ այլն:**

**Հարցվողների 17 տոկոսը առայժմ չի կողմնորոշվել նախընտրելի թեկնածուների հարցում: Այս տարվա ապրիլին Ջո Բայդենի ընտրարշավի սկզբից ի վեր մրցակիցների նկատմամբ նրա գերակշռությունը մնում է անփոփոխ: Կուսակիցներից որեւէ մեկին չի հաջողվել առաջ անցնել Բայդենից: Ինչպես նշում է հրատարակությունը, փոփոխություն թերեւս կարող է տեղի ունենալ հունիսի վերջերին Դեմոկրատական կուսակցության բանավեճերի առաջին փուլից հետո:**

**Ավելի վաղ, նախագահ Դոնալդ Թրամփը պատրաստակամություն էր հայտնել մրցակցելու Ջո Բայդենի հետ եւ կասկածի տակ էր առել նրա մտավոր ունակությունները: Թրամփը մեկնաբանել էր 2020 թ. նախագահական ընտրություններում առաջադրվելու նախկին փոխնախագահի որոշումը: «Բարի գալուստ ընտրարշավ, քնկոտ Ջո», իր թվիթթերյան էջում գրել էր Թրամփը՝ չնշելով Բայդենի ազգանունը: «Հուսով եմ՝ ունես մտավոր ունակություններ (ինչը կասկածի տակ է դրվում), որպեսզի ընտրարշավ անցկացնես նախնական ընտրություններում»: Թրամփը այն միտքն էր արտահայտել, որ Դեմոկրատական կուսակցության թեկնածուներ Բայդենի եւ նրա կուսակիցների նախընտրական պայքարը ոչնչով աչքի չի ընկնի:**

**Ջո Բայդենը 76 տարեկան է: Նա ԱՄՆ փոխնախագահի պաշտոնը զբաղեցրել էր 2009 թ. հունվարից մինչեւ 2017 թ. հունվարն ընկած ժամանակամիջոցում, երբ երկրի նախագահն էր Բարաք Օբաման: Մինչ այդ նա 36 տարի եղել էր Դելավեր նահանգի սենատոր: Վերջին հարցումների համաձայն, Բայդենը վեց տոկոսային կետով գերազանցում է ներկայիս նախագահ Թրամփին:**

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

# «Ծագող արեւի» բարձրագույն շքանշանը Լորդ Դարզիին



Լոնդոնի կայսերական քոլեջի հաղորդմամբ, մայիսի 21-ին իրաքաբրիտանահայ ականավոր բժիշկ եւ Լեյբորիստական կուսակցության քաղաքագետ-ակտիվիստ լորդ Արա Դարզին արժանացել է «Ծագող արեւի, ոսկե ճառագայթների» շքանշանին, որը համարվում է Ճապոնիայի հնագույն ազգային շքանշաններից մեկը եւ շնորհվում է կայսրի կողմից ոչ-ճապոնացի այն քաղաքացիներին, որոնք աչքի ընկնող ներդրում են ունեցել իրենց բնագավառներում: Դարզին դրան արժանացել է ընդհանրապես համաշխարհային առողջապահությանը եւ մասնավորապես Ճապոնիայում բժշկության զարգացմանը նպաստած լինելու համար:

Վերոնշյալ քոլեջում Դարզին գլխավորում է Առողջապահության գլոբալ նորարարության ինստիտուտը 2010-ից սկսած: Այդ ինստիտուտի ուշադրության կենտրոնում է նորարարական սարքավորումների միջոցով լավագույն վիրահատական միջամտություններ իրականացնելու խնդիրը՝ ապահովելով հիվանդների անվտանգությունը: Իր գործունեության ընթացքում նա խթանել է գիտական գործընկերությունը Ճապոնիայի եւ Միացյալ Թագավորության միջեւ: 2016 թվին կայսերական (Imperial) քոլեջում նա կազմակերպել է առաջին (նախարարական մակարդակի) գագաթաժողովը՝ նվիրված հիվանդների անվտանգությանը: Իսկ 2018-ին նա արդեն նմանատիպ երրորդ գագաթաժողովն է անցկացրել Տոկիոյում, որտեղ ստորագրվել է հայտարարություն, որն աշխարհի քաղաքական ուժերին պարտավորեցնում է ավելի անվտանգ բժշկական ծառայություններ մատուցել հիվանդներին ողջ աշխարհում:

Նա Լորդերի պալատի անդամ է 2007-ից, իսկ ասպետի կոչմանն է արժանացել 2002-ին: Վերջերս նրա միջամտությամբ ազատ էին արձակվել Ռոյթեր լրատվական գործակալության երկու աշխատակիցներ, որոնք 2017-ի դեկտեմբերին ձերբակալվել էին Միանմարում (Բիրմա), ավելի ճշգրիտ՝ Ռոհինիայում 10 մահմեդականների սպանության գործը հետաքննելու համար: Այս մասին «**Ազգ**»ը գրել էր մայիսի 24-ի համարում:

Հ.Ծ.

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

# Դուք ճանաչո՞ւմ եք Արցախի հերոս Վիտալի Բալասանյանին

Աչքի եմ անցկացնում հայկական սոցցանցերն ու անակնկալի գալիս. մեր հայրենակիցներից շատերն ուղղակի հրճվում են Վիտալի Բալասանյանի՝ Արցախի Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից ազատվելու լուրով:

Ճիշտ է, վերջին շրջանում Բալասանյանի որոշ հայտարարություններ ոչ միանշանակ ու, հաճախ, մասնակիորեն անընդունելի են եղել, բայց նրա պաշտոնանկության լուրով ուրախացողներին ցանկանում եմ հարցնել՝ դուք ճանաչո՞ւմ եք Արցախի Հերոս Վիտալի Բալասանյանին:

Վստահ եմ, որ քննադատողներից շատերը Վիտալի Բալասանյանի անունն առաջին անգամ լսել են 2016 թ.՝ ՊՊԾ գնդի գրավման հետ կապված միջադեպերի զարգացման ժամանակ: Դրանից հետո, ճիշտ չհասկանալով Բալասանյանի խոհեմ մոտեցումները, շատերն սկսեցին նրան մեղադրել ու դավաճան անվանել: Բայց հիասթափեցնելով նմաններին, ասեմ, որ եթե Բալասանյանը չմիջամտեր գործին, եւ գունդը գրավողներին չհամոզեր՝ զենքը վայր դնելու, ապա, ինչպես ժողովրդական առածն է ասում՝ այդ խմորը դեռ շատ ջուր կխմեր:

Ավելին՝ այսօր Վիտալի Բալասանյանին քննադատողներից ու նրա պաշտոնանկության լուրով հրճվողներից շատ շատերը ծնված էլ չեն եղել, երբ նա զենքը ձեռքին, իր բնատուր ռազմագիտությամբ, փայլուն մարտական ուղի է անցել, եւ Արցախի ազատության ու մայր հայրենիքի հետ վերամիավորման հարցում նրա ավանդը փոքր չէ: Ես գիտեմ, որ Բալասանյանի վերջին հայտարարությունը՝ Արցախի առանձին պետություն լինելու հետ կապված, հաջող հայտարարություն չէր, բայց գիտեմ նաեւ, որ դա արտաքին խաղ է, եւ այդ հայտարարությանը հղում անողներն ու նրան հայհոյողներն ավելի շատ չեն նվիրված մեր ազգին ու հայրենիքին, քան՝ Վիտալի Բալասանյանը: Եւ սրանք ուղղակի գովեստի խոսքեր չեն, այս խոսքերի լավագույն ապացույցը Բալասանյանի անցած փառավոր մարտական ուղին է: Ի դեպ, նրան քննադատողներից քանի՞սն են ծառայել հայկական բանակում, քանիսի՞ հայրերն են մասնակցել Արցախյան ազատամարտին:

Դեռ հստակ չէ՝ Բալասանյանն ինչ պայմաններում է պաշտոնանկ արվել, կարծիքները շատ կարող են լինել, բայց հստակ պատասխանը ժամանակն է տալու, երբ վաղը բյուրեղացնի ու մեզ մատուցի այսօրվա տեղի ունեցածը, բայց այսօր Բալասանյանի հանդեպ տեղի ունեցածն ու ունեցողը, մեղմ ասած, անշնորհակալություն, անաղուհացություն է:



Մաթեւոսյանը լավ է նկատել, որ հիշողությունը մարդու եւ անասունի միջեւ է: Հետաքրքիր է, Վիտալի Բալասանյանին քարկոծողները տեղյա՞կ են, հիշո՞ւմ են՝ Ապրիլյան պատերազմի ժամանակ Վիտալի Բալասանյանն ինչ մեծ ծառայություն է մատուցել մեր բանակին, տեղյա՞կ են, որ նրա ռազմագիտական փայլուն տաղանդի շնորհիվ մենք կարողացել ենք խուսափել առավել մարդկային ու տարածքային կորուստներից: Ես բոլորին խորհուրդ եմ տալիս հետ նայել, վերստին զննել այդ ոչ հեռու անցյալը եւ հասկանալ, որ խոսելուց առաջ հարկավոր է մտածել: Եւ առհասարակ, խորհուրդ եմ տալիս մտածել:



Դառնամ ուրախությանը, բայց մինչ այդ, հետ գնանք 2016թ. նոյեմբեր ամիս:

Լավ իմանալով Բալասանյանի «ձեռքի հունարը», ադրբեջանցիներն ուղղակի վայնասուն էին բարձրացրել, երբ նա նշանակվել էր Արցախի անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում: Այդ ժամանակ ադրբեջանական հայտնի լրատվականներից մեկը հոդված էր գրել՝ «Արյունարբու գեներալը իշխանության է ձգտում Արցախում» վերնագրով: Հոդվածագրի տված բնորոշումները ողջ ադրբեջանցիների ատելության ու վախի հանրագումարն էր՝ ուղղված Արցախի հերոսին:

Այնտեղ հստակ ներկայացված էր գեներալի անցած մարտական ուղին, առանձնակի շեշտով նկարագրվում էր, թե ինչ անասելի դաժանություն է ցուցաբերել նա ադրբեջանական զինուժի հանդեպ: Հոդվածագիրն անդրադարձ էր կատարել նաեւ Ապրիլյան պատերազմին. այդ հատվածում նույնպես խոստովանություն կար, որ Բալասանյանի ռազմական տաղանդը զգալիորեն «հարամել է իրենց ճաշը»: Եւ հատկանշականն այն է, որ, հղում անելով այդ հոդվածին, ադրբեջանական լրատվական դաշտը մտավախություն էր հայտնում, որ Վիտալի Բալասանյանը մի օր կդառնա Արցախի նախագահ եւ իրավիճակն է՛լ ավելի կբարդանա:

Այսօր՝ այդ դեպքից մոտ երեք տարի անց, ադրբեջանական մամուլը ողողվել է Բալասանյանի պաշտոնանկության մասին հրճվանքով գրված լուրերով, որովհետեւ ի տարբերություն մեր որոշ հայրենակիցների, Ադրբեջանում շատ լավ գիտեն՝ ո՞վ է Բալասանյանը, որովհետեւ վերջինս նրանց հաղթել է պատերազմում, որովհետեւ նրանցից շատերը կամ շատերի հայրերը, բարեկամներն ու ծանոթները 90-ականներին ուղղակի փախել են նրա առաջից, որովհետեւ լավ գիտակցում էին, որ Վիտոն ու ընկերները կգան, կսպանեն իրենց: Այդպես էին մտածում նաեւ չեչեն ու այլազգի մոջահեդները, որոնք եկել էին օգնելու իրենց ազերի եղբայրներին:

***Հ.Գ.*** *Բաքվին ուրախացնում է Բալասանյանի պաշտոնանկությունը. Երեւանն ի՞նչ ունի ուրախանալու...*

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

# Հեղինե Մելիք-Հայկազյանի վերադարձը

Ինձ համար ճապոնացիները միշտ էլ եղել են հայ ազգի բարեկամները: Այո՛, այդպես ցույց է տալիս պատմությունը, ինչի պատմական փոքրիկ բացահայտման մասնակիցը եղա: Իմ սերն ու նվիրումը ճապոնացիների հանդեպ ծնվեց Ճապոնիայում իմ ուսումնառության տարիներին. ինձ բախտ էր վիճակվել Հայաստանից մեկնել ցրտաշունչ Աոմորի՝ ուսանելու եւ անցնելու մի դժվարին ճանապարհ, որն ինձ ապագայում պիտի դարձներ մի փոքրիկ կամուրջ Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ մի օր որոշեցի այցելել Հայաստանի Ազգային գրադարան եւ փնտրել այն բոլոր գրքերը, որտեղ կա Ճապոնիա բառը: Եվ ահա ես կարծես ֆիլմում լինեի, երբ բազմաթիվ գրքերի միջից իմ առջեւ բացվեց 1905 թվականին տպագրված մեր հայրենակցուհու հուշերն ու տպավորությունները Ճապոնիա իր այցի վերաբերյալ հայերեն լեզվով: **Հեղինէ Մելիք-Հայկազեան, «Մի պտոյտ Ճապոնում»**: Աչքերիս չէի հավատում: Ինչպե՞ս... Մինչ այդ հայ-ճապոնական առնչությունների պատմությունն ինձ համար սկսվում էր Դիանա Աբգարի մասին տեղեկություններով, այն գեղեցիկ, խելացի եւ հայրենասեր հայուհու, որը երբեւէ չլինելով իր մայր հայրենիքում՝ 1915 թվականին թուրքերի կողմից հայերի հանդեպ կատարված ցեղասպանությունից հետո Հեռավոր Արեւելքում փարոս դարձավ բազմաթիվ հայ գաղթականների համար: Գիրքն ընթերցեցի մեկ շնչով՝ կլանելով ամենը, ինչ ընդգծել էր տիկին Հեղինե Մելիք-Հայկազյանը: Միայն հետո պիտի իմանայի, որ նա եղել է շուշեցի հայտնի տոհմի զավակ, պետական գործիչ Ալեքսանդր Բեկզադյանի կինը, Հովհաննես Թումանյանի մտերմուհին, որը կյանքի վերջին տարիներն ապրել է Ֆրանսիայում...




Հետաքրքրական էր մեկ դար անց տեսնել Ճապոնիան տիկին Հեղինեի աչքերով: Մտովի կարելի էր զգալ Ճապոնիայի այդ ժամանակաշրջանի ռիթմը, Ճապոնիա, որ դեռ չէր տեսել պատերազմ, ատոմային ռմբակոծություն, Ճապոնիա, որ դեռ չէր ապրել «ճապոնական հրաշքի» բերկրանքը: Ընթերցանության ընթացքում հանդիպեցի մի ուշագրավ հատվածի: Ինձ խորապես հուզեց ճապոնացիների վերաբերմունքն իմ ժողովրդի հանդեպ: Պարզվում է, 20-րդ դարի սկզբին ճապոնացիներին հուզել են հայ ազգի խնդիրները, եւ նրանք շտապել են օգնության...

Ֆեյսբուքյան էջում գրքի մասին իմ գրառումը չուշացավ: Այս հատվածը թերեւս հիմք դարձավ ինձ համար ձեռնարկելու «Մի պտույս Ճապոնում» գրքի թվայնացման գործը: Պրպտումների ճանապարհին հանդիպեցի Մերուժան Կարապետյանին, մարդու, ով գիտեր ոչ միայն այդ գրքի մասին, այլեւ անձամբ ծանոթ էր եղել տիկին Հեղինեի դստեր՝ Վարյա Բեկզադյանի հետ, որն էլ իր հերթին եղել էր պոլիոմելիս պատվաստանյութի համահեղինակը եւ Ֆրանսիայում հարգարժան տիկին: Ի վերջո, ընկերներիս (Մերուժան Կարապետյան, Արծվի Բախչինյան, Հիդեհարու Նակաջիմա, Աստղիկ Հովհաննիսյան) եւ իմ փոքրիկ բացահայտումները մեկտեղվեցին մեկ գիտական քննարկման ժամանակ, որի արդյունքը եղավ հոդվածների փոքրիկ մի բուկլետ, գրքի էլեկտրոնային տարբերակի թվայնացման ներկայացումը հանրությանը, ինչը հետաքրքրական արձագանքներ ունեցավ:

Հույսով եմ, որ այս գիրքը, ավելի քան մեկ դար անց յուրօրինակ կամուրջ կհանդիսանա հայ եւ ճապոնացի բարեկամ ժողովուրդների միջեւ, պարծանքի լավ առիթ՝ մեր հնամենի բարեկամության եւ, ինչո՞ւ չէ, թարգմանվի նաեւ ճապոներեն:

Որպես վերջաբան ցանկանում եմ մեջբերել Յումիկո Շեպարդի ճապոնա-հայկական հայկուն.

*Ծագող արեւի երկիրն*
*Ու արեւի երկիրը*
*Կմիանան:*

Հատուկ շնորհակալություն եմ ցանկանում հայտնել ՀՀ Ճապոնիայի դեսպան Ջուն Յամադային՝ մշտապես զորավիգ լինելու եւ իմ գաղափարները ոգեւորելու համար:

AZG NEW SHABAT.QXD 13/06/2019 22:05 Page 10



# Լինել սորոսական՝ նշանակում է լինել ապազգային, հակապետական եւ հակամարդկային

**ՆԱԻՐԱ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ**

Մեր հասարակությունում գնալով ավելի հաճախակի են դառնում խոսակցությունները Սորոսի եւ նրա գործակալների մասին: Ո՞վ է Սորոսը, ինչո՞ւ մեր կողմից չընտրված, մեր երկրի ու ժողովրդի հետ որեւէ կապ չունեցող այս սուբյեկտը տանտիրոջ նման տնօրինում է մեր երկրում՝ օրենսդրական նախագծեր ներկայացնում, համակարգային փոփոխություններ անում, բախումներ հրահրում, վերջնագրեր ներկայացնում: Ի՞նչ դեր խաղաց նա մեր, այսպես կոչված, հեղափոխության ժամանակ, ո՞րքան է նրա իրական կշիռը երկրի կառավարման գործում :

Սուտ, կեղծիք ու մանիպուլյացիա, սա այն քողն է, որի ներքո այսօր երկրում լուրջ գործընթացներ են տեղի ունենում: Բարոյական նորմերի ոտնահարում, արժեքների խեղաթյուրում, պետական ինստիտուտների ոչնչացում, անհասկանալի նախաձեռնություններ, կրթական, սոցիալական, դատական համակարգերի արմատական ձեւափոխումներ, տարօրինակ օրենսդրական նախաձեռնություններ, ընդ որում այս բոլորը առաջ է մղվում սպառնալիքով, կեղծ իրազեկումներ ու անօգուտ քննարկումներ կազմակերպելով, խաբելով ու իմաստափոխելով: Հասարակության, որի գրեթե հարյուր տոկոսը ավանդական կողմնորոշվածություն ունի եւ դեմ է այլասերված նորամուծությունների, միեւնույն է բռի համառությամբ ենթարկվում է հենց այդ նույն այլասերվածության քարոզին: Ենթադրվում է, որ տեղական մի քանի տհասների առկայությունը, նրանց հովանավորելը ու հրահրելը բավական է ամբողջ ազգի բարոյական նկարագիրը խեղելու համար: Բառափոխություններով նոր իմաստներ ստեղծելը մարդկանց գիտակցության վրա ազդելու հին հնարք է, այսօր աշխարհի խոշորագույն, այսպես կոչված, մտքի կենտրոնների կողմից «պատերազմ» բառի ավելի քան հարյուր փոխարինողներ են հնարվել ու շրջանառության մեջ դրվել, իբրեւ թե բառի ազդեցությունը մեղմելու համար, բայց դրանից պատերազմը չի դադարել լինել զավթողական՝ մահ ու ավերածություն բերող: Նույն տրամաբանությամբ էլ՝ ոչ բռնին չի դադարել լինել բռնի, թավշյան՝ կոշտ ու բիրտ, սիրո ու համերաշխության հեղափոխությունն էլ՝ սահմանադրական կարգի տապալում:

Բայց անդրադառնանք մեր բարեկա՜մ Ջորջ Սորոսին. ո՞վ է նա՝ այս բաց հասարակության մոլեռանդ քարոզիչը, որի մասին տեղեկությունները փակ են, եւ ո՞րն է աշխարհով մեկ նրա ծավալած լայնամասշտաբ գործողությունների իրական իմաստը:

Կենսագրությունը բաց թողնենք, այն հասանելի է յուրաքանչյուրին համացանցից, ուղղակի ծանոթության համար մի քանի ուրվագիծ:

Սորոսի կրքոտ կենսագիրները պատմում են դրվագներ նրա ոչ ադեկվատ պահվածքի մասին, ողջ աշխարհի վրա իշխանություն ունենալու նրա երազանքի մասին «...ես երեւակայում էի, որ աստված եմ... Այն ինչ առաջ կոչվում էին սովետական հանրապետություններ, այժմ կոչվում են սորոսական հանրապետություններ... ում է պետք ՆԱՏՕ-ն, եթե կա իմ ֆոնդը...». Հիլարի Քլինթոնի հետ խոսակցությունում անկեղծացել էր մեծ կոմբինատորը, երբ որոշել էր, որ իր զավթողական ծրագրերը իրականացել են:

Այսպես կոչված պաշտոնական տեղեկատվությունը նրան ներկայացնում է որպես հաջողակ գործարարի ու ֆիլանտրոպի, իսկ ոչ պաշտոնական աղբյուրներում նա ունի՝ ֆինանսական սպեկուլյանտի, խարդախ խաղամոլի, բարոյազուրկ անձնավորության համբավ:

«Արհավիրքների կապիտալիստ». այսպիսի պիտակ է կպցված խարդախ գործարարին: Լավ հայտնի են Սորոսի կազմակերպած եւ ամբողջ աշխարհով մեկ աղետի պես տարածվող հակակառավարական, հակապետական ցույցերն ու հեղաշրջումները՝ խաղաղասիրական, իրավապաշտպան, գենդերային, լգբտ խմբերի, գլոբալիստական ու հակագլոբալիստական, էկոլոգիական մակդիրներ կրող շարժումների ու կառույցների միջոցով:

Սորոսի ունեցվածքը, որ գնահատում են մոտ երեսուն միլիարդ, կուտակվել է հիմնականում արժեթղթերի շուկայում սպեկուլյատիվ գործարքներից: Նա արժեթղթերի մեծ փաթեթների բաժնետեր է, նրա ստեղծած Soros Fund Management LLC ֆոնդը, բաժնեմասեր ունի բազմաթիվ խոշոր կորպորացիաների կապիտալներում՝ քիմիական գիգանտ Dow Chemicals, Monsanto, էներգետիկ գիգանտներ՝ Energen and PDC Energy: Այս կորպորացիաները այսօր ակտիվ ներգրավված են գյուղատնտեսության, բիոտեխնոլոգիաների, սննդի արդյունաբերության ոլորտներ: Նրա հետաքրքրությունների մեկ այլ ոլորտ է բանկային համակարգը, նա արժեթղթերի մեծ փաթեթ ունի Սիթի Group-ում, որը, Ուոլ Սթրիթի խոշոր չորս բանկերից մեկն է, եւ որին մենք դեռ կանդրադառնանք:

Սորոսի հետաքրքրությունների շրջանակում ամբողջ աշխարհն է: Նա համարվում է բրիտանական ֆունտ ստերլինգի արժեզրկման հեղինակը: Թայլանդի ազգային արժույթի արժեզրկումը կազմակերպելուց հետո այդ գործընթացը շղթայաբար շարունակվեց հարավարեւելյան Ասիայի մի շարք երկրներում՝ հանգեցնելով տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի՝ Ֆիլիպիններ, Ինդոնեզիա, Հարավային Կորեա: Մալազիայի վարչապետ՝ Մոհաթհիր Մոհամեդը նրան անվանեց անգութ ու արյունախում չարագործ, Բրազիլիա, Արգենտինա, Մակեդոնիա, Ուկրաինա, Արեւելյան Եվրոպայի պետություններ, Վարշավա .... այսօր արդեն հանգիստ կարող ենք ավելացնել՝ Հայաստան:

Եթե որեւէ խելամիտ գործարարի որեւէ երկրում գումար ներդնելու ու գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ են կայուն տնտեսություն եւ կայուն քաղաքական իրավիճակ, ապա Սորոսն իր գործունեությունը ծավալում է քաոսի պայմաններում, նրա այսպես ասած բարեգործական ֆոնդերը օգտագործվում են հեղափոխություններ, խռովություններ, պետական հեղաշրջումներ հրահրելու համար, սրանց հետեւում են քաղաքական եւ տնտեսական խառնաշփոթ, ճգնաժամ, արդյունքում անկում է ապրում ազգային արժույթը, ընկնում է արտադրական միավորների գինը՝ ազգա-



յին արժույթով եւ արդեն դոլարով, չնչին արժեքով յուրաքանչյուր ակտիվ դառնում է հասանելի: Բայց, ցավոք սրտի, նրա հետաքրքրությունները միայն տնտեսական ու ֆինանսական չեն:

2016 թվականի օգոստոսին DCLeaks.com, ինտերնետային էջի հակերները գաղտնազերծեցին Սորոսի Բաց հասարակության հիմնադրամների արխիվները: Հրապարակեցին այդ արխիվներում պահվող՝ Եվրոխորհրդարանի 226 պատգամավորների անունները, որոնք ուղղակիորեն գործել էին եւ ցանկացած պահի պատրաստ էին գործել Սորոսի կամ նրա ներկայացուցիչների հրահանգներով: Միգրացիայի խրախուսում, գենդերային հավասարություն, լգբտ- ների իրավունքներ, սեռական դաստիարակություն, տարատեսակ փոքրամասնությունների իրավունքներ, աբորտներ, ծնունդների հավասարակշռության կառավարում, թմրանյութերի լեգալացում... Նույն սխեմայով աշխատում են եւ իշխանության մյուս թեւերում: Ցանկացած ազգային կառավարման համակարգ, ամենատարբեր օղակներում ներդրվում են գործակալներ, հետո այդ դրածոները հլու-հնազանդ կատարում են այն ամենը, ինչ նրանց թելադրվում է: Իսկ եթե որեւէ ազգային՝ քաղաքական կամ հասարակական գործիչ դեմ է հանդես գալիս սեփական երկրի համար քայքայիչ, կործանարար ծրագրերին, ապա անմիջապես հակահարված է ստանում այդ արհեստականորեն բուծած քաղաքական էլիտաների կողմից, որոնց արագ սատարում են ճիշտ նույն կերպ բուծած լրատվամիջոցները:

Սորոսի ֆոնդի գործունեության մասին տեղեկություն տվող մեկ այլ աղբյուր էր Հիլարի Քլինթոնի էլեկտրոնային փոստը, որը հակերային հարձակման ենթարկվեց ու պարզվեց, որ նախագահի թեկնածու, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի գործողությունների հետեւում շատ անգամ կանգնած է Սորոսը, նրա Բաց հասարակությունը ու նրանց ֆինանսները: Այդ փաստաթղթերում խոսվում է եւ տարբեր երկրներում հասարակական կարծիքը մանիպուլացնելու, բարձրագույն պաշտոնյաներին վարկաբեկելու ու ասպարեզից հեռացնելու, նորերին ուղղակիորեն նշանակելու ծրագրերի մասին, կուսակցություններ ձեւավորելու, դրանց ֆինանսավորելու ու քաղաքական դաշտ մտցնելու մասին, ի դեպ դրանց շարքում էին հունական Սիրիզան եւ իսպանական Պոդեմոս կուսակցությունները

Սորոսին ուղղակի ու անուղղակի առնչվում են ամբողջ աշխարհում արհեստական միգրացիոն հոսքեր առաջացնելու գործընթացները եւ սա նա երբեք էլ չի թաքցրել: Միլիոնավոր դոլարներ, հարյուրավոր դրամաշնորհներ, հիսունից ավել հասարակական-գիտահետազոտական կազմակերպություններ ներգրաված էին 2015 թվականին Հունաստանում միգրանտներին առնչվող հարցերի կարգավորման գործում, քանի որ միգրացիոն հոսքերը ուղղվում էին այդ երկրի միջով եւ սա ուղղակի ֆինանսավորվում էր Սորոսի եւ նրա հետ կապակցված ֆոնդերի միջոցով, գումարներ էին տրամադրվում Բժիշկներ առանց սահմանների շարժմանը, ովքեր անմիջականորեն եւ շատ ակտիվ կազմակերպում էին մարդկանց տեղաշարժը Աֆրիկայից դեպի Եվրոպա:

Սա մեծ ֆիլանտրոպի գործունեության մի փոքր մասն է միայն, բայց թերեւս սա էլ բավական է մի եզրահանգում անելու համար: Նույնիսկ Սորոսի նման մեծ «բարերարը», նույնիսկ եթե նա պաշտոնական տվյալներով երեսուն միլիարդ կապիտալի տեր է, չի կարող միայնակ այսպիսի վիթխարի՝ աշխարհի հունը փոխող ծրագրերի հեղինակը լինել. Սորոսը ներկայացնում է ինչ-որ խմբի շահեր, տարածում է շատ կոնկրետ գաղափարներ եւ իրագործում է շատ կոնկրետ ծրագրեր, ընդ որում այնպիսի ազդեցիկ խմբի, որի համար գործիք են ծառայում՝ տխրահռչակ Սորոսից բացի նաեւ շատ հեղինակավոր միջազգային կառույցներ:

Մենք վերեւում նշեցինք, որ Սորոսը Սիթիգրուպի արժեթղթերի մեծ փաթեթի սեփականատեր է: Սիթիգրուպը հանդիսանում է Ուոլ Սթրիթի ամերիկյան խոշոր չորս բանկերից մեկը: Այդ բանկերն էլ իրենց հերթին առնչվում են ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի հետ: Սորոսը չի հանդիսանում ֆեդռեզերվի գլխավոր բաժնետերերից, ինչպիսիք են Ռոդշիլդների եւ Ռոկֆելլերների ընտանիքները, Սորոսը ծառայում է նրանց, իսկ ավելի կոնկրետ, համաձայն ամերիկացի տնտեսագետ ու քաղաքական գործիչ **Լինդոն Լառուշի**՝ Ռոդշիլդների ընտանիքին:

Մի հատված Լինդոն Լառուշի EIR (Executive Intelligence Review) լրատվական ծառայության հաշվետվության հիման վրա կազմված նյութերից, որը տպագրվել է 1996 թվականի հոկտեմբերի 1-ին Վիսբադենում եւ կոչվում «Մեգա սպեկուլյան Ջորջ Սորոսի ռեզյումեն»: «Սորոսը՝ ֆինանսական միասնական հետաքրքրություններով համախմբված մարդկանց գաղտնի ցանցի երեւացող հատվածն է, այդ ցանցը ուղղակիորեն կառավարվում է Վինձորների Բրիտանական տան շուրջ համախմբված՝ Եվրոպայի առաջատար արիստոկրատական եւ թագավորական ընտանիքների կողմից: Իրենք իրենց խմբավորումը անվանում են «Կղզիների Ակումբ»: Այն ստեղծվել է բրիտանական կայսրության փլուզումից՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Իրենց աշխարհաքաղաքական ծրագրերը կյանքի կոչելու համար այս մարդիկ պետական լիազորությունները օգտագործելու փոխարեն ստեղծեցին այդ գաղտնի ցանցային կառույցը, որը միավորեց Արեւմտյան Եվրոպայի հնագույն արիստոկրատական օլիգարխիկ ընտանիքներին: «Կղզիների Ակումբի» կենտրոնը դարձավ Լոնդոնը... Այստեղ ամենակարեւորներից են Ռոդշիլդները, ում շնորհիվ էլ Սորոսը ֆինանսական շուկաներում սպեկուլյատիվ գործարքներ է իրականացնում իր «Quantum Fund NV» օֆշորային, մասնավոր, ներդրումային ֆոնդի միջոցով:

⇨11

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

# Զորավարժանքներ Նախիջեւանում

## *Ժամանակն է, որ Ռուսաստանը մտածի 1921 թ. Մոսկվայի պայմանագրի մասին*



Հունիսի 7-11-ը Նախիջեւանում անցկացվեց Թուրքիայի եւ Ադրբեջանի «Մարտական եղբայրություն-2019» զորավարժությունների վերջին փուլը մարտական հրաձգությամբ: Ադրբեջանի պաշտպանական գերատեսչության մամլո ծառայության հաղորդումների համաձայն, զորավարժանքներին մասնակցել են երկու երկրների շուրջ 5000 զինծառայողներ, ավելի քան 200 միավոր տանկեր եւ այլ զրահատեխնիկա, տարբեր տրամաչափի մինչեւ 180 հրետանային կայանքներ, համազարկային կրակի հրթիռակայանքներ եւ ականանետեր, 21 օդանավ եւ ուղղաթիռ, անօդաչու թռչող սարքեր եւ արդիական այլ զինատեսակներ ու ռազմական տեխնիկա:

Զորավարժանքներում ներգրավված են եղել առանձին համազորային բանակի ստորաբաժանումներ, Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության զանազան ուժային կառույցներ: Նպատակը եղել է շտաբների համատեղ գործողությունների մշակումը, անձնակազմի պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացումը եւ Ադրբեջանի ու Թուրքիայի ռազմական ստորաբաժանումների գործողությունների համակարգումը համատեղ խնդիրների կատարման միջոցով: Այդ մարտավարական զորավարժանքները միտված են ռազմական հրաձգության լրամշակմանը: Ըստ որում, նման զորավարժություններ Նախիջեւանում առաջին անգամը չէ, որ անցկացվում են: Պարզապես այս անգամ դրանք կատարվում էին Ադրբեջանում անցկացվող զորավարժությունների համատեքստում: Այս տարի դրանք արդեն չորրորդն էին: Երրորդն անցկացվել էր ս.թ. մայիսի 20-24-ը Ադրբեջանի տարածքում: Հենց սա է իրավիճակի գլխավոր առանձնահատկությունը:

Ադրբեջանի ներքին տարածքում անցկացվող զորավարժությունները, անկասկած, հասցեագրված են միայն Հայաստանին եւ ակնարկում են, որ Բաքուն հակված է Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծել ուժային միջոցներով: Իսկ ո՞ւմ եւ ի՞նչ են ցուցադրում Ադրբեջանից կտրված Նախիջեւանում անցկացվող զորավարժությունները: Այս կապակցությամբ ադրբեջանցի ռազմական փորձագետներից շատերը նշում են, որ պատերազմի սանձազերծման դեպքում Նախիջեւանը հարմար հենակետ է Հայաստանին հարված հասցնելու համար: Բայց այդ դեպքում նման գործողությունները կբնութագրվեն որպես նախահարձակ քայլ ՀԱՊԿ անդամ պետության դեմ: Բաքվում եւ Անկարայում հիանալի գիտակցում են, որ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ կնքված պայմանագրի համաձայն, Հայաստանում տեղաբաշխված ռուսական 102-րդ ռազմակայանը, Ռուսաստանի Դաշնության սահմանների պաշտպանությունից բացի, ապահովում է Հայաստանի սահմանների պաշտպանությունը դրանց ամբողջ երկայնքով:

Ստեղծված իրավիճակը կարոտ է այլ պարզաբանումների: Ադրբեջանը ծրագիր է մշակում, ըստ որի կձգտի ԼՂ հակամարտության կարգավորման որեւիցե տարբերակի դեպքում ապահովել Զանգեզուրի միջով ելքը դեպի Նախիջեւան եւ Թուրքիա: Ըստ որում, Նախիջեւանի աշխարհաքաղաքական իրադրությունը բավական անկայուն է: Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ ընդհանուր սահման գոյություն չունի: 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի 3-րդ հոդվածով, Նախիջեւանը մտցվեց ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ իբրեւ ինքնավար տարածք: Այդ հոդվածում ասվում է. **«Պայմանավորվող երկու կողմերը համաձայն են, որ Նախիջեւանի մարզը, որի սահմանները նշված են սույն պայմանագրի հավելվածում, կազմում է ինքնավար տարածք Ադրբեջանի հովանու ներքո՝ պայմանով, որ Ադրբեջանը սույն պրոտեկտորատը չի զիջի երրորդ պետության»**: Այդ պայմանագիրը դեռ ոչ ոք չեղյալ չի հայտարարել: Ահա թե ինչու Արցախի հիմնահարցը վաղուց դադարել է տեղային բնութագիր ունենալուց: Հակառակ դեպքում այն վաղուց արդեն լուծված կլիներ: Ներկայումս այն դարձել է միջազգային հարց, որով զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, որը, դատելով ըստ ամենայնի, միջանկյալ բնույթ է կրում: Այսինքն, Արցախի ուղղությամբ Բաքվի գործողությունները շրջափակվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից, իսկ Նախիջեւանի ուղղությամբ՝ 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով: Նման կառուցվածքի բեկումը անկանխատեսելի հետեւանքներ կարող է ունենալ ամբողջ տարածաշրջանի համար: Տարօրինակությունն այն է, որ եթե Ադրբեջանը տարբեր պատճառներով կորցրել է իր տարածքի 20 տոկոսը, ապա ավելի ուշ Թուրքիայում իրադրությունը արմատապես փոխվել է: ԱՄՆ-ը միանշանակ կերպով շեշտը դնում է քրդերի վրա եւ գործը հանգեցնում է այդ երկրում դաշնապետության ստեղծմանը: Այդ դեպքում կարող է սկսվել քրդերի շրջափակում՝ ռազմակայան ստեղծելով Նախիջեւանում:

Գոյություն ունի եւս մեկ գործոն, որի մասին Բաքվին նախազգուշացնում են իր քաղաքագետները՝ նշելով ռեալ աշխարհաքաղաքական վտանգները, որոնք կապված են ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի իրանական քաղաքականության հետ: Թեհրանը բացասաբար է ընկալում Նախիջեւանում Թուրքիայի ակտիվ ռազմական ներկայության փաստը: Ռուսաստանցի ռազմական փորձագետների կարծիքով, պատահական չէ, որ երբ 2016 թ. սկսվեց Արցախի դեմ ուղղված ապրիլյան քառօրյա պատերազմը, Իրանը պատրաստակամ էր գործի դնել Հայաստանի հետ ռազմական գործողությունների պայմանագիրը: Դա նշանակում է, որ Իրանը պատրաստ էր օրակարգում դնել նաեւ Նախիջեւանի շրջափակման հարցը, որի գոյությունն ապահովվում է Իրանի տարածքով: Այդ ժամանակ միջանցք կբացվեր Նախիջեւանի եւ Թուրքիայի միջեւ, ինչը կհանգեցներ հակամարտության աշխարհագրական ընդլայնմանը: Ո՞վ է հավանական հակառակորդը՝ Ռուսաստանը, Հայաստա՞նը, թե՞ Իրանը, հարց է տալիս Կովկասի եւ Մերձավոր Արեւելքի հարցերի փորձագետ **Ստանիսլավ Տարասովը**: Ներկա փուլում առայժմ անհնար է կանխատեսել իրադարձությունների զարգացումը:

Անկարան այժմ ունի ուրիշ աշխարհաքաղաքական գերակայություններ, որոնք կապված են Սիրիայի ռազմական հակամարտության կարգավորման տարբեր կողմերի հետ: Դրան անհնար է հասնել առանց Ռուսաստանի եւ Իրանի հետ ստեղծված դաշինքի պահպանման: Ահա թե ինչու Նախիջեւանում Թուրքիայի եւ Ադրբեջանի համատեղ զորավարժությունները առաջացնում են տարաբնույթ զգացողություններ, եթե նկատի ունենանք դրանց պատճառական հիմնավորումները:

# Եվրոպան մուրճի եւ զնդանի միջեւ

## *Թրամփի պատժամիջոցների հետեւանքները*

Մոսկվայի եւ Պեկինի միջեւ դաշինքի ձեւավորման մեջ մեծ մասամբ մեղավոր է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը իր տնտեսական քաղաքականությամբ հանդերձ: Ինչպես գրում է Handelsblatt թերթը, առավելագույն ճնշման քաղաքականությունը եւ խիստ պատժամիջոցներն ու մաքսատուրքերը հանգեցնում են այն բանին, որ այն պետությունները, որոնց նախագահ Թրամփն ուզում է ծնկի բերել, հեռանում են ԱՄՆ-ից եւ դաշինքներ կնքում ուրիշ պետությունների հետ: Հենց այդ երեւույթը արձանագրվեց օրերս Սանկտ Պետերբուրգում, որտեղ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հանդիսավոր պայմաններում ընդունեց եւ հանդիպում ունեցավ Չինաստանի ղեկավարների հետ:

Ինչպես նշում է հրատարակությունը, նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Սի Ցզինպինի համագործակցությունը եւ գործընկերային հարաբերությունները Դոնալդ Թրամփի արտաքին քաղաքականության հակակշիռն են: Մինչ Վաշինգտոնն արգելել է եւ մյուս պետություններին էլ հորդորում է ձեռնպահ մնալ չինական Huawei ընկերության հետ համագործակցելուց, Ռուսաստանի շարժական օպերատոր -ը պատրաստվում է ընդլայնել իր 5G կապը չինական կոնցեռնի հետ:

Բացի դրանից, Չինաստանի պետական էներգետիկ կոնցեռնները հեղուկ գազի հետ կապված միլիարդներ են ներդնում ռուսաստանյան նախագծերում: Դա ոչ միայն գազով է ապահովում Չինաստանը, այլեւ չինացիներին հնարավորություն է տալիս Կրեմլին մոտիկ կանգնած խոշոր ընկերություններում իրենց ներդրումների շնորհիվ խափանել Թրամփի ռազմավարությունը, որը ձգտում է աշխարհին ամերիկյան գազ վաճառել:

Մի կողմից ԱՄՆ-ի, եւ մյուս կողմից Ռուսաստանի ու Չինաստանի «ռազմաճակատների» միջեւ լարվածությունը հետզհետե ավելի է խորանում, իսկ այդ ճակատների արանքում Գերմանիայի քաղաքականությունն է եւ գերմանական ընկերությունները: Եվրոհանձնաժողովը եւ Դաշնային հանձնաժողովը ուզում են, որ գերմանական ընկերություններն ավելի շատ հեղուկ գազ գնեն ԱՄՆ-ից, ինչի շնորհիվ հույս ունեն խուսափել եվրոպական արտադրանքի եւ մասնավորապես ավտոմեքենաների վրա ԱՄՆ-ի մեծ մաքսատուրքերի սահմանումից: Սակայն գերմանական մատակարարներից շատերը սերտորեն կապված են ռուսական «Գազպրոմի» հետ, «Հյուսիսային հոսք-2» գազամուղի շինարարության ապագա սպառողներ են կամ դրա շինարարության խոշոր ներդրողներ: Այդ ընկերությունները հայտնվել են ասես մուրճի եւ զնդանի միջեւ, նրանք զգում են ինչպես Դոնալդ Թրամփի պատժամիջոցների քաղաքականության, այնպես էլ ռուս-չինական գրկախառնության հետեւանքները, արձանագրում է հոդվածագիրը:

Ա. ՔԵՇԻՇՅԱՆ

# Լինել սորոսական՝ նշանակում է լինել ապազգային ...

⇨10

Համաձայն որոշ տվյալների, Սորոսը կառավարում է ներդրողների 11-14 միլիարդ կապիտալը ու այդ ներդրողների մեջ ամենահայտնին, հենց իր՝ Սորոսի վկայությամբ, թագուհի Եղիսաբեթն է: «Quantum Fund»-ը գրանցված է օֆշորներում, ինչի շնորհիվ խուսափում է հարկերից, գաղտնի են ներդրողների անունները, նաեւ նպատակները, նաեւ այն, թե որտե՞ղ ու ինչի՞ համար են ծախսվում այդ գումարները»:

Բոլոր նրանք, ովքեր բիզնես հարաբերությունների մեջ են Սորոսի հետ պնդում են, որ նա երբեք լուրջ ներդրումային ծրագիր չի իրագործում առանց փակ ու հավանաբար քաջատեղյակ աղբյուրներից տեղեկություն ստանալու: Նման պնդումներ է անում նաեւ ռուս հայտնի տնտեսագետ **Վալենտին Կատասոնովը**՝ «Սորոսի ֆինանսական հաջողությունները արդյունք են նրա մտերմիկ կապերի այն շրջանակների հետ, որոնց անվանում են «Փողի տերեր», դա իհարկե ֆեդռեզերվի բաժնետերերն են, որոնց ձեռքում է գտնվում է փող տպելու հաստոցը: Տպելով այնքան փող որքան տերերը ուզում է՝ նրանք խնդիր ունեն այդ փողերը ճիշտ բաշխելու ու ներդնելու», ինչով էլ զբաղվում է արդեն տխրահռչակ Սորոսը: Դա է պատճառը, կարծում է Կատասոնովը, որ Սորոսի մոտ միշտ եղել է այնքան գումար, որ հնարավոր է եղել կազմակերպել ցանկացած երկրի ազգային արժույթի արժեզրկումը, իսկ այս գործողությունը կազմակերպելու համար իսկապես մեծ գումարներ են անհրաժեշտ համարժեք զոհի կարգավիճակում հայտնված երկրի կենտրոնական բանկում եղած գումարներին: Այստեղ կա մի նուրբ պահ, շարունակում է Կատասոնովը, մարդիկ ովքեր տիրապետում են փող տպող հաստոցին, փողի կարիքը չունեն, Սորոսը ունի, նա ազարտ խաղացող է, պատրաստ է քաոս առաջացնել աշխարհի որեւէ կետում իր գումարները բազմապատկելու համար, փողի տերերին նույնպես անհրաժեշտ են քաոսային իրավիճակներ, բայց լրիվ այլ նպատակներով՝ ազգային պետությունները խարխլելու, քանդելու եւ իրենց իշխանությունը ամբողջ աշխարհի վրա տարածելու համար»:

Այսօր, երբ վերլուծում ենք մեր երկրում ստեղծված իրավիճակը, թերեւս կարող ենք պնդել, որ մեր բարձրագույն իշխանավորներից առնվազն մեկը սերտորեն շփվում է վերը նշված շրջանակների հետ: Իշխանափոխությունից հետո, մեղմ ասած, Հայաստանը ամբողջովին հասանելի դարձավ այս ուժերի համար: Երկրում տեղի ունեցող փոփոխությունները լրիվ համահունչ են աշխարհի գլոբալ վերափոխման ծրագրերին, այդ փոփոխությունները շատ խորքային են, շատերը մենք չենք էլ նկատում, եւ դժբախտաբար մեծանում է այն համոզմունքը, որ այդ փոփոխությունները ուղղված են մեր պետականության դեմ, ազգային-ավանդական-արժեքային համակարգի դեմ եւ ընդհանրապես հակամարդկային են:

# Եվս մեկ ընտանիք կզգա սեփական տուն ունենալու երջանկությունը

Այս տարի արդեն երկրորդ անգամ, ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ «Ֆուլեր տնաշինական կենտրոն»-ի ղեկավարներն ու աշխատակիցները համախմբվել են ընդհանուր գաղափարի շուրջ՝ կամավորական աշխատանքի միջոցով օգնելու եւս մեկ ընտանիքի, այս անգամ՝ Կոտայքի մարզի Գեղարդ գյուղում բնակվող Գասպարյաններին:

Բազմամյա համագործակցության շնորհիվ ավելի քան 170 ընտանիք արդեն իսկ ապահովված է սեփական բնակարանով:

Խաչատուր Գասպարյանը իր ընտանիքի հետ բնակվում է հայրական տանը՝ ութ հոգով մեկ հարկի տակ: Տունը փոքր է մեծ ընտանիքի համար, եւ Գասպարյանները սկսել էին կառուցել իրենց սեփական տունը: Սակայն ֆինանսական խնդիրների պատճառով տան շինարարությունը մնացել էր անավարտ: Տարիներ շարունակ ընտանիքը փորձել է ավարտին հասցնել կիսակառույցի շինարարությունը, սակայն բոլոր ջանքերն անօգուտ են եղել: Նրանք կարողացել են կառուցել միայն պատերը եւ տանիքը:

«Արդեն երեք տարի է մենք փորձում ենք ավարտել շինարարությունը եւ տեղափոխվել նոր տուն: Ընտանիքի եկամուտը բավականացնում է միայն ամենօրյա կենցաղային խնդիրների համար: Ամուսնուս եղբայրը չի կարող մտածել ամուսնության մասին, քանի որ տանը տեղ չկա: Եթե նույն տեմպերով շարունակեինք, շատ երկար տարիներ հարկավոր կլիներ տան շինարարությունը ավարտելու համար»,- ասել է **Նառան՝** Խաչատուրի կինը:

«Մեր ընկերությունը «Ֆուլեր տնաշինական կենտրոն»-ի հետ համատեղ շարունակում է կանգնել այն ընտանիքների կողքին, ովքեր ունեն իրենց կացարանի շինարարությունն ավարտին հացնելու կամք, բայց չունեն բավարար միջոցներ: Մենք մեծ կարեւորություն ենք տալիս նմանօրինակ ծրագրերի իրականացմանը՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի առաքելություններից մեկը համարելով մեր երկրի կարիքավոր ընտանիքներին աջակցելը: Այս ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը դրսեւորվում է նաեւ շինաշխատանքներում ՎիվաՍել-ՄՏՍ-ի ու «Ֆուլեր»-ի աշխատակիցների կամավոր ներգրավումով: Այս տարի երկրորդ անգամ ենք կամավորագրվում տուն կառուցելու գործին: Աշխատակիցների ոգեւորությունը ցույց է տալիս, որ այս տարի եւս կամավորական աշխատանքները շարունակական բնույթ կրելու»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Համագործակցության շրջանակներում միայն Կոտայքի մարզում կառուցվել է 11 տուն:

Գործընկեր կառույցներից տասնյակ կամավորներ միացել էին Գասպարյաններին՝ շինարարական աշխատանքներին մասնակցելու նպատակով: Նրանք կատարել են հատակների բետոնացման աշխատանքներ:

# Երեւանում կմեկնարկի 16-րդ «Ոսկե ծիրանը»

**Ամռանը հայաստանյան մշակութային կյանքը կակտիվանա սպասված եւ նշանավոր իրադարձությամբ. հուլիսի 7-ին կմեկնարկի 16-րդ «Ոսկե ծիրանը»: Հայաստանում սիրված ու նաեւ երկրի սահմաններից դուրս լայն ճանաչում գտած այս բացառիկ կինոփառատոնի մեկնարկն այսօր ազդարարել են «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն ու կինոփառատոնի գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ-ը:**



**Համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում միջոցառման կազմակերպիչները լրագրողներին ներկայացրել են կինոփառատոնի՝ այս տարվա պաշտոնական պաստառը, ինչպես նաեւ անդրադարձել են սպասվող միջոցառումներին:**

**«Այս տարի փառատոնը որոշակի փոփոխություններ է կրել, քանի որ փոխվել է փառատոնի ղեկավար կազմը: Փառատոնի կազմը համալրել են երիտասարդներ, որոնք մեծ պատասխանատվությամբ են պատրաստվում 16-րդ «Ոսկե ծիրանին» եւ անում են ամեն ինչ՝ այն իսկապես կինոտոն դարձնելու համար: Փոփոխություններ են եղել նաեւ գերատեսչությունների համատեքստում. տեղի է ունեցել նախարարությունների միավորում, եւ այսուհետեւ մենք համագործակցելու ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ: Չի փոխվել մեր գլխավոր գործընկերը՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը: Ընկերությունն արվեստի՝ մասնավորապես՝ կինոյի եւ «Ոսկե ծիրանի» նվիրյալներից է, ինչի համար մենք շատ ուրախ ենք եւ շատ շնորհակալ մեր փառատոնի լավագույն բարեկամին»,- իր խոսքում ընդգծել է Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հիմնադիր նախագահ Հարություն Խաչատրյանը:**

**«ՎիվաՍել-ՄՏՍ-ը մեծ կարեւորություն է տալիս մշակութային կյանքի, մասնավորապես՝ ազգային կինեմատոգրաֆի, ակտիվացմանն ու զարգացմանը Հայաստանում: Տարիներ շարունակ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակում մեր ընկերությունը կանգնած է կինոգործիչների կողքին: Կինոարվեստի զարգացման կարեւոր խթան լինելու հետ մեկտեղ, կինոփառատոնը իսկայական աշխատանք է տանում աշխարհի քարտեզի վրա Հայաստանը որպես հարուստ մշակույթ ունեցող երկիր ճանաչելի դարձնելու գործում»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Միջազգային կինոփառատոնն աշխարհի տարբեր երկրներից ստացել է մասնակցության ավելի քան 740 հայտ, ինչպես նաեւ ընտրվել են մի շարք կինոնկարներ աշխարհի հեղինակավոր կինոփառատոններից՝ Կաննից, Բեռլինից, Ռոտերդամից: Փառատոնն ունենալու է միջազգային լիամետրաժ (խաղարկային եւ վավերագրական), ինչպես նաեւ կարճամետրաժ ֆիլմերի տարածաշրջանային մրցույթներ, իսկ արտամրցութային ծրագիրը ներառելու է «Տարածաշրջանային համայնապատկեր» մրցույթը: Մնացած ծրագրերը ոչ մրցութային են. դրանք են՝ «Երեւանյան պրեմիերաներ», «Հետահայաց ցուցադրություններ», «Հարգանքի տուրք»:**

**«Ոսկե ծիրանն» այս տարի ունի նաեւ նոր տարբերանշան, որն արտահայտում է փառատոնի նոր կազմի ինքնատիպ մոտեցումը 16-րդ տարին անցկացվող իրադարձությանը: Այն մինիմալիստական է, ներկայացնում է հայերեն «Ծ» տառը: Այդ տառի միջոցով լոգոյի հեղինակը փորձել է ստանալ փառատոնի խորհրդանիշ համարվող ծիրանը:**

# «+3ԳԲ» ինտերնետ փաթեթ՝ «Viva» սակագնային պլանի բոլոր բաժանորդների համար

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ այսուհետ «Viva» սակագնային պլանի կանխավճարային եւ հետվճարային բաժանորդները կարող են ավելացնել 3ԳԲ ինտերնետ իրենց սակագնային պլանի հիմնական փաթեթին՝ պարզապես ուղարկելով *888*1# հրահանգը: «+3ԳԲ» ինտերնետ փաթեթի գինը՝ 500 դրամ:**

| Գործողություն | USSD հրահանգ |
|---|---|
| Ակտիվացում | *888*1# |
| Ծառայության կարգավիճակի եւ օգտագործած ինտերնետի ծավալի ստուգում | *888# |

## Ծանոթություններ

**❖ Սակագնային պլանում ներառված ակտիվ ինտերնետային փաթեթ ունենալու դեպքում՝ նախ սպառվում են ներառված փաթեթով տրամադրվող ինտերնետը, այնուհետեւ, «BIT 1» կամ «Super BIT» ծառայություններն ակտիվացված լինելու դեպքում՝ այս ծառայություններով տրամադրվող ինտերնետը, եւ միայն դրանից հետո՝ ակտիվացված «+3ԳԲ» ինտերնետի փաթեթը:**

**❖ Հավելյալ ինտերնետի փաթեթը կանխավճարային բաժանորդների համար հասանելի է սակագնային պլանի փաթեթների գործողության 30 օր ժամկետի ընթացքում, իսկ հետվճարայինների համար՝ մինչեւ ընթացիկ ամսվա ավարտը:**

**❖ «+3ԳԲ» ինտերնետ փաթեթ ակտիվացնելիս այն գումարվում է սակագնային պլանում ներառված ինտերնետային փաթեթի մնացորդին:**

**❖ «Viva» կանխավճարային բաժանորդների համար սակագնային պլանի ակտիվ փաթեթների գործողության 30 օր ժամկետի ընթացքում, իսկ հետվճարայինների համար՝ մինչեւ ընթացիկ ամսվա ավարտը, «+3ԳԲ» ինտերնետ փաթեթը նորից կարելի է ակտիվացնել՝ այն սպառած լինելու դեպքում:**

**❖ «Viva» կանխավճարային բաժանորդների համար սակագնային պլանի ակտիվ փաթեթների գործողության 30 օր ժամկետի ընթացքում, իսկ հետվճարայինների համար՝ մինչեւ ընթացիկ ամսվա ավարտը, «+3ԳԲ» ինտերնետ փաթեթը նորից կարելի է ակտիվացնել նաեւ 20ՄԲ-ից պակաս մնացորդ ունենալու դեպքում. այս դեպքում մնացորդը կզրոյանա:**

**❖ «+3ԳԲ» ինտերնետ փաթեթն ակտիվացնելիս հաշվին բավարար գումար չլինելու դեպքում կանխավճարային բաժանորդները կարող են օգտվել «Լիցք+» ծառայությունից:**

**«+3ԳԲ» ինտերնետ փաթեթ. ավելացրո՛ւ քո «Viva» սակագնային պլանի ինտերնետը:**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար ցանցային լրատվամիջոցների մոնիթորինգ իրականացնող կազմակերպության ընտրության բաց մրցույթ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու նպատակով ցանցային լրատվամիջոցների մոնիթորինգ իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Բաց մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2. մասնագիտական փորձառություն.
3. տեխնիկական միջոցներ.
4. ֆինանսական միջոցներ.
5. աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2019թ. հուլիսի 18-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2019թ. հուլիսի 18-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2019թ. հուլիսի 25-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին 18-02, 18-05:

ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԷՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960,
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 13.6.2019, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.QXD 13/06/2019 18:31 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 23(435)
14 ՀՈՒՆԻՍ
2019

Արծուի ԲԱԽՉԻՆԵԱՆ

ԿՈՄԻՏԱՍ 150

# Մի անտիպ յուշ Կոմիտասի համերգի մասին

**Կոմիտաս Վարդապետի` 1913 թուականի համերգներից մէկի մասին ստորեւ ներկայացվող յուշ-պատառիկը վերցուած է արձակագիր Պայծառ Երկաթի «Գողտրիկ յուշեր ու սուր փշեր կամ Մի դերբուկ ճանապարհ» անտիպ յուշագրությունից:**

**Գրող, սիրող դերասանուհի Պայծառ Երկաթը (Աստղիկ Տեմիրճեան, 1888, Չոմաքլու - 1988, Երեւան) կրթութիւնն ստացել է Գում-Գաբուի ազգային վարժարանում 1906 թ. ամուսնու հետ մեկնել է Ադաբազար, որտեղ օսմանեան սահմանադրութեան հռչակումից յետոյ եռանդուն մասնակցութիւն է ունեցել տեղի կրթական-թատերական կեանքին Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ վերադարձել է Պոլիս, 1923 թ. մեկնել է Եգիպտոս, ունեցել թատերական գործունէութիւն Որպէս դերասանուհի մասնակցել է հայ բեմի մեծ դերասանուհի Սիրանոյշի կեանքի վերջին տարիների ներկայացումներին 1948 թ. ներգաղթել է Հայաստան Գրել է իր յիշողութիւնները, որոնք լոյս են տեսել Երեւանում, 1956 թ., «Մտերիմ խոհեր» վերնագրով: Համիդեան կոտորածները յիշող հայուհին կեանքի վերջին տարում տեղեկացել է Սումգայիթի ջարդերի մասին եւ վախճանուել Սպիտակի երկրաշարժից մի քանի ամիս առաջ...**

**«Գողտրիկ յուշեր ու սուր փշեր կամ Մի դերբուկ ճանապարհ» յուշագրության ձեռագիրը մեզ է տրամադրել Երկաթի թոռնուհին` բալէտի պարուհի, Հայաստանի վաստակաւոր արտիստուհի Աննա Մարիկեանը Այս արժէքաւոր ստեղծագործութիւնը առաջիկայում մտադիր ենք հրատարակել առանձին հատորով:**

## Պայծառ Երկաթ

### Գողտրիկ յուշեր ու սուր փշեր կամ Մի դերբուկ ճանապարհ

*(հատուած)*

Եւ ի՞նչ կարող էր լինել իմ տրամադրութիւնը` աչքի առաջ ունենալով այս հեռանկարը, երբ փոքր եղբայրս ուրախ-ուրախ մօտենում է ինձ` ձեռքին բռնած մի յայտագիր եւ ասում է ինձ.

-Կոմիտաս վարդապետը համերգ ունի Միշըն Ամերիքէնի մէջ:

Ինչպէ՜ս կը խլեմ յայտագիրը նրա ձեռքից ու կը վազեմ Միհրանի մօս:

-Միհրա՛ն, Կոմիտաս վարդապետը համերգ ունի այստեղ, Գում-Գաբուի մէջ, կ երթանք, չէ՞, կ երթանք, անպայման կ երթանք, ինչքան էլ զբաղուած ենք` չենք փախցնի այս առիթը: Վերջապէս բախտը ժպտաց, երեւակայէ՛, իմ Ատաբազար եղած ատենս համերգ կ ունենայ Պոլսում` երբ Պոլիս եմ գալիս` լսելու նրան, նոյն օրը նա գնում է Ատաբազար` շարունակելու համար իր երկու հարիւր հոգինոց խմբերգի համերգը... Հիմա այս առիթը... ընդմիջում է, եղբայրս

-Չենք փախցնի, չենք փախցնի, կ երթա՛նք, քոյրի՛կ, կ երթանք, կը լսես նրան... դու, որ խենթն ես երգի, երաժշտութեան, կարելի՞ է փախցնել այս առիթը: Կ երթանք, կլսես նրան, յետոյ ես էլ կը լսեմ քո կարծիքը:

Ու գնում ենք դէպի Միշըն Ամերիքէն: Հոգեկան ի՜նչ հրճուանքով քայլում եմ ճանապարհին: Նախ` որ քայլում եմ նորաւարտ բժիշկ եղբօրս կողքից, յետոյ` լսելու եմ հռչակաւոր երգչին...

Ուշացել ենք մի քիչ: Սկսած է համերգը: Փակ է սրահի դուռը, բայց որոշ չափով լսւում է երգողի ձայնը: Մտիկ եմ անում` մինչեւ եղբօրս տոմսը վերցնելը ու մի քիչ հիասթափուած կարծես, կամացուկ ասում եմ. «Ա՜յս է Կոմիտասը»: Եղբայրս նայում է ինձ, մտնում ենք սրահ... բայց երբ հետեւում եմ նրա երգեցողութեան, ճաշակում եմ նրա ապրումները, նկատողութեան եմ առնում այն նրբութիւնները, որոնցմով նա ապրում էր իր տենչերը, այն ատեն միայն իմանում եմ, թէ ի՛նչ ասել էր Կոմիտաս: Ով չէ լսել նրան, չի կարող ըմբռնել նրա երգի կախարդական ուժը Չի կարող իմանալ, թէ նա ինչպէս կարող էր իր երգերով ունկնդիրներին տալ հայ ժողովրդի ամբողջ պատմութիւնը: Կոմիտասը եղել էր հեղինակը ժողովրդական երգերի, բայց առաւելապէս եղել էր, իր երգեցողութեամբ, ժողովրդի յոյսերի, յուզումների, ուրախութեան ու տառապանքների թարգմանը, բուն երգիչը: Այդ օրը, երբ Կոմիտասը երգում էր. «Կռո՜ւնկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ», ունկնդիրներու զգում էինք, որ մի ղարիպ վազում էր կռունկի ետեւից եւ աղերսում էր մի խապրիկ իր աշխարհից... Երբ ասում էր`





*Թողել եմ ու եկել մլքերս ու այգիս,*
*քանի որ ա՜խ կանեմ, կու քաղուի հոգիս...*

իսկոյն ըմբռնում էին, որ թշնամիների ոտնակոխ, թալանուած մի ժողովուրդ էինք: Ու երբ շարունակում էր իր երգը` ասելով

*Աստուա՛ծ, քեզնէ խնդրեմ միւրվէթ ու քերեմ,*
*Ղարիպին սիրտն է խոց, ճիկեարն է վերեմ...*

Անմիջապէս իմանում էինք, որ հայ ժողովուրդը յոյսը կտրած ամէն կողմից, դիմում էր անծանօթին` նրանից սպասելով իր խոցուած սրտի սպեղանին: Իսկ երբ վերջին անգամ դիմելով հեռացող կռունկին, խնդրում էր`

*Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս...*

մենք մագնիսացած հետեւում էինք նրա ձայնին, որ ալիք-ալիք թռչելով կռունկի ետեւից` ուզում էր անպայման նրանից խլել մի խապրիկ, եւ հեռանալո՜վ, հեռանալո՜վ, մեռնում էր անհունի ծոցին...

Կոմիտասը աւարտած էր իր երգը, բայց նրա թռչող, անհետացող ձայնը կարծես լսում էինք դեռ: Պահը կախարդական էր.. եւ ահա որոտում է դաշնամուրը, ու սկսում է երգիչը.

*Ջա՜ն տուր, ո՜վ ծովակ, ինչո՞ւ ես լռում ...*
*Ողբակից լինել չկամի՞ս թշուառիս...*

Այս անգամ Կոմիտասը իր երգով հրամայում է ու պահանջում, իսկ ծովը իր թեթեւ կոհակներով զուարճանում է նրա պահանջի հետ, պչրանքներով օրօրում է նրա վիշտը... Կոմիտասը ոչ թէ երգում էր իր ձայնով հանդիսականների ուշադրութիւնը գրաւելու համար, այլ իր երգերով խօսում էր նրանց հետ, պատմում էր կեանքից, լուսաբանում էր մարդկանց ու մտածել էր տալիս ապագայի մասին: Նա մեզ համար երգեց նաեւ «Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի գարուն է», ու երբ երգում էր, մենք չէինք զգում, որ նա քանի չափ երկարացնում էր իր «կանչէ»ն, այլ իմանում էինք, որ գարուն էր, եւ կռունկը ուրախ-ուրախ վերադառնում էր իր բոյնը:

Ու երբ շարունակում էր` «ղարիպներուն սիրտը գունդ-գունդ արուն է», զգում էինք, որ լուսաւոր աշխարհում մարդիկ մահ են գալիս խոցուած սրտով: Այո՛, բաւական չէ, որ երգիչը իր գեղեցիկ ձայնը ցուցադրէ միայն հանրութեանը: Ձայնը բնութիւնից տրուած մի շնորհ է, մի միջոց: Երգիչը պարտաւոր է լաւագոյն կերպով օգտագործելով այդ միջոցը` շնորհալիօրէն մտնէ ունկնդիրների էութեան խորը, թրթռացնէ նրանց հոգին, սիրտը եւ մշակէ մտքերը:

Կոմիտասը զգում էր, թե երաժշտութիւնը լեզուն էր հոգեկան բոլոր ձգտումներին, թարգմանն էր յոյսերի, յուզումների, վերջապէս թարգմանն էր բոլոր այն ապրումներին, որոնք զգում է մարդ իր մէջ, եւ այդ բոլորը դնելով նա իր ձայնի ելեւէջների մէջ` ունկնդիրը փոխադրում էր այնտեղ, ուր ուզում էր տանել: Նրա ձայնը իրապէս չնաշխարհիկ ձայն չէր: Նա գիտէ՛ր երգել, գիտէր իր վշտին, իր ուրախութեան հաղորդակից անել հասարակութիւնը, գիտէր, թէ ինչո՞ւ եւ ո՞ւմ համար էր երգում:

Այս համերգը տեղի ունեցաւ 1913 թուին, որմէ յետոյ, մի ամսուայ ընթացքին հրագործուեցին մեր ընտանիքի անդամների մասին մտածուած որոշումները, ու ամէն մէկը գնաց իր ճանապարհով:

# «Գրան պրի»` հայկական կինոնկարին



Խանտի-Մանսիյսկում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Փրկել եւ պահպանել» 23-րդ Միջազգային բնապահպանական փառատոնի «Գրան պրիին» արժանացել են երեւանցի երիտասարդ կինոգործիչներ **Մանե Բաղդասարյանը** եւ **Արարատ Գրիգորյանը** **«Ճայը»** շարժանկարի համար: «Ոսկե սուզահավ» մրցանակը նրանց տրվել է «Լավագույն ռեժիսորական աշխատանք» անվանակարգում:

Ֆիլմի գլխավոր խնդիրը մարդկության կողմից շրջապատող աշխարհի կրած բացասական փոփոխություններն են: Կինոնկարը տագնապ է հնչեցնում, որ բազմաթիվ կենդանիներ ու այլ արարածներ շատ շուտով անհետանալու վտանգի առաջ են կանգնած, եւ դրանց պահպանումն ուղղակիորեն կախված է մարդուց:

Մինչեւ հիմա «Ճայը» օպերատորական աշխատանքի համար հատուկ դիպլոմի է արժանացել Յարոսլավլի մարզում կայացած «Լույս Աշխարհին» միջազգային կինոփառատոնում:

Հիշեցնենք, որ Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի անցած տարվա շրջանավարտ Մանե Բաղդասարյանի առաջին` «Ադապտացիա» կինոնկարը (2018) հասցրել է մրցանակների եւ պարգեւների արժանանալ տասնյակ միջազգային կինոփառատոներում: Նույն ուղին ենք մաղթում նաեւ «Ճային»:

**Ա. Բ.**

AZG NEW MSHAKUIT.QXD 13/06/2019 18:31 Page 2



ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

# Մեռածների հետեւից՝ միայն ճիշտը

Շաբաթներ առաջ մտերիմներիցս մեկի մոտ պատահաբար տեսա «Հայ նորագույն գրականություն» կոչվող մի ուսումնաօժանդակ ձեռնարկ-մատենաշարի հերթական հատորներից մեկը՝ **Նաիրի Զարյան**:

Նախ՝ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից երաշխավորված որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ համարվող այս բրոշյուրի որեւէ հատվածում գրված չէ՝ այն ուսանողի՞, աշակերտի՞, թե՞ մանկավարժի համար է նախատեսված: Նվեր Վիրաբյանի ու Գայանե Գրիգորյանի կազմած այս ձեռարկում կարելի է գտնել բազմաթիվ վրիպակներ, որոնցից ամենաանհամեստն ու ,արդեն ոչ ուղղակի վրիպակը՝ բանաստեղծի հայտնի «Հայոց լեզուն» գազելի 6-րդ տանը կատարված «կոսմետիկ վերանորոգությունն է»: Իրականում Ն. Զարյանը գրել է այսպես.

**«Քանի՜ ցեղեր ցամաքեցին, ինչպես հեղեղն ավազի մեջ,**

**Բայց լենինյան ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն»:**

Նորին մեծություն խմբագրակազմը որոշել է, որ հիմա Լենինը նորաձեւ չէ, եւ որոշել է «լենինյան» բառը հանել ու առաջացած բացը փակել «նոր դարի» բառակապակցությամբ.

**«Քանի՜ ցեղեր ցամաքեցին, ինչպես հեղեղն ավազի մեջ,**

**Բայց նոր դարի ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն»:**

Այս խմբագրական անբարեխղճությունն արդեն խոսում է ձեռնարկի, մեղմ ասած, ո՛չ այնքան հավաստի լինելու մասին: Որովհետեւ կոպիտ միջամտություն է կատարվել, որը՝ խմբագրական միջամտություն անվանել չի կարելի, դա բանաստեղծության գաղափարի, ինչպիսին էլ որ այն լինի, տրոհում է, արհեստականացում: Ինչեւէ, անցնենք հաջորդին.

Գրքույկում բացառապես դրական երանգներով ներկայացված է Նաիրի Զարյանի կենսագրությունը, անդրադարձ է կատարված նրա ստեղծագործական կյանքին, հատկապես՝ հանրահայտ «Արա Գեղեցիկ» պոեմին: Վերջում զետեղված է Ռուբեն Զարյանի հուշը՝ բանաստեղծի մասին: Թե ինչու միայն Ռ. Զարյանինը, թող խմբագրակազմը պատասխանի այդ հարցին:

Մի խոսքով, այս ուսումնաօժանդակ ձեռնարկ կոչվածը ոչ այլ ինչ է, քան՝ լուսապսակ Նաիրի Զարյանի համար:

Ես չեմ պաշտպանում այն տեսակետը, թե՝ մեռածների հետեւից՝ կամ լավը կամ ոչինչ, ոչ եւ երիցս ոչ. մեռածների հետեւից միայն ու միայն ճիշտը: Իսկ ո՞րն է գլխավոր ճիշտը Ն. Զարյանի մասին, որը «խմբագրական խնամատարության» հետեւանքով դուրս է մնացել ձեռնարկ կոչվածից:

Ինչ խոսք, Նաիրի Զարյանն իր շրջանի ալեւելահայ բանաստեղծական լեզուն գրեթե տերյանական մակարդակի հասցրած մի գրող է, փաստ, որը ոչ ոք չի ժխտում եւ իրավունք էլ չունի ժխտելու, մարդը կարողացել է մաքուր պահել իր գրական լեզուն, ցավոք, միայն գրականը...

Եթե այս ձեռնարկն ստեղծված է դպրոցականների կամ ուսանողների համար (դատում եմ ձեւի, նույթի եւ շարադրանքի մակերեսային լինելուց), ապա ինչո՞ւ են երեխաներից թաքցված կարեւոր փաստեր, ինչո՞ւ գրված չէ նաեւ այն, ինչը գոնե հիմա, բոլորը պարտավոր են իմանալ: Ի՞նչ ենք թաքցնում մեր երեխաներից: Ինչո՞ւ ենք թաքցնում, ստի ու կեղծ հերոսականության մե՞ջ ենք պատրաստվում դաստիարակել մեր երեխաներին:

Օրինակ, երբ ձեռնարկում խոսվում է Զարյանի գրական ժառանգության մասին, եւ երբ բերվում են օրինակներ, ինչու է մոռացվում նրա, ասենք, «Գրական սերունդի» 1936թ. 4-րդ համարում գրած **«Նացիոնալիստը հայ գրողի դիմակի տակ»** հոդվածը, որտեղ երկու նախադասության մեջ Զարյանը ցեխ է նետում երեք մեծանուն գրողների ուղղությամբ.

**«Բակունցը ոչ միայն մազաչափ անգամ չի բարձրանում Րաֆֆու ռասսայական թրքատեցությունից, այլեւ մի աստիճան ավելի խորն է թաղվում անասնական շովինիզմի թունավոր ճահիճը:**

**Ահարոնյանական սենտիմենտալ ոճով գրված այդ լղարիկ հատվածներում չկա իրական կյանքի ոչ մի նշույլ, կենդանի մարդու ոչ մի կերպարանք»:**

Որեւէ մեկը կարո՞ղ է բացատրել, գոնե փորձել արդարացումներ գտնել, թե ի՞նչ ուներ Նաիրի Զարյանն իր ծնունդից 12 տարիից առաջ մահացած վիպասան Րաֆֆու հետ: Ոչինչ, թերեւս, բացի նրա




ազգայնականությունը հալածելով կարմիրների սիրտն իր վրա տաքացնելու միտումը:

Եթե սա ոմանց կողմից համարվի «պահի ազդեցություն» կամ «բարկություն», որը ոչ մի տեսանկյունից ընդունելի չէ, ապա ի՞նչ անուն կարելի է տալ մեկ տարի անց՝ 1937թ. դեկտեմբերի 2-ին նրա գրած՝ «Ո՞վ եմ ես» վերտառությամբ նամակին, որտեղ գրում է, մեջբերում եմ բառացիորեն.

**«1934 թվականին, երբ հակահեղափոխական գրողները հանդես եկան մի առանձնահատուկ լկտիությամբ եւ աշկարա քարոզում էին իրենց նացիոնալիստական-տրոցկիստական գաղափարները, երբ նրանք Լինչի դատաստան տեսան բոլոր նրանց հետ, ովքեր կուլտուրայի, հատկապես գրականության հարցերում փորձում էին պաշտպանել լենինյան-ստալինյան գիծը, կատաղի խանջյանականության այդ օրերին ես գրեցի հենց իր՝ Խանջյանի եւ նրա ոհմակի դեմ ուղղված պոեմների ու բանաստեղծությունների շարք: Այսպես՝ «Վաչագան Հատորունի» (երգիծանք) պոեմն ուղղված է հակահեղափոխական գրչակներ Թոթովենցի, Ալազանի, Բակունցի, Մահարու, «Վեպի հերոսները» երգիծական պոեմը՝ Ալազանի, «Ֆիրդուսի» պոեմը՝ Չարենցի, «Երկու հանճարեղ գլուխ» պոեմը՝ Խանջյանի եւ նրան քծնողների, «Իմ երիտասարդ մայրը» պոեմը՝ Բակունցի ու Չարենցի եւ, ընդհանրապես, դաշնակցության դեմ: (...) Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարում հանդես եկա ճառով եւ բազմաթիվ փաստերի վերլուծության հիման վրա ցույց տվեցի Չարենցի, Բակունցի, Ալազանի, Մահարու, Թոթովենցի, Արմենի, Սուրխաթյանի, Պ. Մակինցյանի, Ա.Կարինյանի եւ մյուսների գրքերում եւ հոդվածներում առկա նացիոնալիստական-տրոցկիստական գիծը: (...) Բայց ես չմնացի Հայաստանի շրջանակներում: Հայ գրականության մեջ առկա նացիոնալիզմի դեմ ջախջախիչ ճառով ընդդեմ Չարենցի, Բակունցի, Ալազանի եւ մյուսների ես հանդես եկա Մոսկվայում»:**

Այս մեկը կարծեմ՝ արդեն շատ լուրջ է, եւ ասելու ոչինչ չի մնում, կարիք էլ չկա, որովհետեւ փաստերն ամեն ինչ ասում են: Վերոբերյալներով չբավարարվողները թող կարդան, իմանան, եթե չգիտեն, եւ նմանատիպ ձեռնարկներում էլ գրեն՝ ով է բոլշեւիկ «դասաբներին» մատնել հայ մեծանուն պոետ Եղիշե Չարենցի «Պատգամ» բանաստեղծության գաղտնագիրը, գուցե գոնե դա համոզիչ լինի. չէ՞ որ այդ մատնիչը նույն Նաիրի վերանվանված՝ երբեմնի Հայաստան Եղիազարյանն էր, որն իր ապրած կյանքով ապացուցեց, որ ինքը ո՛չ Նաիրի, ո՛չ էլ Հայաստան անունների հետ հոգեւոր որեւէ կապ ունենալ չի կարող:

Փաստորեն այս ձեռնարկն անպետք, անօգուտ մի բան է: Չհանդգնելով դրան գիտական երաշխավորություն տված ՀՀ ԿԳՆ Կրթության ազային ինստիտուտի աշխատակիցներին մեղադրել ոմանց հետ «բախշիշային» մակարդակի հարաբերություններ հաստատելու համար, միաժամանակ նկատի ունենալով, որ ձեռնարկը թափոն է, մակուլատուրայի հումք, կմտածեմ, որ երաշխավորագիրն ստորագրած անձինք կա՛մ թերացել են աշխատանքի մեջ եւ չեն կարդացել նյութը, կա՛մ էլ, ներեցեք, բայց թերուս, ծանծաղամիտ մարդիկ են:

***Հ.Գ.*** *Այո՛, մեռածների հետեւից՝ միայն ճիշտը:*

# «Գրական թերթը» եւ լրագրողական էթիկան

«**Ազգ**» թերթի մայիսի 31-ի համարում « «Գրական թերթը» գրկան չէ՞» վերտառությամբ մի հոդված էի գրել, որտեղ վերջինիս բավականին խիստ քննադատել էի՝ իշխանահաճո գործելաոճի ու առհասարակ թերթի՝ առաքելությունից շեղված լինելու համար:

Գրելուց հետո ոմանք ինձ մեղադրեցին ծայրահեղական մոտեցումների համար, բայց արի ու տես, որ ես ճիշտ էի, քննադատողները սխալվեցին: Հիշյալ հոդվածում այդ թերթին տրված իմ բնորոշումները բավականին մեղմ են եղել, կասեի՝ փաղաքշական, որովհետեւ բոլորովին վերջերս՝ անցած շաբաթ պարզեցի, որ «Գրական թերթը» տեղ-տեղ ո՛չ միայն գրական չէ, այլեւ՝ տեղ-տեղ էլ գրագողության ու լրագրության էթիկան խախտելու հակում ունի: Բացատրեմ:

Հունիսի 7-ի համարում «Գրական թերթը» մի քանի «կոսմետիկ շտկումներով» արտատպել է «**Ազգ**»-ի մայիսի 31-ի համարում տպագրված իմ նյութը՝ «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխության մասին: Իհարկե, արտատպելը խնդիր լինել չի կարող, դա մամուլում ընդունված սովորույթ է, եթե պահպանվում է մամուլի մյուս օրենքը՝ հեղինակին կամ լրատվականին հղում




անելը: Մի կարեւոր բան, որը չի արել «Գրական թերթը»:

Ես գուցե չանդրադառնայի էլ դրան, որովհետեւ, մեծ հաշվով, դա ուղղակի լրատվական նյութ է եղել, բայց անդրադարձը ճիշտ էր, որովհետեւ մտածում եմ, որ գոնե սրանից հետո այդ թերթի պատասխանատու խմբագրակազմը կսկսի թերթի էջերում տպագրել միայն գրական-մշակութային լուրեր, ոչ թե անցումային արդարադատության մասին իշխանահաճո, իշխանահպատակ հոդվածներ: Այդ ժամանակ գուցե ժամանակ լինի սեփական հոդվածներով հանդես գալ, թե ոչ՝ գոնե «մածունն» ուտելու ժամանակ հիշատակել՝ ումից է բերվել «մերանը»: **Գ. Գ.**

# «Փթիթ» հանդեսը շարունակում է ընդգծել հայկականը

**Անցած շաբաթ երախտապարտությամբ ստացա Բեյրութում լույս տեսնող «Փթիթ» ամսագրի հերթական՝ 16-րդ համարը: Հանդեսը շարունակում է հայապահպանական իր ճախրանքը, եւ գնահատելով կատարված աշխատանքը, վստահ եմ՝ դեռ շատ երկար է ճախրելու:**



**Ինչպես նախորդ համարների էջերը, այնպես էլ այս մեկինը՝ ողողված էին հայկականությամբ ու հայապահպանությամբ: Մի բան, որը շատ դժվար է իրականացնել, այն էլ շարունակաբար՝ սփյուռքում, մանավանդ, երբ բուն հայրենիքից ոչ մի օժանդակություն չի ցուցաբերվում այդ խիստ ազգային գործունեությանը:**

**Սփյուռքում մեր հայապահպանության օջախները շատ քիչ են, գնալով նվազում են: Անցյալ շաբաթ էլ ցավով տեղեկացանք, որ Գլենդեյլում փակվել է հայերի համար հարազատ դարձած «Պերճ գրատունը»: Նման ժամանակներում, երբ մեկը մյուսի հետեւից փակվում կամ փակված լինելու տպավորություն են ստեղծում մեր տեսակի պահպանության կռվանները, կարեւոր է «Փթիթի» նման կարեւոր հանդեսների գոյությունը: Այն սփյուռքի եզակի հանդեսներից է, որտեղ տեղ չունեն օտարաբանություններն ու ազգայինն օտարած, օտարող երեւույթները:**

**Ես դեռ հույս ունեմ, որ մի օր մեր հայրենի իշխանությունները պետք է խորապես ըմբռնեն, թե հայապահպանության ասպարեզում ինչ տիտանական աշխատանք է կատարում «Փթիթը» եւ կգան այն համոզման, որ անպայմանորեն անհրաժեշտ է օժանդակել այդ կարեւոր վահանին, որն սփյուռքում հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանում է հայերի աքիլլեսյան գարշապարը՝ տեսակը, ինքնությունը:**

**Այս ամիսների ընթացքում ես հասցրել եմ «Փթիթի» նախորդ երկու համարները ցույց տալ իմ շրջապատին, ու լսել նրանց կարծիքներն այդ կարեւոր նախաձեռնության մասին: Եւ այսօր, օգտվելով առիթից, իմ ու իմ ընկերների, գործընկերների ու Երեւանի պետական համալսարանի բազմաթիվ ուսանողների անունից խորին շնորհակալություն եմ հայտնում «Փթիթ» հանդեսի հիմնադիր-խմբագիրներ Վերժին Չերյան-Աբրահամյանին եւ Կարո Աբրահամյանին, ինչպես նաեւ նրանց կարեւոր գործին օժանդակող ընկերներին, որոնց անունները, ցավոք սրտի, հայտնի չեն մեզ:**

**Մենք խիստ կարեւորում ենք հայրենիքից դուրս հայապահպանության ոլորտում «Փթիթի» դերը, եւ հույս ենք հայտնում, որ շատ մոտ ապագայում այդ կարեւոր մամուլը տարածվելու է ողջ հայկական սփյուռքով՝ աշխարհի բոլոր կողմերում:**

**Գ. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**

AZG NEW MSHAKUIT.QXD 13/06/2019 18:31 Page 3



ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ

# Վարդգես Դավթյան. «Գրում եմ, որ չխելագարվեմ»

*Այս հարցազրույցն ամերիկաբնակ գրող, մասնագիտությամբ հոգեբույժ Վարդգես Դավթյանի հետ ծնվեց ինքնաբուխ: Երբ մանրամասն կարդացի նրա գրքերը, այնուհետեւ գրականագիտական հոդված հրապարակեցի «Ազգ» շաբաթաթերթում, որոշեցի նաեւ զրուցել իր հետ: Ներկայացնում եմ այն, ինչն ավելի շատ է բացահայտում գրողին, մարդուն եւ բժշկին:*

**-Ինչպե՞ս կբնութագրեք Ձեր գրականությունը:**

-Եթե նկատի ունեք գրելու դրդապատճառը, ապա Նիցշեից լավ ոչ ոք չի արտահայտվել՝ գրում եմ, որ չխելագարվեմ: Այստեղից էլ իմ պատմվածքների բնութագիրը՝ հոգեբանական իրատեսություն, իսկ ավելի ստույգ՝ հոգեբուժիչ ռեալիզմ: Իմ ներկայացրած կերպարները անցնում են ծայրահեղ իրավիճակների բովով, բայց ես միշտ ցանկանում եմ, որ նրանք այդ իրավիճակներից դուրս գան հոգեպես ուժեղ եւ ավելի բարի: Ընդ որում, այդ ծայրահեղ իրավիճակները կարող են թվալ արտաքուստ փոքր, նույնիսկ կենցաղային կամ աննշան, բայց չէ՞ որ մեր կյանքը կազմված է դրանց շղթայից: Հաճախ փոքր դիպվածներն անգամ կարող են մարդուն բեկել, թուլացնել, նույնիսկ դիմազրկել: Անհատը պիտի կարողանա պահպանել իր Ես-ը եւ հաղթող դուրս գա ամեն իրավիճակից: Սիրում եմ զգացմունքայնությունը գրականության մեջ, բայց չեմ հասկանում սենտիմենտալիզմը: Ինչպես կարելի է գրել «Պատանի Վերթերի տառապանքները»՝ հստակ պատկերացնելով, որ քո գրածը կարդալով՝ զգայուն հոգիները կարող են տառապել այնքան, որ ինքնասպան լինեն: Ջեկ Լոնդոնն իր վեպի մասին ասում էր. «Կա՛մ ես պիտի ինքնասպան լինեի, կա՛մ Մարտին Իդենը»: Ինձ համար հավասարապես անընդունելի է նաեւ, այսպես կոչված, «անողոք ռեալիզմը»: Գեղարվեստական փաստը տարբերվում է կենսական իրողությունից առաջին հերթին հենց հոգեբուժիչ ներգործությամբ:

**-Եթե մնայիք Հայաստանում, գեղարվեստական գրականություն կստեղծեի՞ք:**

-Շատ ծանր հարց եք տալիս: Վտարանդիությունը մարդուն ստիպում է աշխարհին այլ հայացքով դիտել. ոչ միայն արտաքին երեւույթներին, այլ նաեւ սեփական անձին եւ ներաշխարհին: Ընդլայնել իմացության եւ զգացմունքայնության սահմանները: Դա հաճելի գործընթաց չէ : Սակայն երեւի պարտադիր պայման է գեղարվեստական տեքստեր գրելու համար: Հայաստանում ժամանակի գործոնը խնդիր չէր: Իսկ կյանքը մեկ անհայտով հավասարում էր: Ամերիկյան կյանքը չափազանց խիտ է թե՛ ժամանակի եւ թե՛ տարածության առումներով: Սկզբում հոգեբուժության թեմաներով գրքույկներ գրեցի, հրատարակեցի, սակայն դրանք ինձ անձնապես չէին բավարարում (չնայած ունեցան ընթերցողների լայն շրջանակ): Չէին արտահայտում հոգեբանական այն խմորումները, այն մեծ տեղաշարժերը, որ կատարվել էին իմ ներսում Հայաստանից հեռանալուց ի վեր: Ինձ ավելին էր պետք...

**-Մեր իրականության մեջ Դուք առաջինն եք, որ իբրեւ բժիշկ՝ հանդես եկաք նաեւ գրականագիտական փորձով: Ինչպե՞ս դա հաջողվեց:**

-Եթե նկատի ունեք բժշկի իմ մասնագիտությունը, ապա առաջինը չեմ: Առաջինը դոկտոր Գեւորգ Ախվերդյանն է, որը ապրել է 200 տարի առաջ: Այս երեւելի հայ բժիշկը նաեւ բանասեր է եղել, բարբառագետ, հասարակական գործիչ: Սայաթ-Նովայի մասին առաջին բանասիրական ուսումնասիրության հեղինակն է, սայաթնովայագիտության սկզբնավորողը:



**-Ես նկատի ունեի գրական կերպարի հոգու ներաշխարհի ուսումնասիրությունը, որը երեւաց Ձեր «Ինչու խելագարվեց Անուշը» արժեքավոր աշխատասիրության մեջ...**

-Ինչ վերաբերում է իմ գրականագիտական հետաքրքրություններին, դրանք էլ ծնվեցին մասնագիտական դրական որոնումներիս արդյունքում: Դեռ ուսանողական տարիներին կարդալով տաղանդավոր գործարար եւ հնագետ Հայնրիխ Շլիմանի մասին, զարմացած էի, թե ինչպես է հնարավոր Հոմերոսի «Իլիականը» կարդալով՝ գնալ եւ ճիշտ տեղում փորել-հանել Տրոյան: Ֆանտաստիկային համազոր պատմություն: Ապշած էի նաեւ, թե ինչպես է հնարավոր նույն Հոմերոսին կարդալով՝ արդեն 20-րդ դարի սկզբին գլխի ընկնել մի ծանր հոգեկան հիվանդության բուժման մասին, որի անունն էր նեյրոսիֆիլիս, իսկ ավելի ստույգ՝ պրոգրեսիվ պարալիզ: Երբեք չէի մտածել, որ գեղարվեստական գրականությունը գեղագիտական իմաստներից բացի կարող է ունենալ նաեւ գիտական-էվրիստիկական (հայտնագործչական) նշանակություն այնպիսի բնագավառներում, որոնք արտաքուստ կապ չունեն գեղարվեստական գրականության հետ: Եվ ահա, ընտրեցի մեր ամենախոշոր դասականներից մեկի՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը՝ նպատակ ունենալով բացահայտել հայ ինքնության հոգեբանական խորքային շերտերը, բնութագրերը: Ճակատագիրը կամեցավ, որ հանդիպեմ եւ արժեքավոր նյութեր ու խորհուրդներ ստանամ իրազեկ մասնագետներից, պայծառ մարդկանցից՝ բանաստեղծի դուստր Թամար Թումանյան, արվեստաբան Լեւոն Հախվերդյան, թումանյանագետ Էդվարդ Ջրբաշյան, գրականագետ Սերգեյ Սարինյան: Վերջինս ինձ խորհուրդ տվեց իմ ուսումնասիրություններն իբրեւ գիտական թեզ ներկայացնել Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդում, որի համար բժիշկ-հոգեբույժին շնորհեցին բանասիրության թեկնածուի գիտական աստիճան: Դա, փաստորեն, մեզանում գրականագիտության հոգեբանական ուղղությանը վերաբերող առաջին փորձն էր: Այդ բնագավառում իմ ուսումնասիրությունները շարունակվում են:

**-Դուք ճանաչո՞ւմ եք Ձեր ընթերցողին:**

-Հիմա՝ արդեն այո... Նախկինում ես արձագանքներ էի ստանում հիմնականում 50-ն անց ընթերցողներից, իսկ այժմ՝ հավասարապես նաեւ 25-30 տարեկան երիտասարդներից: Ի՞նչ մեղքս թաքցնեմ, ես մի քիչ ընթերցողահաճո հեղինակ եմ. ամեն կերպ ջանում եմ, որ նա սիրի իմ գիրքը, ծիծաղի եւ արտասվի գրական հերոսներիս հետ: Չեմ պատկերացնում՝ ինչպես կարելի է հենց այնպես գրել: Միշտ զարմացել եմ օրագիր պահողների վրա: Ընդհակառակը, ես միշտ վիրտուալ զրույցի մեջ եմ ընթերցողի հետ: Ավելին, իմ ընտրած ժանրը (ճեպանովելներ) եւս պայմանավորված է ընթերցողի պահանջով: Այսօր երկարաշունչ տեքստեր չեն կարդում: Տեսեք, Չեխովն Ամերիկայում համարվում է ամենաընդունելի դասականներից մեկը (ինչպես որ Մոցարտը՝ դասական երաժշտարվեստում), բայց արի ու տես, որ հիմա Չեխովի արձակն էլ են համարում երկարաբանված. այն Չեխովը, որի պատմվածքները կարծես «վեպերի սեղմագրեր» լինեն: Ժամանակակից հեղինակը չի կարող հաշվի չնստել ընթերցողի պահանջների հետ: Իմ ճեպանովելները (ի դեպ, այս եզրն էլ է իմ հորինածը) 1-1,5 էջ ծավալ են զբաղեցնում: Բայց խնդիրն էլ հենց այդ է, որ այդ փոքր ծավալում հեղինակը պարտավորվի պահպանել դասական ժանրի կանոնները (կերպար, սյուժե, պատկեր, շարժում, անսպասելի ավարտ): Եթե ընթերցողին չճանաչես (կամ չհարգես), չես կարող նրան տանել քո հետեւից:

**-Գրող-ընթերցող-գրաքննադատ եռանկյունում Դուք որտե՞ղ եք ամենաշատը:**

-Բոլոր կողմերում... Իսկ երբեմն էլ՝ միաժամանակ: Ես ինձ համարում եմ, առաջին հերթին, որակյալ ընթերցող: Մեր ականավոր արձակագիրներից մեկը՝ Զորայր Խալափյանը, օրինակ, նույն գիրքն ընթերցում էր «եռաֆազ հայացքով»: Դոստոեւսկու վեպն ընթերցում էր թե՛ որպես գեղարվեստական գրականություն, թե՛ որպես հոգեբանական եւ հոգեբուժական ձեռնարկ՝ օգտագործելով մասնագիտական գրքեր, բառարաններ, եւ թե՛ իբրեւ Նոր կտակարանի բաղկացուցիչ մաս: Այ թե «պրոֆեսիոնալ գրողն» ինչպես պիտի վարվի: Ձեր նշած եռանկյունին ինձ համար ավելին է. բազմանկյուն է՝ այլ կողմեր էլ ունի: Կրկին դառնալով Չեխովին. նա միաժամանակ ե՛ւ գրող էր, ե՛ւ բժիշկ, ե՛ւ հիվանդ: Իմ «բազմանկյան» կողմերից մեկն էլ նեւրոտիկ հանրությունն է՝ դյուրաբեկ, հուզաշատ հոգու տեր մարդիկ, որոնց հետ պիտի շատ զգույշ լինես պատկերներ կամ գեղարվեստական-հոգեբանական լուծումներ առաջարկելիս:

**-Հայտնի է, որ ռուս գրականությունն ուղեցույց է Ձեզ համար:**

-Առաջներում՝ այո, ռուս դասական գրականությունը: Ժամանակակից ռուս գրականության մեջ (տաղանդավորներ շատ կան) հուսահատության երանգները կարծես շատացել են:

**-Հատկապես ո՞ր գրողն է եղել եւ մնում՝ որպես ամենասիրելի:**

-Այն գրողները, որոնց մոտ հանդիպում են մեծ կամ փոքր հոգեբանական գյուտեր. Չեխով, Կուպրին, Բունին, Գորկի, Օլեշա, Զոշչենկո, Զոհրապ, Բակունց, Սելինջեր, Սագան... շատ են...

**-Ո՞ւմ եք համարում Ձեր հոգեւոր ուսուցիչը:**

-Իհարկե, ծնողներիս ազդեցությունը շատ մեծ էր: Երկուսն էլ կրթված էին եւ ընթերցասեր: Սակայն հայոց լեզվի եւ գրականության հանդեպ ընգծված ուշադրության, ուղղախոսության եւ գրավոր խոսքի ասպարեզում ինձ վրա բարերար ազդեցություն են ունեցել հայրիկիս հորաքրոջ թոռները՝ թատերագիր Ժիրայր Անանյանը եւ հայերենի հրաշալի մասնագետ Էդուարդ Անանյանը: Ավելի հասուն տարիքում ճակատագիրը կամեցավ, որ անձնապես ծանոթանամ մեր փայլուն գրագետներ Լեւոն Հախվերդյանի, Լուիզա Սամվելյանի, Զորայր Խալափյանի, Սերգեյ Սարինյանի եւ այլ երեւելիների հետ: Պայծառ անհատականություններ էին: Յուրաքանչյուրը՝ հայոց մշակույթի մի-մի հաստաբուն կաղնի:

**-Ո՞վ է այն մարդը, որ միշտ Ձեր գործերի ամենախորքերում է՝ ամեն ինչ Նկատողը, Զգացողը, Տեսանողը: Դուք ինչ-որ բան դնո՞ւմ եք ձեզնից այդ կերպարի մեջ:**

-Ամենախորքերում... սովորական եւ պարզ մարդն է, որը հանդգնել է անկեղծանալ ընթերցողի հետ: Իսկ անկեղծանալուց հետո նա արդեն դադարում է «սովորական» լինել: Մեր գրականության թույլ կողմը անկեղծանալուց վախենալն է: Այո, իմ անձնական կենսափորձը, տպավորությունները, հոգեվիճակները որոշակիորեն օգնում են հասկանալու, թե ինչպե՛ս ստեղծեմ այս կամ այն գրական հերոսին, բայց ի վերջո դրանք հավաքական կերպարներ են: Ի դեպ, ամերիկյան իրականության մեջ հայ մարդու նկարագիրը՝ որպես գրական հերոսի նախատիպ, հետաքրքրական է նաեւ նրանով, որ այստեղ հաճախ տարօրինակ կերպարանափոխություններ են լինում, կարծես: Հայաստանից դուրս հայտնվելով՝ մարդու «աստառը երես է դառնում», եւ նա ասես ավելի է ամբողջանում՝ ազատվելով որոշակի տաբուներից եւ ադաթներից:

**-Հետաքրքրական է իմանալ Ձեր ստեղծագործական լաբորատորիայից մի դրվագ. կարծում եմ՝ նախապես մտքում կառուցում եք գրեթե ամբողջ նովելը, եւ գրելն արդեն ռոպեների հարց է: Այդպե՞ս է...**

-Գրելն ինձ հեշտությամբ չի տրվում: Միշտ զարմացել եմ այն գրողների վրա, որոնք կարողանում են «մի նստելով» 10-15 էջանոց գեղարվեստ ստեղծել: Իմ աշխատանքը սկսվում է պատմվածքի վերնագիրը բացապարզելուց: Առանց վերնագրի նույնն է թե անգլուխ-անիմաստ տեքստ գրես: Այդ վերնագրի շուրջ կարող եմ օրերով, շաբաթներով մտածել: Ինձ մոտ միշտ նոթատետր եմ պահում. մտքերս, զգացումներս, տպավորություններս իսկույն գրում եմ նոթատետրում, հենց այդ պահին: Եթե չգրեմ, ավելի ուշ կարող է՝ կորցնեմ դրանց զգացմունքային թարմությունն ու անմիջականությունը: Հաճախ է պատահել. մայրուղով մեծ արագությամբ մեքենա վարելիս հանկարծ մտքումս ծնվել է անհրաժեշտ բառը կամ պատկերը: Որքան էլ ուշանալիս լինեմ, մեքենան վարել եմ մայրուղուց դուրս, մի հանգիստ, ապահով տեղ կայանել եւ անմիջապես նշումներ արել նոթատետրում: Ապա կրկին մտել մայրուղի: Սիրում եմ բառի ճշգրտությունը: Թումանյանն ասում էր՝ բառը մի աշխարհ է, իսկ իմ մեծ բարեկամ Լեւոն Հախվերդյանը պարզաբանում էր, թե բառը ինքնին ոչինչ է, բայց դառնում է ամեն ինչ, եթե գործածվում է ճիշտ տեղում, ինչպես ճիշտ բանալին իր կողպեքի մեջ: Մանավանդ կարճ պատմվածքում ոչ մի բառ չպետք է ինքնանպատակ գրված լինի, եթե չի ծառայում գեղարվեստական կառույցին:

Հայերենը շատ ճկուն եւ բառամթերքով հարուստ լեզու է. չկա մի իրադրություն, պատկեր կամ հոգեվիճակ, որ հնարավոր չլինի արտահայտել ճշգրիտ բառով: Պատահել է, երբ արդեն ավարտված պատմվածքի մեջ մեկ կամ երկու բառ եմ փոխել, ապա դրանից ամբողջովին փոխվել է ստեղծագործության ե՛ւ հայեցակարգը, ե՛ւ պոետիկան: Միայն ճշգրիտ եւ անկեղծ բառերով է հնարավոր ազդել ընթերցողի հոգեվիճակի վրա: Այո՛, գրելն ինձ համար անսովոր բարդ ընթացք է: Ինքնադատաստանի նման մի բան է... Կարծես մի ուժ քեզ նստեցնում է անշարժ մի տեղ, հարկադրում անկեղծանալ՝ ձեռքդ «կապելով» ստի դետեկտորին:

**-Իսկ հնարավո՞ր է՝ նովելից վեպի անցնեք:**

-Իհարկե: Ինձ շատ է հրապուրում, մասնավորապես, կենսագրական վեպը (Անդրե Մորուայի ժանրով): Անպայման գրելու եմ Մուրացանի հոգեկան դրամայի, Չարենցի ներաշխարհի մասին: Վաղուց մտմտում եմ մեկ այլ թեմայի շուրջ՝ «Երեք հանճարեղ թոքախտավոր (Դուրյան, Մեծարենց, Տերյան)»: Ստեղծագործական ծրագրերս վերջ չունեն...

AZG NEW MSHAKUIT.QXD 13/06/2019 18:31 Page 4



# Ռուսական հեռուստաէկրանի հայազգի աստղը՝ ԻՎԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռուսական կինոյի եւ հեռուստեսիլի մերօրյա աստղերից Իվան Հովհաննիսյանը այսօր մեծ ժողովրդականություն է վայելում Ռուսաստանում: Նրա հերոսները դրական են եւ բարի, պաշտպանում են օրենքն ու թույլերին: Ինքը՝ դերասանն ասում է, որ չի սիրում ձեռքին զենք կրել, նախընտրում է երաժշտական գործիքները...

Իվանը ծնվել է Սարատովում, 1973-ին, օպերային երգիչ հայ հոր եւ դաշնակահարուհի ռուս մոր (Ջոնռիդ եւ Լյուդմիլա Հովհաննիսյանների) ընտանիքում: «Ձեր ազգանունը հայկական է, բայց աչքերը կապույտ են...»,- մի անգամ ասել է մի լրագրող (նրան պիտի որ անծանոթ չլիներ մեկ այլ շատ ավելի ոչ հայկական արտաքինով, սակայն իր հայությունը մշտապես շեշտող Դմիտրի Խառատյանը), որին ի պատասխան դերասանը պատասխանել է. «Այո՛, ես հայ եմ: Հայրս մահացել է, իսկ մայրս ապրում է Իվանովոյի մոտ... Ծնվել եմ Սարատովում, ապրել Բաթումում ու էլի տարբեր տեղեր: Պարզապես մենք երկար ժամանակ տուն չունեինք, ու ձեռք բերած դրամը բավականացրեց միայն Իվանովոյի մոտ բնակարան գնելու համար: Մայրս ավելի հաճախ ինձ տեսնում է հեռուստացույցով, քան իրականում: Հայրս՝ հայ Ջոնռիդ Հովհաննիսյանը (ինչպես հասկանում եք, նրան անվանել են ի պատիվ հայտնի գրողի) երգել է Սարատովի օպերային թատրոնում, որտեղ մայրս կոնցերտմեյստեր էր: Մորիցս ես ժառանգել եմ արտաքինս: Չնայած որ հայրս էլ տիպիկ հայ չէր՝ բաց գույնի մազերով, մոխրագույն աչքերով, շատ գեղեցկատես: Փոխարենն ինձ ուրախացնում է, որ նման արտաքին տվյալներով ես կարողանում եմ խաղալ Իվանովների: Իսկ աշխարհով մեկ շրջելով՝ հասկանում եմ, որ ես աշխարհը հավանաբար ավելի լայն եմ ընկալում, քան նրանք, որոնց երակներով միայն մեկ ազգի արյուն է հոսում: Այնպես որ եկեք... խառնվե՛նք»:

Իվանն ընտանիքի միակ, երկար սպասված երեխան էր: Վաղ մանկուց ունկնդրել է միմիայն դասական երաժշտություն: Բարիտոն Ջոնռիդ Հովհաննիսյանը սկզբում երգել է երգչախմբում, ապա նրան հրավիրել են աշխատելու տարբեր քաղաքներում՝ Բիշկեկ, Բաթում, Մոսկվա, նաեւ՝ Երեւան: Այստեղ էլ 11-ամյա Իվանը ակնառու ուսուցիչների մոտ սովորել է թավջութակ նվագել, ապա տեղափոխվելով Մինսկ՝ ուսանել եւ ավարտել է Բելառուսական կոնսերվատորիային կից միջնակարգ երաժշտական դպրոցի թավջութակի բաժինը: Այնուհետեւ Իվանը որոշել է հաստատվել Մոսկվայում, որտեղ նախ աշխատել է շինարարությունում, ապա ընդունվել կոնսերվատորիային կից երաժշտական դպրոցը եւ Թատերական արվեստի ռուսական ակադեմիան, որտեղից վերապատրաստման է մեկնել Իտալիա: Վերադառնալով Մոսկվա՝ որպես թավջութակահար աշխատել է Օպերետի թատրոնում, միաժամանակ սովորել Թատերարվեստի ինստիտուտի երաժշտական թատրոնի բաժնում: Ուսանող տարիներին Իվան Հովհաննիսյանը մշտապես խնդիրներ է ունեցել փաստաթղթերի հետ, մոր հետ ապօրինի բնակվել է հանրակացարանում: «Ես «կովկասյան ազգության դեմք» եմ, իմ ազգանունը ռուսական չէ: Եվ Մոսկվայում ինձ հաճախ միլիցիոներները կանգնեցնում էին փողոցում: Նաեւ երկար ժամանակ ես փաստաթղթեր չունեի՝ ո՛չ գրանցում, ո՛չ անցաթուղթ: Մենք Վրաստանից մեկնել էինք առանց անձնագրերի»,- հետագայում հիշել է դերասանը:





Որոշ ժամանակ Իսրայելում աշխատելուց հետո Իվան Հովհաննիսյանը վերադարձել է Մոսկվա եւ սկսել աշխատել Ռոման Վիկտյուկի թատրոնում: Հետագայում երաժշտի մասնագիտությունը դերասանականով փոխելն իր կողմից համարել է «անխոհեմ արարք», սակայն մի հարցազրույցի ժամանակ խոստովանել է, որ երբեմն ձեռքն է առնում թավջութակը եւ որ երաժշտությունը միշտ ներկա է իր կյանքում:

«Հավանաբար, այն ինձ պաշտպանում է շատ ծանր պահերին: Երբ առնչվում եմ ոչ շատ լավ հեռուստատեսային արտադրանքի հետ, ինձ օգնության է հասնում Չայկովսկու, Շոստակովիչի, Բախի իմ երաժշտական «ուղեբեռը»: Եթե երաժիշտ դառնայի, չեմ կարծում, թե կդիմանայի այդ մասնագիտության ներկայացուցիչների աշխատավարձին: Կարծում եմ, որ դասական երաժշտությունն ավելի հաճախ պիտի հնչի, քանի որ դրա մեջ է մեր փրկությունը...»:

Ի դեպ, 2002 թվականի հոկտեմբերի 23-ին Իվան Հովհաննիսյանը եղել է Դուբրովկայում ցուցադրվող «Նորդ-Օսթ» ներկայացման դերակատարների մեջ եւ մյուս դերասանների ու հանդիսականների հետ երեք օր ու գիշեր մնացել է ահաբեկիչների ձեռքում... Այդ նույն օրը լրանում էր դերասանի դստեր՝ Օլեսյայի մեկ տարին, իսկ կինը՝ Աննան, ողջ օրն անց է կացրել շրջափակված շենքի մոտ...

2003-ին Հովհաննիսյանն առաջին անգամ նկարահանվել է կինոյում՝ «Ցանկալի կինը» սերիալում: Ընդհանուր առմամբ հեռուստակինոյում նա կատարել է մոտ հիսուն դեր՝ արագ արժանանալով լայն ճանաչման, հատկապես՝ կին հանդիսատեսների շրջանում: Գեղեցիկ դիմագծերով եւ ինտելեկտուալ արտաքինով այս դերասանի մասնակցությամբ ստեղծված բազմասերիանոց հեռուստաֆիլմերից են՝ «Փրկել եւ ողջ մնալ» (2003), «Պերսոնա նոն գրատա» (2005), «Կարապի դրախտ» (2005), «Ձյունե թագուհին» (2006), «Օրենք եւ կարգուկանոն» (2007), «Կրեմ» (2008), «Հավասարում բոլոր հայտնիներով» (2008), «Միայնության կնիքը» (2008) եւ այլն՝ ամենից հաճախ կատարելով զինվորականների եւ ոստիկանների դերեր (միայն «Ծուղակը» սերիալում՝ հմայիչ մի ավազակի), թեեւ կյանքում երբեք ո՛չ կռվել է, ո՛չ էլ զբաղվել սպորտով: Դերասանը սիրված է նաեւ Ուկրաինայում, որտեղ նա ապրել էր պատանեկության տարիներին, նկարահանվել «Հոտոտողը» եւ այլ հեռուստասերիալներում եւ որտեղից է նրա երկրորդ կինը: Իսկ առհասարակ, Իվան Հովհաննիսյանն ապրում է երեք քաղաքներում՝ Մոսկվա, Կիեւ եւ Ռիգա: Լատվիայի մայրաքաղաքում Հովհաննիսյանի կինը՝ ուկրաինուհի Լենան հայտնի է որպես վարպետ վարսահարդար: Նրանք ապրում են մի մեծ տանը՝ իրենց երկվորյակ դստրիկների եւ Լենայի՝ առաջին ամուսնությունից ծնված երկու դուստրերի ու նաեւ շատ հազվագյուտ ակիտա-ինու ցեղատեսակի շան հետ...

Իսկ Հայաստան երկիրը, որտեղ մի ժամանակ ապրել է այսօր մեծ ժողովրդականություն վայելող ռուսական դերասանը, բացակայում է վերջինիս կյանքում: Եվ վերջում մեզ թույլ կտանք ենթադրել, որ եթե տարիներ առաջ Ջոնռիդ Հովհաննիսյանը կապվեր իր հայրենիքին, մնար Հայաստանում եւ հետեւողական լիներ որդու երաժշտական կրթության մեջ, թերեւս մենք այսօր ունենայինք Իվան Հովհաննիսյան անունով թավջութակահար...

Ավելացնենք, որ դերասանի ավագ դուստրը՝ 18-ամյա Օլեսյա Հովհաննիսյանը, Իվանի մոր հետ բնակվում է Լոնդոնում եւ վաղ տարիքից գրում է անգլերեն բանաստեղծություններ: Դեռեւս տասնմեկ տարեկան է եղել, երբ Երկրորդ աշխարհամարտի մասին նրա գրած բանաստեղծությունն ընդգրկվել է «Պատանի անգլիացի բանաստեղծներ» ալմանախում: Այս առթիվ Իվան Հովհաննիսյանն ասել է. «Ահա այսպես ես դարձա անգլիական բանաստեղծի հայր»...

**Ա. ԲԱԽՉԻՆՅԱՆ**

# Վարդգես Դավթյան. «Գրում եմ, որ չխելագարվեմ»

Գ

**-Ինչպե՞ս եք վերաբերվում արդի հայ գրականությանը: Կա՞ն անուններ, որ կցանկանայիք տալ:**

-Ինձ միայն հաճելի զարմանք է պատճառում, որ բարոյական ու հոգեւոր արժեքների աղետալի անկման պայմաններում գրքի եւ գրավոր խոսքի շուկայի, կարելի է ասել, լիակատար բացակայության իրողության մեջ Հայաստանում կան շնորհաշատ գրողներ՝ բանաստեղծներ, արձակագիրներ, որոնք կյանքի գնով փորձում են ապահովել մեր գրականության շարունակականությունը: Տաղանդավոր հեղինակներ կան. առանձին անուններ չտամ, որ մյուսները չնեղանան: Որոշ չափով ծանոթ եմ թարգմանական գրականությանը: Ուրախալի է նաեւ, որ հայաստանյան գրողները թարգմանվում են այլ լեզուներով: Կարծում եմ՝ հիմա պիտի բացարձակ նվիրյալ լինես գրականությանը տրվելու համար:

**-Այսօր ԱՄՆ-ում ձեւավորվել է հայկական մեծ համայնք: Ունե՞ք մտավախություն, որ մեր լեզուն շուտով կմոռացվի այնտեղ:**

-Ցավոք, այո: Բանավոր հայերենը դեռ որոշ չափով պահպանվում է 3-4-րդ սերնդի խոսքում, սակայն գրավոր հայոց լեզուն դուրս է մղվում:

**-Իսկ գրական տեքստը ճիշտ հասկանալը կարո՞ղ է կանգնեցնել հասարակության անկումը:**

-Ավելի մեծ ընդգրկումով ասած՝ գեղեցիկը կարող է փրկել աշխարհը: Դոստոեւսկին եւ 19-րդ դարի գեղագետները այս հարցին դրական պատասխան էին տալիս: Ի դեպ, 20-րդ դարի մարդկային կերպարանքով հրեշներն էլ էին նույն կարծիքին: Հիտլերը պաշտում էր Նիցշեին եւ Վագներին, Ստալինը՝ Գորկուն եւ Դունաեւսկուն (ի դեպ, միայն Ստալինն էր հասկացել, որ Բուլգակովի «Վարպետն ու Մարգարիտան» իրականում գրվել է մեկ մարդու՝ «ժողովուրդների հոր» համար): Իրականում գրականության հանրային ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան կարող է գիտակցվել գրողների եւ նույնիսկ գրաքննադատների կողմից: Եվ չնայած մեր ժամանակներում բազմաթիվ խութեր ու պատնեշներ են գոյացել գրողի եւ ընթերցողի միջեւ, բայց նրանք համատեղ ջանքով ու սիրով պիտի կարողանան ազատվել այդ պատնեշներից եւ գալ միմյանց ընդառաջ: Անձը փնտրում է իր կատարյալ Ես-ին, իսկ այդ կատարյալը միմիայն գեղարվեստական գրականությունն է:

**-Կարելի՞ է հանրության ուշադրությունն ուղղել գրականության շուրջ ընթերցանությունների միջոցով, իհարկե, հեղինակի հատուկ ընտրությամբ:**

-Այո, մեր գրողները ուղղակի պարտավոր են իրենց «արտադրանքն» անմիջականորեն մատուցել, ներկայացնել ընթերցողներին: Պետականազուրկ ժամանակներում կար, չէ՞, նման մի կարգախոս՝ գնացեք դեպի ժողովուրդը: Ահա, հիմա էլ կարծես գրական-գրողական համայնքում յուրահատուկ «նարոդնիկության» ժամանակներ են: Ես իմ գրքերը մեծ քանակներով ուղարկում եմ հատկապես շրջանների եւ մարզերի գրադարաններ, որովհետեւ համոզված եմ, որ մեր հոգեւոր զարթոնքը սկսվելու է գիր ու գրականություն սիրող միջավայրից՝ հող ու ջրին նվիրված անաղարտ հայ մարդուց:

**-Աստվածաշնչի որոշակի հատվածներ կամ գլուխներ ընթերցելն ունի՞ ամոքիչ նշանակություն հոգու եւ մարմնի համար:**

-Մեր երեւելի գրագետներից մեկը, այժմ հանգուցյալ պրոֆեսոր Գեւորգ Խրլոպյանը, մի հրաշալի աշխատություն էր գրել «Հայր մեր»-ի իմաստասիրության, նաեւ հոգեբուժիչ նշանակության մասին: Ինքս էլ ամեն առավոտ դեռ անկողնում մտքի մեջ կրկնում եմ մեր աղոթքը: Սակայն ես Աստվածաշնչին եւ Նոր կտակարանին վերաբերվում եմ իբրեւ աշխարհիկ մարդ: Իմ կարծիքով, սրբազան ասույթներից պակաս հոգեբուժիչ զորություն չունի նաեւ հայ դասական բանաստեղծությունը, ինչպես, օրինակ. *«Ամպերի նըման թող սահեն-գնան/ Մտքերը մոլոր,/ Ցավերը բոլոր/ Եվ սիրտդ մնա պայծառ / Երկնքի նըման»*, կամ՝ *«Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,/ թույլ, նազելի, շըղարշային, վարդաբույր,/ ու ծըփայի զերթ ոսկեսար վարագույր/ վըրան ամէն հոգիի...»*: Այս տողերը ինչո՞վ են զիջում աստվածաշնչյան հորդորներին, երբ խոսքը վերաբերում է ներդաշնակության ձգտող հոգիներին: Սրանք հայ մարդու համար հանդիսանում են հոգու բալասաններ ...

**-Կարծո՞ւմ եք, որ կան այնպիսի գրողներ, ում գործերը կարող են վատ ազդեցություն ունենալ ընթերցողի վրա եւ ինչ-որ տեղ այն կարելի է անվանել ընկճախտ առաջացնող:**

-Բազմաշերտ հարց եք տալիս: Վերեւում խոսում էինք գրող-ընթերցող կապի մասին: Ընթերցողներն էլ են տարբեր լինում ե՛ւ ինտելեկտով, ե՛ւ նախասիրություններով, նաեւ տվյալ պահին (ընթերցանության ընթացքում) ունեցած հոգեվիճակով, տրամադրությամբ: Ասեմ, որ արվեստի գլուխգործոցը երբեք չի կարող բեկել առողջ եւ հասուն հոգեկան աշխարհ ունեցող ընթերցողին: Ավելի սենտիմենտալ-նկարագրական ուղղվածության գրքերը, որոնցում գեղարվեստական գաղափարը նպատակադիր անց է կացվում ընթերցողի զգացմունքների եւ արցունքների միջով, կարող են բացասաբար անդրադառնալ դյուրաբեկ հոգիների (հատկապես պատանի ընթերցողների) վրա: Արդեն նշեցի Գյոթեի վաղ շրջանում գրած «Երիտասարդ Վերթերի տառապանքները» հոգեցունց վեպի մասին: Ի դեպ, նման մի ցնցում էլ ես եմ ապրել, երբ պատանի տարիքում կարդացի Հովսեփ Վարդանյանի «Ագապի» սրտաշարժ վեպը: Բայց երբ ավելի ուշ կրկին թերթեցի նույն վեպը, սկսեցի ավելի շատ ուշադրություն դարձնել 19-րդ դարի կեսին Պոլսո հայ ամիրաների բարքերի նկարագրության վրա: Ի դեպ, Ամերիկայում ամբողջ տասնամյակներ անտեսում էին (նույնիսկ արգելում) Սելինջերի «Փրկիչը տարեկանի արտում» վեպը՝ պատճառաբանելով, թե պատանիների հոգում սերմանում է հոռետեսության եւ անելանելիության զգացումներ: Հայ գրականության մեջ եւս կարող ենք հանդիպել նման երեւույթների: Նույնիսկ ժողովրդական հեքիաթները որոշակի տարիքի երեխաներին պետք է մատուցել ընտրողաբար: Եթե երեխան ունի նեւրոտիկ երեւույթներ, վարքագծի որոշ խոտորումներ, գիշերային վախեր եւ այլն, անհրաժեշտ է միառժամանակ ձեռնպահ մնալ մարդակերներ, հրեշներ, վամպիրներ եւ այլ նման պերսոնաժներ ունեցող հեքիաթներից: Չեմ կարող չհիշատակել նաեւ մեր որոշ գրողների ճիգերը, երբ բազմաթիվ էջեր են տրամադրում ցեղասպանությանը վերաբերող քստմնելի տեսարանների եւ պատկերների՝ նատուրալիզմի հասնող նկարագրություններին: Նրանց պետք է հիշեցնել, որ գեղարվեստական գրականությունը փաստագրական լուսանկարչություն չէ: Գեղարվեստի նպատակն այլ է...